Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6986

Sthuhu
1865

91(~)
П-33

91(~)
Ղ-33

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՐԼԷՅԻ

ՁՐՈՅՑՆԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Կամսար Օձնեցի

ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽԻՒՔ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻ ՀԱՅՈՑ։

1865

ՑՓԽԻՍ։

91(ՀՀ)
Պ-33

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՊԱՐԼԷՅԻ

ԶՐՈՅՑՆԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Վ ա մ ա ա ր Օ ձ ն ե ց ի

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

1005
Հ 515

ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽԻՒՔ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՑՈՑ։

1865

2004

Ց Փ Խ Ի Ս։

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՖԻԱՃԱԵՆՑ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։

13202

Дозволено Цензурою, 15-го Января 1865 года. Тифлисъ.
Цензоръ И. Кайтмазовъ.

ԻՐԱՆ ԲԱԶՄԱՇԽԱՏ ԲԱՐԵՐԱՐԻՆ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԻ

ԱՆՄՈՌԱՑ ԻՇԽԱՆԻՆ

ՂԱՀՐԱՄԱՆ ԴԱՒԹԵԱՆ ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՑԻՆ

ԳԻՒՐՈՒՄ Է

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ։

ԹԱՐԳՄԱՆՉԻ

ԻՐԱՆ ԲԱՐԵՐԱՐԻՆ

ՍԻՏԱՂՑ ՂՈՒԿԷՄԸ

Ա՛յ, իմ աշակերտական երջանիկ ժամե՛ր-այ, իմ աշակերտական քաղցրիկ օրե՛ր, ընչո՞վ կարող էի առաւել ինձ ձեզանում անմոռաց թողուլ և ձեզ էլ ինձանում, եթէ ո՛չ ձայն տալ ներկայումս ապառնիումը արձագանգ տուողս համար։ Որովհետև դուք էք յաւիտենականութեան անպէս դանձերը, դուք էք երկնային մանրիկ մասերը և ձեզանում են անխոխուում Արարչից մարդկանց բաշխուած ամենայն տուքերը և կատարեալ պարգևները և էլ պատճառով էլ նրանց միայն ձեզանում են մարդիկը կարողանում գնահատել, նրանց պահպանելու ուժ և զօրութիւն տուող, շնորհք և փառաւոր իրաւունք համարել նրանց ի զոյծ դնելու մտաւորական աճելութիւնով, որով և կարողանան յիշատակ թողուլ ներկայումը և առանց ամօթի մնալու մշակ լինել յաւիտենականի առաջին։

Ահա, և ձեզանում, չը նայելով իմ խակութեանը, — չը նայելով իմ աշակերտական դրութեանը, կամեցայ սիրտով և սարտք համարեցի ապատ ժամերս «Պարէյի» թարգմանութեանը նուիրել իմ քաղցրիկ եղբայրների օգտի համար։ Իսկ եթէ, չը կարդացած լինեմ նրա մտքերը դիւ-

ջիմաց կերպով հասկացնել իմ Հայ փոքրիկ եղբայրներին, էդ մասին ներողություն եմ խնդրում Հայ գրագէտներից, որովհետև էս տեղ առաւել պարզ սիրտը և անկեղծ յոյսն ունի մեծ տեղիք, —ձղտումն դէպ'ի կատարելութիւն։ Բայց էս իմ երջանիկ ժամանակներիս և ժամերիս գնահատելու և բեղմնաւորելու. սկզբնապատճառը ո՞վ է եղել, եթէ ոչ Դուք, ով իմ բազմախնամ բարերար, որ Ձեր կեանքը հետ է.ք դրել իմ բարոյք կենաց համար, Ձեր բոլոր ջանքը դրած է.ք դնում իմ մտաւոր յառաջադիմութեան և լուսաւորութեան համար։ Ուրեմն էս դէպ'ի Ձեզ եմ դառնում և իմ աշակերտական օրերիս և ժամերիս մէջից քաղուած մտաւորական վունջը, իբր և երեխայրիք, Ձեզ եմ նուիրում, Ձեզ, իմ ապագայ ժամանակի և քաղցր լուսաւորութեան հոգատար։ Էս իմ աշակերտական ազատ ժամերից քաղած առաջնապտուղը ցանկանում եմ Ձեր անունով լոյս աշխարք տեսնի Հայի փոքրիկ երեխաների համար, որ Ձեզ պէս բարերարին Հայութեան մէջ Հայ որբիկները տեսնելով ինձ հետ միասին ձայնակից եղած. առ հասարակ Ձեզ պէս բարերարին Հայութեանը պարգևող Աստուծոյ փառաւորեն յաւիտեանս յաւիտենից։

Ձեր ՝ Դաւիթ

ԿԱՄՍԱՐ ՏԷՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ՏԷՐ ԴԱՒԹԵԱՆՑ։

Ամերիկայի Պարլէյի զրոյցները Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկէի և Ամերիկայի մասին։

Փոքրիկ աշակերտներին։

Դուք կամենում էք Ամերիկայի Պարլէյի զրոյցները կարդալ Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկէի և Ամերիկայի մասին։

Համբերեցէք. առաջ ես ձեզ կասեմ թէ Պարլէն ո՞վ էր և որտեղ էր բնակվում։

Նա բնակվում էր Ամերիկայումը, որ տեղ շատ կան հիւմի մեզ նման մարդիք, բայց առաջ, բացի Հնդկացիներից ուրիշ բնակիչներ այնտեղ չը կային։ Հնդկացիները խակաղէս մի վայրենի ժողովուրդ են, նրանց մորթուս գոյն է պղնձի նման և նրանց միակ զբաղմունքն է վայրենի գազաններ որսալը։ Այստեղ դուք շատ բաներ պէտք է կարդաք նրանց վերայ։

Եւրոպացիք շատ գեղեցիկ քաղաքներ են շինել Ամերիկայումը, որոնց շարքիցն են. Նիւ-Իորքի, Բոստոն, Վաշինգտոն և ուրիշ շատերը։

Հենց այս Բոստոնումն էր բնակվում մեր բարեկամ Պարլէն մի փոքրիկ խրճիթում. և երբոր Բոստոնի երեխաները

գալիս էին նրա մոտ, նա գրում էր և պարապում էր նրանց հետ իրա գրոցներովը։

Եւ ճանապարհորդութիւն արաւ համարեա թէ աշխարհի բոլոր մասերումը և հէնց այդ պատճառաւ նրա գրոցները շատ հարցասիրական են։

Յանկալով որ դուք էլ կարողանաք լսել նրան, ես թարգմանեցի նրա գրոցները հայերէն։

Յուսամ, իմ սիրելի բարեկամներ, որ նրանք ձեզ մի բաւականութիւն տան և դուք էլ ձեր կողմից աշխատէք բոլորը միտը պահել, ինչ որ այս գրքումը կարդաք, որովհետև Պարէյի պատմածները շատ օգտաւէտ են ձեզ համար և հետաքրքրական։

I.

Պարզեն խօսուն Եւրոպայի վերայ:

Իմ անունս է Գեորգ Գարլէյ: Ես ծեր եմ, ապխտակամաղ, ուժից ընկած, ամէն բան տեսած և ամէն բանում փորձված:

Ես շատ սիրում եմ երեխաները: Նրանք շատ անգամ գալիս են ինձ մօտ, նստում են ինձ հետ և լսում են իմ զրոյցները:

Դուք, իմ սիրելիք, երևի գիտէք, որ մեր երկրագունդը կլոր է ինչպէս մի գնդակ և քաշ է արած լուսնի պէս անուահման տարածութեան մէջ: Եթէ որ դուք կարողանայիք լուսնի վերայ բարձրանալ և այնտեղից մոխիկ տալ երկրագնդին, այնժամանակ դուք կը տեսնէիք այդ. իսկ եթէ աւելի մօտենայիք երկրագնդին և լաւնկատէիք, այն ժամանակ կ'իմանայիք, որ երկրիս մեծ մասը ծածկած է ջրով և մնացածը հող է: Գնդի մէկ կողմումը կը տեսնէիք Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ և Ամերիկա, միւսումը—Հիւսիսային և Հարաւային Ամերիկան:

Դուք գիտէք որ աշխարհագրական քարտէզի վերի կողմը կոչվում է հիւսիս, ներքինը—հարաւ, աջ կողմինը—արևելք, ձախինը—արևմուտք:

Սկսենք Եւրոպայից, որ երկրիս ամէն մասերից շատ

բնակիչ ունի : Սա երբեք անգամ փոքր է Եվրոպայից . բայց հինգ անգամ շատ բնակիչ ունի նրանից :

Եւրոպայումը գտնվում են անթիւ մեծամեծ քաղաքներ , որոնք երևելի են միջի պալատներով , եկեղեցիներով և ուրիշ արժանայիշատակ շինութիւններով : Այստեղ գտնվում են կայսերութիւններ , թագաւորութիւններ և ուրիշ տերութիւններ , որոնց բնակիչները հաքնվում են զանազան ձևով և խօսում են զանազան լեզուով : Անդղիայում , այսինքն մեծ Բրիտանիայի նեղքին մասում , խօսում են անդղերէն : Նրա վերի մասը կոչվում է Շոտլանդիա . այստեղ բնակվում են Շոտլանդացիք , որ ինչպէս և Իրլանդիա կը դզ. բնակիչները . խօսում են անդղերէն :

Յետոյ կ՚յիշենք Գաղղիան , Հոլանդիան , Գերմանիան : Վերջինը բաժանվում է . Ավստրիա , Պրուսիա , Սաքսոնիա և ուրիշ շատ մանրմունր թագաւորութիւններ , որոնց բնակիչները կոչվում են գերմանացիք , որ խօսում են գերմաներէն : Յետոյ ,

Դանէմարք , Շվեդիա և Նորվեգիա , ուր թագաւորում է Համարեա միանման լեզու :

Սրանցից յետոյ կ՚խօսենք . Ռուսաստանի , Լեհաստանի , Ֆինլանդիայի մեծ Դքսութեան , Տաճկաստանի , Յունաստանի , Իտալիայի , Իսպանիայի և Պորտուգալիայի վերայ :

Այն աղգերը , որոնք բնակվում են վերոյիշեալ երկրնե-

բուժը, ունին պանապան լեզու և ամէն մէկը խօսում է իւր ազգային լեզուով:

II.

Եւրոպայի ազգերի կարճառօտ նկարագրութիւն:

Գլխան սատիկ դառնաշունչ և ցուրտ է Ռուսաստանի հիւսիսային մասումը, Շվեդիայում, Նորվեգիայում և Դանէմարքայում: Զմեռվայ ժամանակ այստեղի բնակիչները հագնում են մորթեղէն և անասունների մորթի: Շվեդացիքը խելք են, բայց չափաւոր և ազնիւ:

Ռուսաստանը այնքան մեծ է, որ նրա հիւսիսային մասումը շատ ցուրտ է, իսկ հարաւային մասումը շատ տաք: Ռուսները շատ քաջ են, սիրում են իրանց թագաւորին և հայրենիքը:

Պրուսացիք — պատերազմական և կրթեալ ժողովուրդ են:

Շվէյցարացիքը բնակվում են Սլպեան բարձր լեռներումը: Նրանք պոշվում են պինդ և ամուր կապմուածքով. նոյնպէս և բոլբոքված ու եռանդոտ սիրով, որ ունին նրանք դէպի իրանց հայրենիքը:

Հոլանդիան ընդ հակառակն այնպէս հարթ հաւասար տեղ է, որ ոչ մի բարձրաւանդակութիւն չես տեսնի. նրա ծովային ափերը ծովի մակերևոյթից այնքան ցածր են, որ

լատիներով են ՀԵՐ առաջին աձնում։

Վերման հրաշալի է խաղիայում։ Նրա նախնի բնակիչները կոչվում էին Հռովմայեցիք, Հռովմ քաղաքի անունով, հիմի կոչվում են Իտալացիք։ Սրանք ունին կենդանի երևակայություն, սիրում են բանաստեղծություն, երաժշտություն, նկարչություն. բայց շատ անապաշտ մարդիք են։

Սպանիացիք և Պորտուգալցիք միմեանց շատ նման են, թէև նրանց լեզուն ու սովորությունները փոքր ինչ զանազանություն ունին։

Բոլոր Եվրոպայի ժողովուրդները քրիստոնեայ են, այսինքն հաւատում են Յիսուս Քրիստոսին։ Հինց միայն Տաճիկներն են հեռու մնում իրանց ուսեալ սուտ մարգարէ Մահմեդից և կոչվում են մահմեդականներ։ Տաճիկները ատում են քրիստոնեաներին։ Հաղուստով և կեանքի ուղղությունով ուրիշ Եվրոպացիներից նրանք բոլորովին զանազանվում են և աւելի նման են Ասիացուցը, որովհետև նրանք դուրս են եկել երկրագնդի այդ մասից։

Յոյները, որոնք հին ժամանակներում այնքան երևելի էին, այժմ չնչին և շատ սակաւաթիւ են։ Չնայելով Տաճիկների անզգթությանը և խստությանը, որ նրանց միշտ ճնշել են, Յոյները պահպանել են էլի քրիստոնէական կրօնը և պարծենում են իրանց նախորդներով։

Սոյնպէս զանվում է հիմի Տաճկաստանում 3 միլիոն հայ, որոնք պահել են մինչև այսօր անխախտ իրանց ազ-

գային քրիստոնէական կրօնը, իրանց լեզուն, իրանց սովորութիւնները, հիւրասիրութիւնը և հաւատարմութիւնը:

Վերջին տարիներս Տաճկաստանի հայերը ստացան իրանց համար ազատ ատհմանադրութիւն Կ. Պոլսում:

III.

Պարզեւ ճանապարհորդում է:

Սրանից մի քանի տարի առաջ ես ճանապարհ ընկայ Բօսոռնից Անգլիա գնալու «Վասահ Հերոս» անուանով նաւի վերայ: Նաւապետի անունն էր Փիլիպպոս:

Մենք Ատլանտեան ովկիանոսի վերայ խաղաղութեամբ նաւավարեցինք, բայց յանկարծ մի փոթորիկ վերկացաւ: Պէտք է խոստովանիլ որ ծովը շատ զարհուրելի է փոթորիկի ժամանակ. ալիքը բարձրանում են լեռնանում և իջանում են դաշտանում. նաւը գցում է դէսուդէն: Մեծ շփոթ ընկաւ մեր մէջ. նաւապետը շարանում է ղեկավարները, նաւավարների վերայ, քամին փչում է ասոմիկ, նաւակը ճեղքւում է, ովկիանոսը շառաչում է . . . . : Վերջումը ես ասոմիկ վախեցայ, աւելի երբ տեսայ ատուցների ահագին կտորները, որ կարող էին մեր նաւը կոտոր կոտոր անել, թէ որ նրանց մէջ տեղն ընկնէինք: Գիշերը վրա-

հատաւ և ոչ մէկը մեզանից յոյս չունէր ապրել մինչև հեռաւոր առաւօտ։ Սառաւոտեան ծէգին փոթորիկը հանդարտուեց և առուցեայ լեռները մեր հետքից շատ հեռու մնացին. մառիկ դեռ ևս երևում էին ջարդված նաւի կտորտանքը, որոնց վերայ կանգնած էր մի մարդ։ Նա բարձրացնելով ձեռները դէպի երկինքը սասիկ աղաչում էր և օգնութիւն էր խնդրում. բայց որովհետև ծովը դեռ ալեկոծում էր, մենք մեծ դժուարութեամբ նրան կարողացանք վերցնել մեզ մօտ նաւի վերայ։ Ես շատ սրտանց հոգատարայ նրա համար և նա յետոյ հաւատացնում էր ինձ, թէ՝ իւր ազատվելու. պատճառը ես էի։ Դա մի խաւլացի էր Լիս անունով և զարմանալի մարդ էր. իմ զբոսնելի մէջ էս ալէտք է խօսեմ նրա վերայ։ Ջարդված նաւի մէջ եղած ճանապարհորդները փոթորիկի ժամանակ խնդրվել էին ծովումը ոչ միայն մնացել էր սա. որ այն նաւի նաւապետն էր։

Մենք նաւավարեցինք յառաջ, քամին հանդարտվեց և նաւը այնքան հանդիստ էր որ կարծես տեղից չէր շարժվում։

Սրնգակը շքեղ փայլում էր, սասիկ ալէկոծութիւնը անց էր կացել և կապոյտ ծովը մի մեծ հայելու կերպարանք էր առել։ Հաստատուն ծովի որթեր (тюлень) խաղում էին ծովի մակերևոյթի վերայ. բայց փոքր ինչ հեռու մի քանի կէտ ձկները ջուրը բերանները առած շատրը-

ուանի նման վերև էին բարձրանում։

Ամառը մնացում էի Լս. Ինչքան լաւ է ովկիանոսը խաղաղ ժամանակը բայց ոչքան ահալի է փոթորկի ժամանակ։

Ի վերջոյ փչեց յաջողակ քամի և 40 օրուանը 3000 մղոն անցնելից մենք հասանք Անգլիայի ափերին։

Մարիկ սուէ.ք քարտէզն վերայ և դուք կը տեսնէք Անգլիայի մէջ տեղը մի նեղ և երկար ջրի տարածութիւն, որ կոչվում է Լամանշի ջրանց.ք։ Նաւավարելով մենք գնացինք և մտանք Անգլիայի ամենամեծ Տէմզ անունով գետը, ուր նաւերի մեծ բազմութիւնը գնում դալիս էր։

Երջապէս մենք հասանք Անգլիայի թագաւորանիստ Լօնդոն քաղաքը։

Այն նաւահանգստումը, որտեղ կանգնեց մեր նաւը, այնքան ուրիշ նաւեր կային, որ նրանց հաստատութեան սիւները (1) հեռու տեղից թանձր անտառի նման էին երևում։

IV

Լօնդոնի ակարագրութիւնը։

Լօնդոնի բնակիչները շատ են քան Բօստոնի, Նիւ-Իօրկի, Ֆիլադելֆիի, Բալտիմօրի և Չերլստօնի բնակիչները

(1) Мачты.

Ի միասին, թէ և նրանք բոլորը մեծամեծ քաղաքներ են համարվում Ամերիկայի միացեալ նահանգների մէջ։ Լօնդոնի փողոցներում այնքան ժողովուրդ է մանգալիս, որ շատ անգամ դժուարութեամբ կ'անցկենաս նրանց միջովը։ Մէկ անգամ մի վայրենի ամերիկացի գալիս է Անգլիա որ իմանայ թագաւորանիստ քաղաքի բնակիչներու թիւը։ Նա վերցնում է մի երկար փայտ և սկսում է նշան դնել նրա վերայ ամէն մէկ պատահած մարդոյ համար. բայց վերջապէս դադարում է ու բարկութեամբ վեր է գցում փայտը։

Սուաջին անգամ մենք Լիս Խոպլայու հետ ճանապարհ ընկանք դէպի Լօնդոն, որ մանուորապէս ծանօթ էր նրան։ Նա ինձ ներս տարաւ Սոնիջեմի պալատը, յետոյ Վեսթմինստերի վանքը որ սրանից մի քանի հարիւր տարի առաջ է շինած. նրա մէջ թաղում են երևելի մարդկանց և մեծ շքեղութեամբ թաղարվում են Անգլիացւոց թագաւորները ու թագուհիները։ Այդ տեղից մենք գնացինք միջնաբերդը, որտեղ առաջ արքունարան է եղել և հին ժամանակներում շատ մարդիկ զոհվել են սատիկ տանջանքով։ Այստեղ նմանապէս մենք տեսանք անգլիացւոց թագաւորների թագերը և գայլանները, մարգարիտներով և բրլիանտներով զարդարված։ Ահա ինչ է պատահել այնտեղ մէկ անգամ։ Սրանից շատ առաջ բնակում էր Անգլիայում մի տաներկու տարեկան թագաւոր Էդուարդ անունով իւր շատ ժամիտ Ռիչարդ հօր եղբօր հետ, որի մականունն էր Սա-

պատող (կուլիան)։ Հօրեղբայրը կամեցաւ ինքնապէս թա-
գաւորել. այս նպատակաւ նա բանտարկեց փոքրիկ թագա-
ւորին ու իւր փոքր եղբօրը միջնաբերդումը, հրամայեց որ
նրանց երկուսին այնտեղ սպանեն և ինքը թագաւոր դար-
ձաւ Ռիչարդ III անունով։

Միջնաբերդից մենք 'ի միասին գնացինք գեղեցիկ ան-
տառապատ զբօսարանը, ուր շատ լաւ ժամանակ անցկացրինք։

Երեկոյեան մենք գնացինք թատրոն։ Այստեղ նստելիս
իմ միտքս եկաւ գրպանիս (ջէբ) գիրքը, բայց տեսայ որ չը-
կայ.—ժամացուցիս մանեկայ, նոյնպէս չըկար. համարեա
թէ ինչ ունէի գողացել էին, բայց ո՞վ և ի՞նչպէս,—չը-
գիտեմ։ Երբոր Լօնդոն գնաք զգուշացէք ձեր ժամացուցին
ու փողին, որ չըգողանան։

Այս գիշերին, մութ ու նեղ փողոցով տուն յետ դալու
ժամանակ մենք մի փոքրիկ տան մէջ հառաչանք լսեցինք,
կանգնեցինք լսելու, թխթխկացրինք դուռը բայց ոչ ոք
բաց չ'արեց. այնու ամենայնիւ մենք ներս մտանք և լաց-
տերի գեղնած լուսովը տեսանք մի գծծուած տեղաշորումը
հոգեւորք կին. նրա մօտ կային երկու երեխաներք վեց և եօ-
թը տարեկան. փոքրը քնել էր, բայց մեծը արտասվելով և
բղավելով համբուրում էր իւր մօր առաջը երեսը։ Ես դուրս
թռայ պողոցը, հարևաններին օգնութեան կանչելի, բայց
'ի զուր և երբ յետ դարձայ հիւանդի մօտ, արդէն մե-
ռած գտայ նրան։ Մենք Լիօ խառնայու հետ այնտեղ մը-

նայինք մինչև առաւօտ. մինչև որ բարեսէր մարդիկը վերցրին ելեւմտոցը և բարեկարգեցին մեր թաղումը: Իսկապէս նա մեռաւ քաղցածութիւնից: Ինչպէս զարհուրելի է, որ այդքան ճոխ ու փարթամ քաղաքում, Ինչպէս Լօնդոնն է, կարող է մարդ քաղցածութիւնից մեռնել: Այնտեղ շատ աղքատներ և կարիք ունեցողներ կան:

V.

Վիկտորիայի թերթը:

Դուք լսել էք արդեօք Վիկտորիայի թերթի մասին, որտեղ անցկացնում թաղուհին տարուայ մեծ մասը: Դա մի բարձր պատերով քարից շինած բերդ է, Լօնդոնից քսան մղոն հեռաւորութեան վերայ. նրա մէջ պարտէզ կայ և անթիւ տներ: Ես շատ ցանկացայ այստեղ հանդիպել և հէնց արձակ ժամանակ գտայ թէ չէ. նատեցի կառքը (դիլիժանս) ու գնացի: Անդրէացւոց կառքերի մէջ դրսից էլ նստելատեղ կայ և որովհետև ճանապարհները շատ լաւ էին և օդն էլ խաղաղ էր, ես դրսից նստեցի. շատ բաւականութիւն ստացայ սրանով, աւելի որ մենք սկսեցինք կանոնաւոր տարիքով անցնել: Քաղաքից դուրս մի շքեղ շինութեան մօտով անցկենալիս, ես հարցրի իմ մօտ նստած մարդու. «ո՞նց է այս տունը».—»Լօրդ Գ-ինն է սպասաւորներից նա». — Բայց այս.—ես հարցրի, ցոյց տալով միւսը.—Գերցոգ

Ս·ինն է ։» — Բայց այս — հանելով մի շքեղ տանը։ — «Գրաֆ Գ-ինն է ։» — Ես օտարական եմ, ասեցի նրան, և չեմ հասկանում ինչ կը նշանակի Գրաֆ, Լորդ, Գերցոգ, խնդրեմ, հասկացրէք ինձ։ — Ուրախությամբ — պատասխանեց հարևանս — այս պատուանունները դուք Ամերիկայում չէք գործածում, բայց մենք Անգլիայում Լորդ, Գրաֆ և Գերցոգ անուանում ենք բարձր կարգի մարդկանցը, որոնք համարեա միշտ հարստութեան տէր են։

Երկու ժամում մենք հասանք Վինդզոր. Թագուհին այնտեղ չէր և ինձ թոյլ տուին որ մանեմ պալատը։ Ես տեսայ, որ նրա միջի սենեակները շատ լաւ զարդարուած էին և զեղեցիկ պատկերներով շքեղացրած։

VI.

Անգլիայի թագաւորների վերայ։

Ես մտայ Սուրբ Գէորգայ եկեղեցին, որն որ այս բերդումն է։ Նրա մէջ շատ անգլիացւոց թագաւորներ կան թաղուած։ Այստեղ նմանապէս թաղուած է արքայադուստրը Շարլոտան։ Ահա նրա բարեսրտութեան գծագրութիւնը. մէկ մարդ դատապարտել էին կախաղանի. նրա բարեկամները խնդրեցին թագաւորի աղջկան պաշտպանել դատապարտուածին։ Նա խոստացաւ աշխատել և չոքելով իւր հօր առաջ, ասեց, որ չի վերկենայ, մինչև թագա-

ւորը չը նկէ նրան։ Թագաւորը, հէնց ինքը լինելով շատ բարի, ուրախութեամբ համաձայնվեց։ Այս ժամանակ թագաւորի աղջիկը 13 տարեկան էր։ Վախճանվելուց յետոյ ամէնքը հոգով սրտով ցաւում էին ու էրվում էին նրա համար։

Անգլիայում շատ թագաւորներ են եղել, թէ վատ, թէ լաւ։ Եթէ պատմութիւն կարդաք, այդ ամէնը կ'իմանաք։ Անգլիացոց պատմութիւնը շատ գրաւոր է։ Այս անգամ ես կ'ասեմ թագուհի Մարգարիտի մասին, որ Հենրիկոս VI կինն էր։ Հենրիկոսն էր թոյլ թագաւոր և թշնամիները նրան բանտարկել էին։ Մարգարիտան իրա որդու հետ փախել էր անտառները և այնտեղ երկար ժամանակ թաղ էր կացած։ Մէկ անգամ յարձակվեցաւ նրա վերայ մի աւազակ,—գուք գիտէք, որ աւազակները թափառում են անտառներում, մարդկերանցը թալանում են, և երբեմն սպանում են նրանց,—աւազակը պահանջեց, որ թագուհին տայ իւր բոլոր փողերը։ Թագուհին չը վախեցաւ և յարձակեց նրան թէ ինքն ո՞վ է։ Այս բանը աւազակին յաղթեց, զարմացրուց և նա չոքելով թագուհուառաջ, ներողութիւն խնդրեց նրանից, յետոյ առաջնորդեց նրան անտառից դուրս գալու և հասցրեց մինչև յուսալի ապաստանարանը։

Շատ տարիներից յետո Անգլիայում թագաւորից միւս թագուհին, Մարիամ անունով։ Նա հաւատակից էր

ժողովրդին և հրամայեց, որ փոխեն իրանց հագուստը, և երբ ժողովուրդը չը համաձայնվեց, այն ժամանակ նա երեք հարիւր մարդ և երեխեք այրել տուեց: Գառամանթիանը նրան արիւնահեղ Վարիամ անուանեց:

VII.

Երկրի Անգլիայի մասին:

Գնա դառնալով Լօնդոնից, ես իմացայ, որ մեր նաւը Հոլանդիա է գնում և ես, թէպէտ շատ ցանկութիւն ունէի մնալ Անգլիայում, այնուամենայնիւ հարկադրուած էի հեռանալու:

Անգլիայում էլի ուրիշ շատ մեծամեծ քաղաքներ կան բացի Լօնդոնից, ինչպէս Բիրմինգամը, որտեղ շինում են բազմերներ, դանակներ և ուրիշ բաներ. Մանչեստրը, որտեղ նուրբ բամբակեայ կտաւներ ու չը թեղէն են գործում: Կան և ուրիշ քաղաքներ, բայց ես այն տեղերը չեմ եղել:

Հետաքրքրական է Իրլանդիայում և Շոտլանդիայում լինելը, աւելի Շոտլանդիայում — գեղեցիկ երկիր է, և Շոտլանդացիք — ուշադրութեան արժանի ժողովուրդ են: Լեռնային բնակիչները խօսում են առանձին լեզուով, որ նոր բոլորովին զանազանվում է անգլիերէն լեզուից, և հաւատում են առանձին ազգային շորեր, դաշտերի բնակիչները խօսում են և հաւատվում են ինչպէս Անգլիացիք,

այնպէս որ կարելի է ասել, թէ Շոտլանդիայի բնակիչները երկու զանազան ցեղերից են բաղկացած։ Մտիկ տուէք քարտէզին և դուք իսկապէս կըտեսնէք այս բոլոր տեղերը։ Դուք ինձ չէք հաւատալ, թէ ինչպէս ցանկանում էի այնտեղ լինել, բայց նաւը պատրաստ էր գնալու, ի՞նչ պէտք է անէի։— Ես ու Լիոն բաժնվեցանք. նա գնաց Իտալիա, ես մնայ նաւը. բայց իմ ճանապարհորդութիւնը նկարագրելուց առաջ, խօսենք կրկին անգլիայի մասին։

Անգլիան և Շոտլանդիան 'ի միասին Մեծ—Բրիտանիա են կոչվում։ Մեծ—Բրիտանիայում և Իրլանդիայում 27 միլիոն բնակչից աւելի է։ Այնտեղ շատ քաղաքներ կան, շատ էլ հարուստ մարդիք, բայց և նոյնպէս հազարաւոր աղքատներ։

Մեծ—Բրիտանիայի պատմութիւնը խիստ հարցասիրական է։ Շատ և շատ վաղուց նրա բնակիչները բոլորովին անկիրթ էին, բայց սրանից հազար տարի առաջ նրանք փոքր առ փոքր սկսեցին լուսաւորվել և այժմ Անգլիացիքը —ամենահարուստ, զօրեղ և լուսաւորեալ ազգերից մէկն է. առաւել ևս Անգլիան, որտեղ ծնվել են շատ մարդիկ, երևելի՝ թէ գիտութեանց, թէ արհեստների և թէ լուսաւորութեան մէջ։

VIII.

Պարզէյն Հոլանդիա է գնում:

Առաջուանը բարձրացնելուց յետոյ, մենք Տեմզա գետով գնացինք ցածր և երեկոյեան նրա բերանը հասանք: Թանձր քուքից սասկանում էր դիշերուայ մթութիւնը. ցուրտ քամին արագութեամբ վազեցնում էր մեր նաւը: Յանկարծ մէկ սաստիկ ճայթմունքը և ուժգին հարուածը մեզ բոլորս սարսափեցրեց: Զորս կողմը մութ տուին և տեսանք, որ մեր նաւը հանդիպել է մէկ ուրիշ նաւի, որն որ այս հարուածից խսկոյն մտել էր ծովի տակ, և մենք հազիւ կարողացանք փրկել նաւապետին, նրա կնկան, երկու որդիներից և երկու նաւաստիներին: Ա. Նաւապետը Հոլանդացի էր, Ամստերդամ քաղաքից, որն որ Հոլանդիայի թագաւորանիստ քաղաքն է: Նա խօսում էր անգլիերէն և մեզ պատմեց, որ արդէն մի քանի տարի է որ բնակվում էր այս նաւումը և իւր ընտանիքի հետ մանէր գալի այս նաւով: Յետոյ ես իմացայ, որ Հոլանդացի ծովագնացները նաւերը իրանց տներ են համարում: Այդ օրից յետոյ մենք մտանք Ամստերդամ:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ
Z.U.Kh.Z. ZHOGHOVAKAN ARMENIAN SSR ACADEMY OF SCIENCES LIBRARY
ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
7/XI—1922

IX.

Հոլանդիա

Դուք արդէն գիտէք թէ Ամստերդամը — Հոլանդիայի մայրաքաղաքն է և թէ Հոլանդացիք խօսում են Հոլան-

դերէն. Ես ոչ մի խօսք էլ չը հասկացայ նրանց խօսելուց։ Կ. Նաւապետի հետ գնացինք քաղաքը մանդալու։ Նա ինձ ճանապարհին պատմեց, որ Հոլանդիայում շատ մեծամեծ քաղաքներ կան, ինչպէս. Ամստերդամ, Հարլեմ, Լէյդէն և այլն։ Թագաւորը միշտ բնակվում է Հագա քաղաքում։ Հոլանդիան — հարթ հաւասար երկիր է, ջրանցքներով կտրտած, որոնց վերայ առ հասարակ նաւակներով են մանդալիս։ Այս երկիրն առաջ համարեա թէ ողջ տեղը ջրով էր ծածկված, բայց բնակիչները ամրացրել են ու բարձրացրել են սրա ափերը փոքրիկ բլուրներով և փայտանքներով, որ ջրի առաջը բռնվի։ Շատ անգամ պատահում է, որ ջուրը քանդում է փայտանքները, թափվում է, քարուքանդ է անում բոլոր մերձակայ տեղերը, պատճառում է շատ վնասներ և մինչև անգամ մարդիկ էլ զոհ են ըլում։ Ասում են որ Հոլանդիայում արագիլ անուանած թռչունից շատ կայ. սրանք նման են Հնդկացւոց աքլորներին, միայն գոյնն ունին ապխտակ, թևերը սև, վիզը երկար և երբ ծերանում են և ուժից ընկնում են, ջահիլ արագիլներու թիկունքի վերայ են նստում։ Հոլանդացիք շատ են սիրում սրանց և կարծում են որ եթէ արագիլը մէկ տան վերայ բուն շինի, այն տանը բաղդաւորութիւն կը բերի, այս պատճառաւ արագիլները աներկիւղ տան օճռոքներումը բուներ են շինում իրանց համար։

X.

Պետրոս մեծի վերայ:

Սահարդամ քաղաքում, որ Ամստերդամից հեռու չէ, նաւեր են շինում: Սրանից դար ու կէս առաջ մշակների թուումը մէկ Պետրոս անունով մարդ կար: Ի՞նչ էք կարծում, ո՞վ էր այս Պետրոս անունով մարդը: Գուշակեցէք: Բայց թո՛ղ ես ասեմ. սա էր Ռուսաց կայսր Մեծն Պետրոս: Կարո՞ղ էք ներկայացնել, ինչպէս պէտք է զարմանային այն հասարակ հիւանները (1) երբ իմացան որ նա կայսր է: Նրանք հարց ու փորձ արին, թէ ի՞նչու նա մշակութիւն է անում: Մեծն Պետրոս պատասխանեց. «Իմ տէրու-«թիւնս ընդարձակ է, ժողովուրդս շատ է և ընդունակ, «բայց մենք նաւ շինել չը գիտենք, և ահա ես եկել եմ «ձեզ մօտ որ սովորեմ: Երբ որ հետ կը դառնամ տուն, «այն ժամանակ կը սովորցնեմ հպատակներիս և կը շինեմ «նաւատորմիղ (2):» Այն տունը, որի մէջ բնակվում էր Պետրոս կայսրը Սահարդամ եղած ժամանակ, մինչև այսօրս էլ պահպանվում է:

Եւ իսկապէս, մի քանի տարուց յետոյ նա սովորցրեց իւր հպատակներին նաւ շինելը, և յետոյ շինեց Ռուսաստանի ծովային մայրաքաղաքը — Սանկտ Պետերբուրգ անունը: Այսպէս նա իւր գործքերով այնքան պատիւ ստացաւ, որ պատմութիւնը նրան Մեծն Պետրոս անուանեց:

---

(1) Գուրգալ. (2) Флотъ.

XI.

Պարզեն զնուամբ Կոպենհագենն:

Քանի մի օրից յետոյ մենք ճանապարհ ընկանք դէպի Դանեմարգա և շուտով հասանք նրա մայրաքաղաքը, որի անունն է Կոպենհագէն: Գոնէք այդ քարտէզի վերայ: Երեկոյեան, երբ քաղաքի փողոցներումը զբօսնումէի, տեսայ մարդկերանց մի բազմութիւն, որ մի անզլիերէն խօսող մարդու քաշ էր տալիս: Այս մարդը խնդրում էր որ բաց թողնեն, բայց նրանք չէին հասկանում նրա ասածը: Զարմանքս մեծացաւ, երբ տեսայ որ սա իմ բարեկամ Դ-ն է, որի վերայ ես շատ խօսելու եմ: Ես բազմութեան մէջ ընկայ, աշխատեցի նրան ազատեմ, բայց 'ի զուր: Մենք հարկադրված էինք փախչել, բայց շուտով մեզ հասան ու երկուսիս էլ բռնեցին: Ի զուր ես աշխատեցի անզլիերեն լեզուով բան հասկացնեմ, բայց չը կարողացայ: Այնուհետև, ուր մեզ մի տան բանտարկեցին, ապ. Դ. պատմեց ինձ, որ մէկ պարոնի ժամացոյցը գողացել էին և նրան, գողի տեղ էին ընդունել: Միւս օր Կ. նաւապետը եկաւ մեզ մօտ և նրա միջնորդութեամբ մեզ բաց թողին: Ես երկար ժամանակ չը մնացի Կոպենհագէնում:

Դանեմարգայի հողը նոյնպէս հարթ հաւասար է. այնտեղի բնակիչները երկու միլիոնի են հասնում. այժմեան թագաւորի անունն է Ֆրեդերիկոս VII.

XII.

Պարսից խաղաղութիւնը Թիլսիթի մէջ։

Կարճենք հաղիւեն մի ամիս մնալուց յետոյ մենք նաւա-վարեցինք դէպի Ս. Պետերբուրգ։ Աշխատեցէք քարտէզը վերցնել և հետևել մեզ հետ Բալտիկ ծովումը։ Պ. Դ. ճանապարհ ընկաւ մեզ հետ և ճանապարհին ինձ պատմեց, որ նա Շվեդիայում եղել է, որտեղի զլխաւոր քաղաքն է Ստոկհոլմ։

Շվեդիան բաւական ընդարձակ երկիր է. նա բոլորովին ծածկված է լեռներով, անտառներով և ձորով։ Աւտարակ ժողովուրդը ուժեղ է, առողջ, ազնիւ, բարի, առաջադէպաշտ։ Շվեդիայի բնակիչները մօտ երեք ու կէս միլիոնի կը հասնեն։

Պայման մէկին Շվեդացիք դաշտերումը մեծ կրակ են վառում և սրանով ոչնում են զարնան սկիզբը։

Լաւ է.ք Շվեդացւոց պատերազմական թագաւոր Կարլոս XII-ի մասին։ Նա 15 տարեկան էր որ թագաւոր ասան գահի վերայ նստեց։ Նրա հարևան Դանեմարգայի, Լեհաստանի և Ռուսաստանի իշխողները մտածում էին շահվել նրա ջահելութիւնից և զրկել նրան գահից։ Այս լսելով Կարլոսը արագութեամբ հաւաքեց քիչ թուով քաջ զինուորները, գնաց Դանեմարգա, յաղթեց Դանեմարգացւոց և հար-

կարելց թագաւորին խոստանալ, որ նա նրան էլ թշնամութիւն չի անի։ Ցեռոյ ճանապարհ ընկաւ իւր զօրքովը դէպի Լեհաստան, վեր ձգեց Լեհացւոց թագաւորին գահից, նրա տեղը նստեցրուց ուրիշին և այսպիսի յառաջադիմութեամբ վառհացած և ոգևորած, վճռեց գիմել Ռուսաստանի վերայ. սկզբից բաղդը նրան յաջողեց և Նարվա գետի մօտ Ռուսներին բոլորովին ջարդեց, բայց յետոյ Պալտավա քաղաքի մօտ ինքը ջարդվեցաւ։ Ռուսաց զօրքերը Շվեդացւոց համարեա բոլոր զինուորներին ապանեցին, այնպէս որ ինքն Կարլոս XII ը հազիւ կարողացաւ ազատվել. նա փախաւ Տաճկաստանի սահմանը և խնդրեց Տաճկաց Սուլթանից ապաստանարան։ Տասը ամիս նա այստեղ անգործունէութեան մէջ մնաց։

Ի վերջոյ նա վճռեց որ Շվեդիա վերադառնայ։ Մտիկ տուէք քարտէզի վերայ և դատեցէք, թէ ի՞նչ հեռաւորութիւն էր բաժանում նրան իւր հայրենիքից և ինչպէս դժուար էր նրա համար իրան շրջապատող թշնամիների ձեռքից ազատվել։ Այնուամենայնիւ նա կարողացաւ հասնել մինչև իւր հայրենիքը։ Կարլոս XII ը և այս անյաջողութիւնից յետոյ էլի հանդարտ չը նստեց իւր տեղը. կրկին նա քսան հազար զօրք հաւաքեց և գնաց Նորվեգիայի վերայ, բայց այստեղ նրա պատերազմական դիտաւորութիւնները վերջ ունեցան. մահաւոր ապանիչ գնդակը վերջ դրեց նրա կեանքին Ֆրիդրիխսհամ քաղաքի մօտ։

Երբոր դուք կը մեծանաք խորհուրդ եմ տալիս Կարլոս XII ի պատմութիւնը կարդաք. շատ հետաքրքրական է։ Դուք կը տեսնէք, որ նա շատ քաջ էր, բայց՝ իւր զինուորական փառքը իւր հայրենիքի բաղդաւորութիւնից բարձր էր համարում և շատ մարդիկ այս փառասէր դիտաւորութեան զոհ դարձան։

XIII

Նորվեգիայի վերայ։

Նորվեգիան գտնվում է Եւրոպայի հիւսիսային կողմում. այնտեղ շատ ցուրտ է։ Նորվեգացիք Դանիացւոց լեզուով են խօսում, բայց նրանցից փոքր են լուսաւորված։ Նորվեգիայի ափերի մօտ գտնվում է Ջրադարձ կայ Մալշտրոմ անունով, որի մէջ շատ նաւեր են խորտակվել։

Ղ. Դ. Ինքը Նորվեգիայում չ'էր եղած, բայց Շվեդացիք նրան պատմել էին, որ այնտեղ շատ արջեր կան, թէպէտ այնքան չեն ճանաչում. մէկ անգամ տեղական բնակիչներից մէկը կամենալով գետի վերայ անցնել նստում է նաւակի մէջ, միւնոյն րոպէին մի արջ է լուս ընկնում և գալիս է նստում նաւակի միւս ծայրին փառաւորապէս։ Անցկենալուց յետոյ, արջը դուրս է թռչում և մնում է անտառը։

Նորվեգիայի բնակչաց թիւը մէկ ու կէս միլիոն է հա-

մարվում և նրանք Շվեդացւոց իշխանութեան տակն են։ Գլխաւոր քաղաքն է Բերգեն։ Ձմեռը շատ ցուրտ է լինում և բնակիչները փաթաթվում են մաղերէնների մէջ, իսկ ընդ հակառակը ամառը լինում է սաստիկ շոգ։

XIV

Լապլանդիայի վերայ։

Լապլանդիան դարձեալ և անպտուղ երկիր է և Եւրոպայի ամենահիւսիսային կողմն է գտնվում։ Շատ բնակիչներով քաղաքներ այնտեղ չկան։ Նրա բնակիչները ամառը եղջերուի մորթից շինած վրաններով թափառում են, այսինքն մէկ տեղից միւս տեղ են գնում, իսկ ձմեռը խրճիթներում են բնակվում։ Այնտեղ ձմեռը տևում է մինչև ամիս, գիշերները շատ երկար են և մութը, բայց շատ անգամ լուսաւորվում են հիւսիսային լուսաւորով։

Լապլանդիայում շատ ցուրտ է, այնպէս որ պատմից հաբիւր տարի առաջ Շվեդացւոց զօրքի մի գունդը, որ 700 մարդուց էր բաղկացած, Լապլանդիայի ասրերով անց կենալիս սառեցան բոլորովին։ Սառածներին դուռն գցեցին դրուխթեանց մէջ. մէկին կանգնած, միւսին նստած, երրորդին հոքած։

Դուք շատ անգամ լաց կը լինէք, որ Լապլանդացիք

եղջերուները լծած սանկերով են մանգալիս: Եղջերուն մի խոնարհ կենդանի է և առանց դադարելու 70 վերստից աւելի կարող է վազել:

XV.

Պարզէյն Պետերբուրգում:

Ի վերջոյ մենք Ս. Պետերբուրգ մտանք, որ 1703 թուին Մեծն Պետրոսը հիմնել է: Շատ մեծ և գեղեցիկ քաղաք է: Ռուսաստանը ամենամեծ և զօրեղ թագաւորութիւն է: Նրա բնակիչների թիւը մինչև 70 միլիոնի է հասնում: Հիմա այնտեղ Ալէքսանդր II է թագաւորում: Ռուսները իրանց թագաւորին շատ են սիրում և իրանց հայրենիքի հետ պինդ են կապուած: Նրա գլխաւոր քաղաքներն են Պետերբուրգ, Մոսկուա և ուրիշ շատերը:

Ռուսաց տէրութեան իշխանութեան ներքոյ 560,000-ի չափ հայեր կան, որոնցից շատերը քաջ և աշխատասէր են գտնվել: Ռուսաստանումը համարեա թէ հայոց ազգային ուսումնարաններ չկան: Եղած ուսումնարաններից աւելի նշանաւորներն են. Տփխիսու Ներսիսեան ազգային հոգևոր ուսումնարանը, Նախիջևանի հայոց ուսումնարանը և Մոսկուայի Լազարեանց ճեմարանը արևելեան լեզուաց:

XVI.

Պարոն Պետերբուրգից Պրուսիա է գնում:

Պ. Ֆ. նաւապետը իրա նաւը ծախեց: Ես կարող էի հայրենիքս վերադառնալ մէկնումէկ ամերիկացւոց նաւով, բայց ցանկացայ էլի մնդամ Եւրոպայում Պ. Դ-ի հետ միասին: Մենք նստեցինք նաւը և նաւավարեցինք Բալտիկ ծովով դէպի Գանցիգ, որ Պրուսիայի մէջ է գտնվում: Այս քաղաքը բաւականին մեծ է և հարուստ, բայց մենք այնտեղ շատ չըկացանք և եկանք Պրուսիայի թագաւորանիստ Բերլին քաղաքը: Մենք ճանապարհորդութիւն անում էինք երբեմն ոտով և երբեմն կառքերով: Այդ ժամանակ դեռ երկաթէ ճանապարհներ չըկային:

Պրուսիայի գլխաւոր քաղաքն է Բերլին քաղաքը, որ շատ գեղեցիկ տեսք ունի: Թագաւորը բնակվում է փոխխակի երբեմն Բերլինում և երբեմն Պոտսդամում: Պրուսիայում թագաւորից 18 դարում Ֆրիդերիկոս թագաւորը, որ Մեծ էր կոչվում: Դրացի տէրութիւնները նրա հետ շատ անգամ պատերազմ արին, բայց նա վերջապէս ամենին յաղթեց և իւր տէրութիւնը ընդարձակեց: Առհասարակ թագաւորները իրանց գործերին իրանք չեն առաջնորդում պատերազմ գնալու, բայց Ֆրեդերիկոսը սիրում էր

այս և պատերազմական դժուարութիւններն ու վտանգները նա բաժանում էր զօրքի հետ։ Համանապէս նա շատ բարեսիրտ և ողորմած թագաւոր էր. ահա նրա ողորմածութեան մի օրինակը։

Նա մէկ անգամ նստած էր իրա առանձնատեղիում, մի քանի անգամ զանգակ տուեց. բայց ոչ ոք չ'երևեցաւ։ Նա վերկացաւ տեղից, բացարաւ միւս սենեակի դուռը և տեսաւ որ օրապահ պաժը աթոռի վերայ խոր քնի մէջ է։ Թագաւորը կամեցաւ նրան զարթեցնել, բայց նկատելով նրա գրպանից դուրս պրծած թղթի ծայրը, կամաց հանեց այն թուղթը և կարդաց։ Այս թուղթը պաժի մօր նամակն էր, որի մէջ մայրը շնորհակալութիւն էր անում իւր որդուն ուղարկած ոռճկի համար և գրում էր. «թէ Աստուած կ'օգնէ նրան, որ այդպիսի բարի սիրտ ունի»։ Թագաւորը յետ դարձաւ իւր առանձնասենեակը, վերցրուց ոսկով լիքը քսակը և զգուշութեամբ նամակի հետ միասին քնած օրապահի գրպանը դրեց։ Յետոյ կրկին թագաւորը զանգակ խփեց, այնպէս որ պաժը զարթեցաւ և ներս մտաւ։ «Դու խո՞ն էիր քնած». ասեց թագաւորը։ Պաժը կամենում էր ներողութիւն խնդրել, բայց շփոթված նա ձեռքը գրպանը դրեց, որ գտաւ այն քսակը։ Նա հանեց դողդողալով գրպանից քսակը, դեղնեց, աչքը գցեց թագաւորի վերայ և ջնջարձակալով մի խօսք արտասանել, արտասուքով աչքերը լցվեց։ — Այդ ի՞նչ է պատահել քեզ։ հարց ու փորձ արաւ

թագաւորը։— «Ա՛խ, տէր իմ, նա պատասխանեց նրա առաջը չոքելով, «կամենում են ինձ կորցնել, ես չըզիտեմ, թէ ի՞նչպէս են այս փողերը իմ ձեռքը դրել։— Սի՛րելի» ասեց թագաւորը, շատ անգամ Աստուած երդալմը մեզ համար բաղդաւորութիւն է ուղարկում։ Այդ փողերը քո մօրն ուղարկէ, իմ կողմից նրան բարև ասա՛ և դրէ որ ես ձեզ երկուսիդ համար հոգս կը քաշեմ»։ Այսպէս, թագաւորը ոչ թէ միայն ջնջեցց, որ նա, լինելով ծառայ, քնել էր իւր օրապահութեան ժամանակ, այլ և վարձատրեց նրան մօրը սիրելու համար։ Կարող է՞ք ձեզ երևակայել խեղճ երիտասարդի ուրախութիւնը։

Ֆրեդերիկոս թագաւորը շատ լաւ լաւ գրքեր գրեց և հրանից յետոյ թողեց ժողովրդեան մէջ մի անմոռանալի յիշատակ, և պատմութեան մէջ յարգելի և առաջին տեղն է բռնում։

XVII.

Պարզեցի վէճեանցում։

Մենք մի շաբաթ ժամանակ Բերլինումը կացանք և նրանից յետոյ ճանապարհ ընկանք դէպի Աւստրիայի թագաւորանիստ Վէննա քաղաքը։ Շուտով մեր այնտեղ գնալուց յետոյ, մենք զբօսնում էինք Վէննայի մօտիկ անտառումը և պատահեցանք մի ոսկի, որ էր վայրենի վարազ։ Երբ-

որ վայրենի վարազը վեր ընկաւ գետնին ատակած, որ-
սորդները հոշակեցին փող փչելով և հաւաքվեցան 'ի միա-
սին ապանած կենդանու մօտ. մենք էլ նմանապէս խառն-
վեցանք ուրիշների հետ: Ի՞նչպէս մենք զարմացանք. երբ-
որ իմացանք, որ վարազի ապանող որսորդը Աւստրիացւոց
Թագաւորն էր: Միւս որսորդները նրա թիկնապահներն էին:

XVIII.

Պարսկի գրոյցները Աստրիայի վերայ:

Աստրիան շատ ընդարձակ տէրութիւն է. թէպէտ օտար
ազգերից և երկիրներից է բաղկանում: Նմանապէս նրանում
մեծամեծ քաղաքներ շատ կան, բայց ամենքի մեծն զըրոյց
անելը շատ երկար կը քաշի: Վէնեցիք մեծ արհեստով
պատի և ծոցի ահագին նաւեր են շինում, նոյնպէս և երե-
խանց խաղալիքներ: Մենք տեսանք նրանցից մի ամենահե-
տաքրքիրը: Երևակայեցէք ձեզ մի խաղալիք, որ ներկայաց-
նում է ամբողջ գիւղ. նրա գործող անձինքն էին երկու
գիւյմ (дюймъ) մեծութեամբ. մի քանիները նրանցից մեն
էին գալիս, միւսները կառքով էին շրջում, մի քանիները
մշակութիւն էին անում կամ պար էին գալիս. մի գունդ
գրքեր էլ չորսի կողմովը մեն էր գալիս, իսկ փոքրիկ թըմբ-

կահարը սասոիկ խփում էր թմբկին։ Լսե՞լ էք դուք արդեօք մեքենայական մարդու մասին, որ խաղում է սրով. այն էլ Աւստրիայումն են շինում։

Տեսե՞լ էք դուք բոշաներ։ Նրանք երեսի գունով փոքր ինչ նման են Ամերիկայի վայրենի մարդկանցը և համարեա թէ նրանք բոլոր Եւրոպայումը կը պատահեն։ Նրանք մեծ բազմութեամբ աւելի Աւստրիայումն են գտնվում։ Նրանք չեն բնակվում գիւղերումը, ինչպէս միւս մարդիկ, բայց թափառում են իրանց ընտանիքի հետ 'ի միասին մէկ տեղից միւս տեղ։ Բոշաները ձեռքով խստակ չեն և խաբեփայ են։ Նրանք պարապում են փալ բացանելով և ապտանի բաները գուշակելով։

Մէկ անգամ մենք գնում էինք մի մեծ անտառով և մոլորվեցանք նրանում։ Մենք տեսանք մէկ գիւղումը կրակ, իսկոյն գնացինք այնտեղ և գտանք քսան բոշայ։

Մենք նրանցից խնդրեցինք որ իրիկնահաց մեզ տան և ցանկացանք նրանց հետ մինչև առաւօտ մնալու։ Նրանք ոչ մի բան չը խնայեցին և մեզ թողին գիշերելու։ Գիշերը մի թեթև աղաղակը ինձ զարթեցրեց. ես իսկոյն նկատեցի, որ բոշաներից մէկը քնած Դ-ի ջիբիցը հանում է նրա քիսան։ Ես վեր թռայ տեղից, բայց բոշան իսկոյն փախաւ։ Դ. վերկացաւ, ձեռքը ջիբը տարաւ, բայց, աւաղ, քիսան քաղաստն ոսկով էլ չը կար։ Առաւօտը ես յանդիմանեցի, որ մեզանից բաներ էին գողացել։ Բոշաները միայն ծիծաղե-

ցան, ասելով, որ եթէ մենք կամեցել էինք առաջուց մեր փողերը մեզ հետ պահել, պէտք էր որ պահել էինք Ներանց առնելի հետուս և մի ուրիշ տեղ էինք վեր նկել։

Ասորիայի Իշխանութեան տակի հայերը համարեա թէ անհետացել են։ Ներանք Սելվայում, Մաճառստանում, Բանատում ցրված հայերը, բուն բնակիչների հետ խառնվելով կորցրել են իրանց կրօնն ու լեզուն։ Միայն Սուզվայ քաղաքի հայերն են մինչև այսօր իրանց լեզուն ու կրօնը անխախտ պահել։

XIX.

Պարսէի զրոյցները Տաճկաստանի վերայ։

Մենք Տաճկաստանումը չենք էլել, որովհետև Տաճիկները մի անկիրթ ժողովուրդ են և այնտեղ ճանապարհորդութիւնը բոլորովին անվտանգ չէր լինի։ Այնու ամենայնիւ ես զրոյց կ'անեմ այդ մասի վերայ, ինչքան կարող եմ։ Տաճիկները թեպէտ Աստուծուն հաւատում են, բայց Ներանք քրիստոնեայ չեն, մահմետական են։ Ներանց մարգարէ Մահմետը Ներանց համար մի զուրան անունով գիրք է շինել։ Այս գիրքումը ինչեր կայ, բոլորը խաբեբայութիւն է. բայց Տաճիկները կարծում են որ բոլորը ճշմարտութիւն է։ Մահմետը պատմում է, որ նա մէկ անգամ գիշերը երկնքումն է

էլել և այնտեղ տեսել է շատ պրանչելիքներ: Եւ Տաճիկները հաւատում են այսպիսի տարօրէն բաներին: Տաճկաստանի գլխաւոր մայրաքաղաքն է Կոստանդնուպոլիս. նա շատ ընդարձակ ու մեծ քաղաք է: Տաճիկների թագաւորները Սուլթան են կոչվում: Տաճիկները միրուքը չեն վերանում, սատիկ շատ ծխախոտ են քաշում երկար ճիպոտով, բան մեծի մասին գետնի վերայ են նստում չոքած կամ ծալապատիկ և ոչ թէ աթոռների կամ գահերի վերայ:

Տաճկաստանից դէպի հարաւ գտնվում է Յունաստանը, որի բնակիչները հաւատում են Յիսուս Քրիստոսին: Տաճիկները ատում են Քրիստոնեաներին և սատիկ խստութեամբ էին վարվում Յունաց հետ, որոնք երկար ժամանակ նրանց լծի տակը ճնշվում էին:

Յունաստանը շատ հետաքրքրական երկիր է ոչ միայն նրանով որ տեղի դրութիւնը գեղեցիկ է, այլ և նրանով, որ հին ժամանակներումը նրա բնակիչները երևելի և փառաւոր են էլել: Եթէ դուք մի ժամանակ Յունաստանումը կը լինիք, այն ժամանակ կը տեսնէք քաղաքների և հին շինութիւնների մնացորդները, որոնք սրանից 3000 տարի առաջ են շինուած:

Աթէնքի մօտ, որ հին Յունաստանի նշանաւոր քաղաքն է, կը տեսնէք մէկ հոյակապ շինութեան փլատակները, որ կոչվում էր Պարթենոն կամ Միներվայի տաճար: Յունաստանի պատմութիւնը շատ հարցասիրական է: Հին ժամա-

նամենրումը Պարսից Քսերքսէս թագաւորը եկաւ ամենիւ զօրքերով Յունաստանը նուաճելու. նրա հետ հինգ միլիոն պինուոր կային: Կարծես թէ ոչնչ է մեծ վտանգ հասնէր, բայց Յունաց քաջ զեղուսպետ Լեոնիդասը 300 Յոյների հետ լեռների միջի կիրճը բռնեց, որ Թերմոպիլ էր կոչվում, ա-ռուծի պէս պաշտպանեց և շատ Պարսիկներ ապանեց: Զը նայելով Լեոնիդասի քաջութեանը, նա իւր 300 մարդով մեռաւ այնտեղում փառաւոր մահով:

Քսերքսեսը կարմացած մնաց Յոյների քաջութեամբը և համոզված լինելով, թէ նրանց յաղթելը անկարելի է, յետ դարձաւ իւր հայրենիքը:

Շատ և շատ հետաքրքրութեան արժանի պատմութիւններ կան Յունաստանի մասին, բայց ես նրանցից միայնակ մէկը կը պատմեմ:

Այնտեղ բնակվում էին երկու ընկերները Դամոն և Պիֆիոն: Սիրակուզացուց Դիոնեսիոս բռնակալը հրամայել էր Դամոնին բանտը դնել և մահի մատնել: Դամոնը խնդրեց նրան որ թողնէ հայրենիքը տեսնելու, որ վերջին հրաժարականը տայ իւր կնոջը և որդկերանցը, խոստանալով որ անպատճառ վերադառնայ ապանման օրը: Թագաւորը չէր համաձայնում. այն ժամանակ Պիֆիոնը սկսեց աղաչել թագաւորին, որ մինչև իւր ընկեր Դամոնը վերադառնայ՝ իրան բանտը քցեն նրա փոխանակ: Այսպէսի պայմանով Դամոնին արձակեցին: Տանը նա իւր կնոջը յայտնեց, որ նրանից

յառխուան հրաժարվում է : Կինը և երեխաքը արտասուեցին, ընկան նրա պարանոցովը և ասեցին, որ ոչ մի ժամանակ նրանցից չեն հեռանալ : «Չէ» պատասխանեց նա «ես պէտք է վերադառնամ, թէ չէ իմ տերը ընկերիս կը սպանեն:»

Զը նայելով, որ նա քանի կարող էր շատ դմէր տեղը հասնել, նշանուած օրը նրանից ուելի շատ հատ և թաղուորը հրամայեց սպանել Ֆիֆիանին : Դրան արդէն բերել էին գլխատման տեղը և հաղարաւոր մարդիկ հաւաքվեցան այս հանդէսը տեսնելու, երբ մէկը յանկարծ վազելով և շատ հոգնած աղաղակեց. «Թողէք ինձ. թողէք»: Ժողովուրդը տեղ տուեց և Դամոնը գրկելով Ֆիֆիանին, ասեց. «ես վերադարձայ և դու արդէն ազատվեցար : Կայսը զարմացած այս մեծահոգի վարմունքի վերայ նրանց Դամոնին, ցանկանալով որ ուրիշներն էլ հետևին այս տեսակ օրինակին:

Յետոյ Հռովմայեցիք յաղթեցին Յոյներին և շատ թողացրին նրանց : Այս բանը պատահեցաւ երկու հազար տարի առաջ :

Քանի մի դարերից յետոյ Ցաճիկները նուաճեցին Յունաստանին և նրա բնակիչներին ծառայացրին իրանց : Մէ քանի տարի առաջ Յոյները ոտքի կանգնեցին իրանց հալածող և չարչարող բռնակալների դէմ, մեծ քաջութեամբ պատերազմեցան և վերջապէս ազատութեան հասան :

Ցաճիկաց տերութեան իշխանութեան ներքոյ է մեծ և փոքր Հայաստանի մեծ մասը 3,100,000 հայերով : Այսուհետև

հայերը պարապում են վաճառականութիւնով և արուեստներով, այնպէս որ համարեա Ասիական Տաճկաստանի բոլոր առուտուրը նրանց ձեռքովն է կատարվում: Այս տէրութեան մէջ մօտ հարիւր հայոց ուսումնարաններ կան: Գ. պօլսումը մօտ երեսուն դպրոցներ կան տղայոց համար և մօտ տասնուհինգ հատ աղջկերանց համար, որոնք ազգի ծախսովն են կառավարվում: Զմիւռնայի հայոց ուսումնարանը Տաճկաստանի բոլոր ուսումնարաններից հռչակաւոր և մեծ է: Բացի սրանից Էրզրում, Վան, Տրապիզոն, Դիարբեկիր, Եդեսիայ և էլ ուրիշ շատ քաղաքներում կան մէկ մէկ կամ երկու երկու հայոց դպրոցներ աղջկերանց և տղերանց համար:

XX.

Պարզէ՛ն ճանապարհն է ընկնում դէպի Իտալիա:

Մի ամիս վերնայում կենալուց յետոյ մենք ճանապարհ ընկանք դէպի Իտալիա և մինչև Հռոմ հասնելը մեզ մի յիշատակելու արժանի բան չը պատահեց:

Իտալիայի մայրաքաղաքն է Հռոմը. այնտեղ թագաւորում է պապը: Սուրբ Պետրոսի եկեղեցին իւր մեծութեամբ և ճարտարապետութեամբ գերազանցվում է համարեա աշխարհիս բոլոր եկեղեցիներից: Հռոմումը և Իտալիայի ու-

ըիշ տեղերում գտնվում են հին շինությունների աւերակները: Որանից երկու հազար տարի առաջ Հռովմայեցիք ամենահզոր ազգ էին աշխարհում: Կոլիզէ անուանած շինությունը, որ այն ժամանակն է շինած, մինչև այժմ կենում է: Նա շինած է ամֆիտէատրի ձևով և կարող է իր մէջ տեղաւորել մի քանի հազար մարդիկ:

Հռովմայեցիք շատ հարուստ էին, հզօր և պատերազմական, նրանք համարեա աշխարհիս այն ժամանակ յայտնի եղած երկիրները բոլորը նուաճել էին: Ոչինչ չէր կարող նրանց քաղաքների և պալատների գեղեցկությանը և հոյակապությանը հասնել:

Իտալիայումը էլի մի հնէապոլ անունով քաղաք կայ: Նրա տեղի դրությունը այնքան գեղեցիկ է, որ նկարագրելը դժուար է և անկարելի:

Այս քաղաքի մօտերքը գտնվում է Վեզուվ հրաբուղխ լեառը, որի գագաթումը գտնվում է մեծ ծակ, նրանից դուրս են թափում ծուխ, կրակ և հալած քարեր կամ նիւթեր. և սրանց դուրս թափելու ժամանակ այնպիսի ձայն է բարձրանում որ ամբերի որոտալից սասիկ է լինում:

1800 տարի առաջ այս լեառը դուրս թափեց մոխրի և հալած քարերի կոշտեր և զանգուածներ, որոնք թափվելով վերևից ներքև ճանապարհի վերայ եղած գիւղերը ծածկեցին բոլորովին: Պոմպէայ քաղաքը բոլորովին ծածկվեց հալած քարերի կոշտերով և զանգուածներով: Մեր ժամա-

նամբերում այնտեղ փորելով գտան մի քանի փողոցներ և տներ, որոնք ամբողջ մնացած էին։ Այս տների մէջ գտնված կարասիքը ամբողջ պահպանվել էին։

Էլ աւելի ոչինչ չեմ ասելու ձեզ հին Հռովմայեցւոց մասին. ժամանակով դուք ինքներդ կը կարդաք այս ժողովրդի պատմութիւնը։ 1000 տարուց էլ աւելի կը լինի, որ նա իւր զօրութիւնը և փառքը կորցրեց և իրանից յետոյ ոչինչ չը թողեց բացի պատմութիւնները և առաջուայ նրա զօրութիւն վկայող աւերակները։ Խոալիայի այժմեան բնակիչները շատ քիչ նմանութիւն ունին իրանց հին նախնիների հետ։

XXI.

Պարզեն գնում է Շվեյցարիայ։

Հռովմումը ես հրաժարվեցայ դ-ից։ Նա ճանապարհ ընկաւ դէպի Նէապոլ, որ այն տեղից Ամերիկա գնայ, բայց ես դիմեցի դէպի Շվեյցարիա։ Այդ ժամանակ Խոալացիքը խաղող էին ժողովել, որից գինի են նրանք քամում։

Վերջապէս ես հասայ գեղեցիկ Ալպեան լեռներին, որոնց գագաթները պատած են միշտ ձնով։ Այս լեռների վերայ ինձ մի զարմանալի բան պատահեց։

Մէկ անգամ արեգակի մայր մտնելու ժամանակ գնում էի ես անտառով, յանկարծ ինձ շրջապատեցին տաններկու

գինեւորած մարդիկ։ Նրանք խօսում էին իտալերէն և ես յայտնի բան է ոչինչ չը հասկացայ։ Նրանք ինձ բռնեցին և քաշ տալով տարան հին բերդի աւերակների մօտ։ Մէկ մութ ճանապարհով նրանք տարան ինձ մեծ և խաւար ստորերկրեայ սենեակը։ Այստեղ ես արդէն իմացայ, որ նը-բանք ուզում են ինձանից խլել փողս, ունեցած բաներս և շատ կարելի է միտք ունին սպանել ինձ։ Բայց մի քանի ժամանակից յետոյ մէկ մարդ մտաւ սենեակը, որին, կարծես թէ, մէկ տեղ տեսել եմ։ Սա էր աւազակների գլխաւորը։ Նա մոխիկ տուեց ինձ և զարմացած յետ քաշվեց. և տեսայ որ սա այն Լիօ անունով մարդն է, որին մենք ալէկոծութեան ժամանակ ազատեցինք։

Լիօն, աւազակ դառնալով ապերախտ չը դարձաւ. յայտնելով իւր ընկերներին, որ նա պարտական է ինձ իւր կեանքի ազատութեամբը, նա միւս օր առաւօտ հէնց ինքը դուրս բերեց այնտեղից ճանապարհ, ցանկացաւ ինձ բարի ճանապարհ և հրաժարվեց ինձանից։ Ես ցանկանում էի հետայնել նրան իւր այն կեանքի ուղղութիւնից, բայց 'ի զուր։

Շուտով ես հասայ Բերն քաղաքը։

Շվէյցարացիք բնակվում են լեռներում. Նրանք մի ազնիւ, բարեհոգի և աշխատասէր ժողովուրդ են։ Շվէյցարիայի գլխաւոր քաղաքներն են Բերն, Լոզան և Ժենեվա։ Թագաւոր չը կայ այնտեղ, որովհետև Շվէյցարիան հանրապետութիւն է։

Շվեյցարացիք միշտ սիրել են ազատութիւն, բայց որա-նից շատ առաջ նրանք ընկան Ավստրիայի իշխանութեան տակ։ Վիլհելմ—Տելը և շվեյցերացւոց բազմութիւնը վրձ-ռեցին իրանցից վերցնել այդ ծանր լուծը։ Ավստրիացւոց գեսլեր նահանգապետը, կոպիտ տանելով այս մտադրու-թիւնից, հրամայեց, որ մի փայտի ծերին գդակ ցից անեն և տախտակ ժողովրդին նրան երկրպագութիւն տալու։ Վիլ-հելմ—Տելին, որ չը կամեցաւ կատարել այս հրամանը, գցեցին բանտը։ Այս ժամանակին գեսլերը իմացաւ, որ Տել-ը նետաձիգ բանտացնել յաւ գիտէ և հրամայեց նրան, որ խփէ նետով այն խնձորին, որնոր նրա որդու գլխի վերայ կը դնեն։

Տելը սկզբից հրաժարվեց, վախենալով, որ իւր որդու կեանքը վտանգի մէջ գայ։ բայց երբ գեսլերը յայտնեց, որ եթէ Տելը այդ բանը կ'անէ, կ'ազատվի, այն ժամանակը հայրը վճռեց և այնպէս բաղդաւոր էր, որ խփեց խնձորին, որտան գլխին չը դիպնելով։ Գեսլերը մի քանի ժամանակից յետոյ անցնում էր մէկ լճով, որի վերայ վերկացաւ զար-հուրելի փոթորիկ և նահանգապետը վախելով վտանգից, հրամայեց Տելին, որ գտնվում էր ճանապարհորդների մէջ և նաւավարութեան արուեստով յայտնի էր, որ նաւավա-րէր։ Տելը շուտով մօտեցաւ ափին, դուրս թռաւ նաւից և թաքկացաւ ժայռերի մէջ։ Կանչելով Շվէյցարացւոց, նա գնուրվեցաւ Գեսլերի դէմ և իւր ձեռքովը նրան ապա-

նեց։ Ս. յն ժամանակ Եվէիցարացիք քշեցին Ս. Վարիացուց
և այսպէս Տէլլը ազատեց իւր Հայրենիքը թշնամեաց ձեռքից։

XXII.

Պարէյի զրոյցներէն Գաղղիայի մասին։

Եվէիցարիայեցը ես զիմեցի զէպ՝ի Գաղղիայ, և երեք շաբ-
թից յետոյ փարիզ մտայ, որ շատ բազմամարդ, հոյակապ և կա-
րելի է ասել ամենատարած, հարուստ և ամենանորաձև քա-
ղաքն է ամբողջ Եւրոպայումը։ Նրա շրջակայքերը չեմ կա-
րող մոռանալ բարեսեթիլ Եղեսեան դաշտը։ Գաղղիայի թա-
գաւորի բնակարանը շատ ազնիւ մեծ է, ես շրջապատուած է
գեղեցիկ այգիներով, որոնց միջումը զբօսնում են ժողովը-
դեան բազմաթիւները։ Գաղղիան առհասարակ ամենագեղե-
ցիկ տեղաթիւն է, և գաղղիացիք ամենաքաջասրտագոյն, խե-
լօք, քաջ, ուրախ և վարմունքի մեջը մի սիրելի ժողովուրդ
են։ Փարիզի մէջ բաւական Հայոց հին ձեռագրներ են գտնվում
բաւական Հայեր կան, ունին Հայոց տպարան և
հենց այս տեղ է մեր Հայոց Լեռն թագաւորի գերեզ-

մանը. որը երկար ժամանակ գաղղիայումը մնալուց յետոյ 1393 մեռաւ և Կեղխարհնեաց վանքումը թաղուեցաւ։ Մի ընդհանրական յեղափոխութիւն պրպտեկաւ գաղղիայումը անցեալ դարի վերջերին և գաղղիացիք իրանց թագաւոր Լուդովիկոս տասնուվեց երրորդին գահիցը վերցին. յեղափոխիչները շփոթութիւնով թագաւորական պալատը մտան, բռնեցին հենց թագաւորին իրան, նստացրին նրան բանտումը և վերջապէս նրան և անբաղդ թագուհուն 'ի մահ դատապարտեցին։ Ամեն տեղ արիւն հեղութիւն էր։— ժողովուրդը և բոլոր տէրութիւնը կարծես ոչնչացան։— Բայց ահա երևեցաւ հանճարաւոր Նապոլեոն բոնապարտ զօրավարը. որ Մինչերկրական ծովի միջի Կորսիկայ կղզումն էր ծնուած։

Նա սկզբից գաղղիացւոց ծառայութեան թնդանօթաց հարիւրապետ էր, յետոյ շուտով ժեներալական աստիճանին հասաւ. և լինելով իրան ծնունդենիցը 21 տարեկան, տարաւ գաղղիացւոց բանակը Խաալիա և այն երկիրը տիրեց։

Շատ շուտով, մի քանի պատերազմական մեծագործութիւններից և քաղաքական ծառայութիւններից յետոյ, Նապոլեոնը, հասնելով տէրութեան ամենաբարձր աստիճանին, հրաւիրուեցաւ սկզբումը հիւպատոսութեան կամ կօնսուլութեան, բայց յետոյ կայսերութեան ժառանգական իրաւունքներով, կառուցց քաղաքական յեղափոխութիւններ, նուաճեց համարեա բոլոր հարաւն տէրութիւն-

ներին և Եւրոպայի հզօր կայսրներից մէկը դարձաւ, իսկ Գաղղիան փոքրիկ թագաւորութիւնից փոխարկուեց ընդարձակ կայսրութիւն։ — Հզօր կայսրները Նապոլէօնի կամքից կախումն ունեցան։ Բոլոր աշխարհը պարմացաւ և զարհուրեցաւ նրանից, և նա հարգած փառքով և յաջաջադիմութիւններով, արդէն մտածեց, որ նրա բախտաւորութեանը վերջ չի լինիլ։

Այսու ամենայնիւ ինչպէս մարդ նա մոլորվեցաւ։ Իրան փառատէր դիտաւորութիւնները կատարելու համար նա ձեռք գցեց մի արշաւանք 1812 թուականի Ռուսաստանի վերայ, բայց այդ արշաւանքը խղճալի հետևանք ունեցաւ, նրա մեծ բանակը համարեա բոլորը ոչնչացաւ։ — Եւրոպայի միւս ժողովուրդները իմանալով տէրութեան ծայրագոյն Նապոլէօն իշխանի վտանգը և Ռուսաց զօրութիւնը և կարողութիւնը, միաւորվեցին յուսինի հետ և գնացին նրա դէմ։ —

Նապոլէօնը շատ քաջութեամբ պաշտպանվեցաւ, էլ շատ երևելի յաղթութիւններ արաւ, բայց յետոյ հարկադրուեցաւ տեղի տալ։ — Սկզբից նա բարի հաճութեամբ հեռացաւ Էլբայ կղզու վերայ որը Միջերկրական ծովումն է գտնվում, քիչ ժամանակ այնտեղ լինելուց յետոյ նա երևեցաւ Գաղղիայի ափերումը և կրկին ժողովից քաջ զօրականներ։ — Այսու ամենայնիւ բախտը նրան միանգամայն հեռացրեց և բաց թողեց, նա պարտաւորուած էր Գաղղիայիցը փախչել և անձնատուր էլաւ Անգղիացւոց

մեծահոգութեանը, որոնք միւս կայսրների հետ 'ի միասին վճռեցին զրկել նրան իրան իշխանութիւնից, նուաճածներից և իւր բոլոր օգուտներից, ուղարկել նրան տուրը Հեղինէի կղզին, որը Ամերիկայի արևմտեան ափերի դէմուդէմ Ատլանտիան ովկիանոսումն է գտնվում: Այս անբախտ աքսորանաց միջոցումը Նապոլէոնը վախճանեցաւ 1821 թվումը. որին թեպէտ ամենքը թողեցին, բայց չմոռացան: Նապոլէոնը անսովոր հանճարի տէր էր և մի հռչակաւոր և լուսափայլ ոգու և բնութեան մարդ:—Վիներով ամենամեծ զօրավար և տիեզերակալ, նա իրանով ցոյց տուեց անխոհեմութեան և չափազանց փառասիրութեան զարհուրելի օրինակ:—Զնայելով յանդուգն ճակատագրին, որ ամէն մի քայլում այս մեծ մարդուն հետևից չէր հեռանում նա թողեց իրանից յետոյ այնքան փառք և հասարակական զմայլեցուցիչ բարեկամութիւն և սէր ժողովրդի մէջ, որ նորագոյն ժամանակներումը, գաղղիայի մէջը կատարելով էլի զանազան յեղափոխութիւններ, Բուրբոններին աթոռից վերդցեցին որոնք Նապոլեոն առաջնից վեր ընկնելուց յետոյ թագաւորում էին գաղղիայումը, և կրկին Նապոլեոն առաջնի եղբօր որդի Լուդվիգ—Նապոլեոնին բարձրացրին գահի վերայ, որ այժմեան իշխողն է և գաղղիայի թագաւորը և որը կարճ միջոցումը արդէն կարողացաւ եւրոպացւոց քաղաքականացեալ ժողովրդների գլուխը գտանել իւր հայրենիքը:—Նա փարիզումը երկու ամիս կենալուց յետոյ

ճանապարհ ընկայ դէպ 'ի ծովափնեայ գաւը քաղաքը, ուր նաւելով ուշինգտոն նաւը նաւավարեցինք դէպի Ս.Մերիկայ:

Այդ նաւումը ես պատահեցի իմ հին ծանօթին, որը Խապանիա և Պօրտուգալիա տեսանելու էր գնացել:

Զեզ հետ զրոյց կանեմ, ինչ որ այդ երկրների վերայ ես իմ ծանօթիցը խնդայ:

XIV.

Խապանիայի եւ Պօրտուգալիայի մասին:

Խապանիայի գլխաւոր քաղաքը Մադրիտ կոչվում: Խապանացիները ազնիւ են, հպարտ և վրէժխնդիր, այսինքն ոչ թէ միայն չեն ներում զրկողութեանը, բայց չարութեան փոխարէն չարութիւն են հատուցանում:

Ծխախոտ քաշելը նրանց մէջ ընդհանրական է և ամէնքն էլ գործեն ածում. մի ճանապարհորդ այնպէս է պատմում թէ Խապանիայումը մարդկերանց բերանիցը շատ ծուխ է դուրս գալիս, քան թէ նրանց տների վառարաններիցը:—

Խապանացւոց մեծ զուարճութիւնը կայանում է եզների կռիւների մէջը: Լիսբօնը Պօրտուգալիայի թագաւորանիստ քաղաքն է:

Պօրտուգալացիք ըստ մեծի մասին Խապանիացւոց ներքին են:

Այդ կողմումը կլիման բարեզարդված է, պտղով առատ և լեռն է:

Այդ տեղից ուրիշ տեղեր գինի խաղող և նարինջ են տանում:

1755 թուումը զարհուրելի երկրաշարժութիւն էլաւ Լիսբոնումը, որը բոլոր տների հիմքը շարժեց և ամբողջ քաղաքները քանդեց:

Քաղաքի մեծ մասը ոչնչացաւ և հարիւրաւոր մարդիկներ կորան:

XXV.

Պարոնի Ամերիկայ յետ դառնալը:

Պօրտուգալեայիցը ես ճանապարհ ընկայ դէպի Ամերիկա և վերջապէս Բօստոն հասայ. հայրական հողի ափը ես շատով վազեցի և ցնծութիւնով գրկեցի իմ ծնողներին և ծանօթներին:

Իմ ճանապարհորդութիւնը շարունակվեց կէս տարի. ես համարեա մոն եկայ բոլոր Եւրոպա, բայց, խոստովանվում եմ, ինձ համար ոչ մի տեղ այնպէս լաւ չէր, ինչպէս տունը, որովհետև ամենայն մարդ, ըստ բնական զգացողութեան, յարգում է իւր հայրենիքը և նրան գերապանց և լաւ է համարում աշխարհիս միւս երկրներից:

Կարծեմ ես ձեզ բոլորը պատմեցի ինչոր կարողացայ Եւրոպայի գլխաւոր երկրների վերայ. և յուսամ, որ ձեզ չ'ձանձրացրին իմ զրոյցները։

Այժմ ձեզ հետ կ'խօսեմ աշխարհի միւս մասերի մասին, Ասիայի, Աֆրիկէի և իմ հայրենի Ամերիկայի մասին։

Ս. ՍԻՍՍ.

I.

Ամերիկացի Փարքի զրոյցները Սասրացի մասին:

Սասրացուն տեսայ ես առաջին անգամ Վարդ և Կոկորիլեանների, և նրանցից կ'սկսեմ իմ զրոյցները: Վարդը մի վայրենի, անդութ և արիւնահեղ կենդանի է. նա կատաղի նման է, բայց ահագին մեծութեամբ: Կոկորիլեանը շատ այլանդակ է, բառախանի մեծ պոչ ունի և բոլորը ծածկուած է կոշտ մաղով: Նա գետերումն է բնակվում և սատակիկ արագութեամբ ջրի տակն է մտնում, բայց հողի վերայ շատ դժուարութեամբ է սողում:

Մէկ անգամ նաւը ծովի վերայ շողում էր. այդ նաւի դիւաւորը, մտիկանալով մի գետի բերանը, մտածեց նոր ջուր բերելու համար մի քանի նաւավարներ ուղարկել, որովհետև ծովինը աղի է և նրան խմելը անկարելի բան է:

Նրանցից մէկը գետի երկայնութեամբը գնաց, որ ափե-

ը նրան յափշտակեցին և զարմացրին իրանց չքնաղ դաշտավայրերովը։

Ցաք էր ժամանակը. Նաւավարը նաւից հանդարտելու համար խոսի վերայ գետի մօտ։ Յանկարծակի լսելի էլաւ նրան ջրի միջումը մի թեթև զալմաղալ։ Թափանցիկ ալիքների միջումը նա տեսաւ ահագին Կոկորդիլոս։ Կատաղի գազանը, թռուցիկ էր, թէ իրան աչքերով նրան կլանում էր։ Նաւավարը այսու ամենայնիւ շտապեց փախչել ապաստեղու համար և մի քանի ժամից յետոյ ակնառես վկայ դարձաւ Կոկորդիլոսի և Վագրի իրար հետ ունեցած կատաղի կռուին։ Վագրը մէկ ծուլ լինելով իսկոյն Կոկորդիլոսի դէմ կանգնեց։ Կոկորդիլոսը քաշ տալով Վագրին գետի մէջը նրանք կամ ջրի տակն էին անում կամ կրկին նրա մակերևոյթի վերայ երևում էին։ Ջուրը ներկուեց նրանց արիւնովը։ Դաշտաած լինելով Վագրը այս կռուի ժամանակը կրկին անգամ երևեցաւ և միւս անգամ կատաղութեամբ մռնչեց և անդունդը խորասուզուց։ Այս ժամանակը բոլորը հանդարտուեց և ամենքն էլ վերջ էլաւ։ Նաւավարը իսկոյն չոքեց և գոհացաւ Աստուածանից իրան զարմանալի ազատութեան համար։ Յետ դառնալով իւր ընկերների մօտ, նա իւր բոլոր տեսածը նրանց պատմեց։ Յայտնի բան է նրա պատմութիւնը մեծ զարմանքով լսուեցաւ։

Երրոպայում ոչ Վագր և ոչ Կոկորդիլոս չի գտնվում։

Միւս վայրենի կենդանիների կարգից ես միտս եմ բե-

րում վայրենի խոզը (կենձվարաղ):

Իմ ծանօթներից մէկը Հնդկաստան ճանապարհորդելով, սիրում էր օրինակել նրա էքնաղ կերպարանքը: Նա մէկ անգամ նկարում էր որ և էցէ մի տեսք և յանկարծ մի զալմաղալ ընց. դառնալով միւս կողմը, որ տեղից այդ աղաղակը լսուեց, նա տեսաւ բարձր ղամիշների մէջը այդ կատաղի կենդանիներից մէկին, որ պատրաստ էր նրա վերայ յարձակվել. նրա բախտից մօտը մի որսի հրացան կար, նա գցեց և կնճին ապանեց:

II.

Պարսէյի զրոյցներդ Ասիայի երկրների ժողովրդների մասին:

Դուք արդէն գիտէք, որ երկրագունդը կօղ ձև ունի: Ասիան նրա արևելեան կողմումն է գտնվում:—Վերցրէք խնձորը, ցցեցէք նրա մէջը մի քորոց, յետոյ նրան շուռ տուէք միւս կողմը և ցցեցէք միւս քորոցը: Նրանք հակառակ տեղը կ'բռնին: Հենց այդպէս էլ երկրագնդի վերայ Ասիան և Ամերիկան միմեանց հակառակ տեղն են բռնում:

Երկրիս բոլոր մասերից Ասիան ամենաընդարձակ, ամենահետաքրքրական և ամենաերևելին է. նա—մարդկային ազգի օրրանն է, և երկրիս ամենաշատ բնակիչ ունեցող մասն է:

Ասիայումն էին բնակվում առաջին մարդն Ադամ և Եւան, նոյնպէս Մովսէսը, Դաւիթը, Սողոմոնը և հենց ինքը մեր փրկիչ Յիսուս Քրիստոսը։

Եկէք այժմ մոտիկ տուէք քարտեսին։ Ահա ցուրտ և դատարկ երկիր Սիբիրը, գտնվում է հիւսիսումը, որ այժմ հետզհետէ սկսում է վերանորոգուիլ և կենդանանալ։

Սիբիրցը դէպ՝ի հարաւ գտնվում է Չինացւոց տէրութիւնը, որ բաղկանում է Չինաստանցիը՝, որ տեղից չայ և մետաքսեղէն ապրանքներ են դուրս տանում, և Չինական թաթարստանցիը։ Թաթարները թափառական, այսինքն մէկ տեղից միւս տեղ գնացող և չադրներումը կենող մի ժողովուրդ են։ Նրանք շատ լաւ են ձիաներով մանգալիս, սիրում են որս անել, պատերազմական մարդութիւն և արհամարհում են նրանց, որոնք բնակվում են միշտ հենց միևնոյն տեղը. նրանց գլխաւոր զբաղմունքն—որս անելն է։

Իսկապէս Չինաստանումը չափազանց մոտիկ մոտիկ են բնակուած ժողովուրդները և ամէն կողմերումը ջրանցքներ են շինած, որոնց միջնորդութեամբը շատ նաւակներով դուրս են տանում ողջ տէրութեան մէջը ժողովրդեան ամէն գլխաւոր և պիտանի բաները։ Չինաստանցիը դէպ՝ի արևելք մի քանի կղզիներ են գտնվում, որոնք բաղկացնում են Ճապոնացւոց տէրութիւնը։

Նրանցից ամենամեծը Նիպոն է կոչվում։ Առաջ բոլո-

րովին արգելած էր Եւրոպացւոց այդ տեղ գնալ. բայց մի քանի ժամանակից յետոյ Անգղիացւոց, Գաղղիացւոց և Ռուսաց նշանակեալ դաշնադրութեամբ և պայմաններով թոյլ էր տուած գնալ։

Զինաստանից դէպ'ի հարաւ դուք կ'տեսնէք մի ընդարձակ հողի տարածութիւն, որը տարածվում է մինչ'ի ծովը։

Սիամ—Արևելեան Հնդկաստաննէ և նրա ամենագլխաւոր բնակիչները Բիրմանացիք են։ Նրանք փղերով են մանդալիս, ինչպէս որ մենք ձիաներով։ Ամենահարաւային գլխումը մի նեղ հողի տարածութիւն է գտնվում, որը Մալակայ թերակղզի է ասվում։ Նրա բնակիչները վայրենի են և խաստաբարոյ։ Այնտեղ շատ վագրեր և կոկորդիլոսներ են գտնվում։

Դէպ'ի արևմուտք էլ կայ մի մեծ թերակղզի, որ Հնդկաստան է ասվում։ Նա ըստ մեծի մասին Անգղիացւոց է պատկանում։

Բելուջիստանը շատ վայրենի օրդաներ ունի, որոնք ըստ մեծի մասին աւազակութեամբ են պարապում։

Աւղանստանը Բելուջիստանից դէպ'ի հիւսիս է գտնվում, որի բնակիչները պատերազմական են և սիրում են որս անել։

Աւղանստանից դէպ'ի արևմուտք գտնվում է Պարսկաստանը, Պարսիկները սիրում են բանաստեղծութիւն և ձիաներ։

Դէպ'ի հիւսիս գտնվում է լեռնոտ կողմն որը ինքնա-

գլուխ թաթարստանէ ասվում: Նրա բնակիչները սատիկ աւազակ են:

Դրանից դէպ՝ի արևմուտք մի մեծ լիճէ գտնվում, կասպից ծով անուանով, բայց աւելի այն կողմը դէպ՝ի արևմուտ Կովկասեան լեռներն են գտնվում: Նրա բնակիչները զանազանվում են և դերազանցվում են գեղեցկութեամբ, առաւել ևս Հայերը և Վրացիները:

Կովկասեան երկիրներից դէպ՝ի հարաւ Ասիական Տաճկաստանէ գտնվում:

Արաբիան դրանից էլ աւելի դէպ՝ի հարաւ է գտնվում: Արաբները թափառական, վրաններում բնակող մի ժողովուրդ են. նրանց գլխաւոր զբաղմունքը անասնապահութիւնն է: Նրանք շատ ուխտաներ և ձիաներ ունեն, այս հեռինը գովաբանվում է գեղեցկութիւնով, արագ փախչելով և կազմուածքի ամրութիւնով: Ուղտաների կաթը այս տեղաբնակ ժողովրդների գլխաւոր կերակուրն է: Արաբները իրանց վրանները, ուղտաներով մէկ տեղից միւս տեղ են տանում: Նրանք երբ որ և ինչ մի տեղ կանգնում են. այն ժամանակը իսկոյն այդ վրանները վեր են թողում, և այդ ժամանակը կարծես թէ աւազուտ և ամայի անապատի մէջ տեղը մի ամբողջ գիւղ է շինած:

Այն ամէն բաները ինչ որ դուք կարդացել էք Արաբացան դրուածքներումը, լաւ մեծի մասին Արաբիայումը և Ասիական Տաճկաստանումն է կատարուել:

Սահա Ասիայի բաժանմունքը և նրա միջի գլխաւոր բնակուող ժողովրդների անունները: Նրանք Եւրոպի պոյնավ այնպէս ապիտակ չեն ինչպէս Եւրոպացիք· բայց այնպէս էլ սև չեն ինչպէս խափշիկները: Ճապոնիայումը, Հայաստանումը և Պարսկաստանումը կանայքը համարեա այնպէս ապիտակ են ինչպէս Եւրոպայումը:

Ասիացիներից շատ քչերն են քրիստոսի կրօնը դաւանում:

III.

Չինաստանի եւ կոգիների մասին, որոնք Ասիայի արեւելա---հարաւային եւ գունիում:

Չինաստան գնալու համար ես նաւավարեցի Հնդկաց ովկիանոսովը և յանկարծ տեսայ ծովի վերայ մի կղզի, որը ծածկուած էր սրածայր սև լեռներով: Հեռուից նրա տեսքը սովորականից դուրս վայրենի էր և բնական: Ասում են թէ առաջ այն լեռները հրաբուխ են էլել, բայց այժմ էլ այն տեղ շատ անգամ երկրաշարժութիւն է լինում: Ասիայից դէպ'ի արևելա—հարաւ Զունդ կղզիներն են գտնվում. նրանցից մի քանիսները շատ մեծ են: Այդ տեղումը շատ և շատ ընկոյզ, փլփիլ, մեխակ և քաղցու-

կան։ Մենք ձախայ և Սումատրայ կղզիները մեն եկանք։ Վերջապէս մտանք Զինական ծովը, ուր և տեսանք ուրիշ շատ կղզիներ էլ։ Դրանցից մէկի վերայ է գտնվում Մական քաղաքը, որը Պորտուգալացիք են շինել. նա առաջ երևելի և շատ նշանաւոր էր, քան թէ ներկայումս. երբ մենք հասանք մի գետի բերանը, այն ժամանակը նաւավարեցինք նրա վերայ դէպ՝ի վեր։

Նրա ափերը այդու նման էին, դաշտերը գեղեցիկ մշակած էին, հովիտները, լեռների ցածր տեղերը և հենց լեռներն անգամ վարած՝ են և ցանած, որոնք տալիս են ցորեն, բրինձ, զանազան պտուղներ և ուրիշ բոյսեր։ Գետի վերայ երևեցան շատ նաւակներ զանազան մեծութեամբ և որոնք բոլորովին մերերի նման չէին։ Դրանց անկարելի էր համարել, մի քանիսը տեղնաւորը կանգնած էին, կամ կամաց նաւավարում էին, բայց միւսները ալիքների մէջը թռչկոտում էին, ինչպէս օդումը թռչունները։ Իսկապէս տեսարանը գեղեցիկ էր և պերճ։

Սկզբից այդ ամէնը ես երազ էի կարծում։ Տները դրանց նման չէին, որոնց ես տեսել եմ առաջուց. հողի մշակութիւնը, բոյսերը ծառերը, անսովոր շինած նաւակները, հենց մարդիկն էլ, նրանց երեսի գոյնը և հագուստը, — ամէնը ինձ համար մի նոր բան էր։

Ամէն մի օտարականի համար մէկ խօսքով ուրիշ հողի վերայ ոչինչ գրաւական բան չկայ։ Ես ուրախու-

թեամբ նաւի վերին հարկումը կանգնեցի, ինձ վերայ նայում էին իմ շրջապատողները, և յանկարծ մի բարձր աղաղակ լսեցի. մօտիկ նաւակներից, յետոյ ճայթուց և լացի ձայն։ Այնպէս էր երևում թէ, մերնաւը մի ուրիշ նաւակ կործանեց երեք մարդու և երկու կանանց հետ'ի միասին։ Այսու ամենայնիւ, զոհանալով Աստուածանից, ոչ ոք չվնասուեց, բոլորը ապատուած էին։

Մենք վամպոյումը մնացինք, որը Կանտոնից տասնաւերեք մղոն հեռու է, որովհետև առաջ օտարական նաւերին չէին թողնում աւելի դէնը գնալ։ Նաւի վերայ դարսած ապրանքները նաւակներով տարան Կանտոն, բայց նրանց փոխարէնը բերին այնպիսի նաւակներով տեղական վաճառականական ապրանքները։

IV.

Կանտոնի նկարագրութիւնը։

Ես էլ նմանապէս նաւակով Կանտոն գնացի։ Այդ քաղաքը շատ համեմատութիւններումը աշխարհիս ամենաբնաւել քաղաքներից մէկն է։

Նա համարեա քառակուսի է, ամուր պատով շրջապատուած։ Փողոցները երկար են, ուղիղ քարած են, բայց միւսները նաև կամարներով ծածկած են։ Նրան շատ իս-

տակ են պահպանում։ Խանութները թանկագին և գեղեցիկ ապրանքներով լիքն են։ Տները միայարկ են և ազատ տալ շինուած։ Քուչի վերայ լուսամուտ չկայ, ժողովուրդը միշտ շատ են, մանաւանդ պատկարակ մանածողները (1) որովհետև Զինաստանումը կառք չկայ. և բոլոր ծանրութիւնը մարդիկ են կրում։ Հարուստ մարդկերանցը և կանանցը շարժուն աթոռով են մեն ածում։ Շարժուն աթոռ մանածողները կարճ շորեր են հագնում, նրանց ձեռքերը, առները և գլուխները բաց են. նրանց մազերը գեղեցկութեան համար հիւսած են։

Կանոնումը վաճառականութիւնը շատ առաջ է գնացած։ Աշխարհիս ամենայն կողմերից հաւաքուած հազարաւոր օտարականաց նաւեր Կանտոնումը ժողովում են։ Նրանց կայմերը մեծ անտառի են նմանում։ Այստեղ ամենայնիւ Զինաստանցիք քիչ կարիք ունեն ուրիշ կողմերի ձեռագործներնի և գիւտերին։ Նրանց սեպհական երկիրը այնպէս պտղատու է և իրանքէլ այնպէս հմուտ և հնարագէտ են, որ իրանց հարկաւոր բաները բոլորը իրանք ունին։ Օտարական նաւերը բերում են Կանտոն ուրիշ բաների հետ 'ի միասին օպիում և էլի ուրիշ առարկաներ, բայց Զինաստանցիք, որոնք փողով յափշտակուած են, բոլոր սէրութեան ապ-

(1) Պատկարակ մի տեսակ թախտրուանէ, որ մեն են ածում էաւքի փոխարէն մարդկերանցը այս տեղ այնտեղ տանելու։

բանքները բերում են Կանտոն. Հայ, յաղճապակ, աբրեշում, սադաֆ (перламутръ) շաքար և ուրիշները: Այդ բոլորը բերում են նաւակներով Կանտոն, բոլոր տէրութեան մէջը տարածած ջրանցքներովը: Շատ բարձած նաւակներ անդադար նաւավարում են Կանտոնի գետովը, որը մօտ երեք հարիւր մղոն ամենապտղաւատ և գեղեցիկ մշակած երկրովը անց է կենում:

Օտարականները ըստ մեծի մասին արուարձաններում են բնակվում, որոնք այնքան ընդարձակ են, որ ամէն մէկը նրանցից ինքն ըստ ինքեան բաղկացնում է մի երևելի քաղաք:

Կանտոնիցը երեք մղոն հեռու կայ մի տեղ Ֆոջական քաղաք անունով, որը բաղկանում է շատ բիւրաւոր նաւակներից, որոնք կանգնած են գետի վերայ մէկը միւսի մօտ և ձևակերպում են ճանապարհներ կամ քուչաներ: Նրա բնակիչները ուրիշ տներ չունին և նրանց արգելած է ափերում տարածուիլ: Ամէն մի նաւակի վերայ մի ընտանիք է բնակվում: Կանտոնի մօտ Գլուման շատ առատ ջարար է, երկիրը տալիս է կենաց ամէն պիտոյքը:

Ամէն տարի Զինաստանիցը դուրս է տանվում 100 միլիոն դրամանից աւելի հայ:

XV.

Չինաստանի, Չինացոց կայսեր, Պեկինի եւ Ղանկինի վերայ։

Չինացւոց կամ երկնային կայսերութիւնը ողջ աշխարհումը մի ամենաընդարձակ տէրութիւն է և բնակիչներով լքցուած։ Չինաստանումը կլիման ամենազեղեցիկ է, հողը պտղատու է, ամէն կողմերը գետերով ջրվում են և մեծամեծ լեռներով և հովիտներով լքցուած է։

Օտարականաց համար ամենահարկաւոր քաղաքը Չինաստանումը, ինչպէս որ մենք արդէն ասել ենք, Կանտոնն է, որովհետև նրանք միայն նրա հետ յաղորդակցութիւն ունէին մինչև նոր ժամանակներս։

Եւրոպացիներից շատ քչերն են էլէլ տէրութեան մէջը որովհետև հրաման չ'կար այնտեղ ճանապարհորդելու։ Նոր տեղեկութիւններին նայելով, Չինացւոց կայսերութեան բնակիչների թիւը 400 միլիոնի է հասնում։ Չինացիք ինչպէս ասում են նրանք մինչև 5,000 քաղաք ունեն, նրանց զօրքը մի միլիոնից շատէ, բայց նրա կարգաւորութիւնը համեմատելով Եւրոպացւոց հետ բոլորովին նման չ'է։

Ամէն տեղ երկիրը գեղեցիկ կերպիւ մշակած է։ Ամենադժուարակոխ լեռները պտղատու դաշտներ են դարձրել,

և նրանց ջրսի կողմերը պատեր են կանգնացրած, որ հողը չը փուլ գայ։ Զրհանով վերև հանած ջուրը, ոռոգում է արտերը և օգնում է հողի պտղաբերութեանը։

Ես արդէն ասացի, որ Չինաստանի ամէն կողմերը ջրանցքներ է տարած, նրանցից ամենամեծը կայսերական է կոչւում և շարունակվում է Պեկինից մինչև Կանտոն։ Թէ և այդ քաղաքների միջև ծովը հեռաւորութիւնը 1600 մղոնից աւելի է ձգվում։

Չինաստանի հիւսիսային սահմանումը մի մեծ պատ կա շինած, թշնամիների արշաւանքից տերութիւնը պահպանելու համար։ Նա մարդկային ձեռաց ամենամեծ ստեղծագործութիւնն է և Չինացւոց զօրութիւնը և համբերութիւնը պարզապէս ցոյց է տալիս։ Այդ պատը ձգվում է հազար հինգ հարիւր մղոն երկայնութեամբ, նա անց է կենում հովիտներով, և լեռներով, նա բարձրութեամբ հասնում է մինչև 30 ոտը և այնպէս լայնէ, որ նրա վերայ կարող են մի քանի ձիաւոր մարդիք մի կարգով մանգալ։

Պեկին քաղաքումն է բնակվում կայսրը։ Այդ քաղաքը քառանկիւնի է և մեծ պատով շրջապատած, քուչաները աղէղ են և նրանցից մեծը մինչև երեք մղոն երկայնութիւն ունի։ Բոլոր քաղաքը բազմամարդ է, բայց այս է թուելի, որ նուազ է իրական սեռի թիւը։

Պեկինի սեպհական բնակիչները 2300,000 են բայց և նրա շրջակայքներինը մօտ 15 միլիոն։ Համարեա թէ

ղժուար է հաւատալ որ այսքան մարդիք են բնակվում մի քաղաքի մէջ։ Բայց Զինացւոց շատ տեղ չէ հարկաւոր։ Բազմաթիւ ընտանիքը մի ամենանեղ տարածութեան մէջ է բնակվում։ Զինացւոց ամեն մի տունը մի սաժեն բարձրութեան պատով է շրջապատուած։

Նանկինը նոյնպէս մի ընդարձակ քաղաք է։ Նրան շրջապատող պատը 16 մղոն է։ Այսեղ շատ աբրեշումի գործարաններ կան։ Բամբակի գործարանը Նանկին քաղաքի անուանից Նանկայէ կոչվում։

Նրա մէջը գտնվում է ամենահետաքրքրական բուրջը որի բարձրութիւնը մօտ 200 ոտ է։ Նա ունի յարկ ունի 800 աստիճան բարձրութեամբ։ Ամեն մի յարկի քնջումը շատ զանազանները կան քաշարած, որոնք իրանց շարժուելովը քաղցր ձայն են հանում։

VI.

Զինացւոց վերայ։

Այժմեան թագաւորին Խիեն-Ֆունգին կոչում։ Նա միշտ Պեկուումն է բնակվում։ Նրա իշխանութիւնը սահմանափակած չէ։ Նա կարողէ իւր հպատակներից ամեն մէկին կեանքից և կայքից զրկել։ Զինացւոց կայսրը երկնքի որդի և տէր երկրի է կոչվում։ Կայսրի շրջապատող մարդիքը, որոնք ուղեկից են լինում նրան, չափազանց շատ

են, նրա աղգականները, իշխանները, և նրա հպատակող պայազատները աւելի են բազմապատկում այդ փարթամութիւնը և աղքունեաց շքեղութիւնը։ Նրա դրաւոր կամ թէ բերանացի հրամանների առաջը, չոքում են նրա հպատակները և մի քանի անգամ երկրպագում են։

Զինաստանցիք քրիստոնեայ չեն և դաւանում են իրանց ուսեալ հին փիլիսոփայ Կոնֆուկիոսի հաւատը։

Ժողովուրդը երկրպագում են այն Աստուծոյն, որը Ֆօէ կոչվում։ Զինական տաճարները լեցն են կռքերի պատկերներով, որոնց մեծ նշանակութիւն են ընծայում։ Զինաստանցիք առ հասարակ սիրում են փառաւոր հանդիսներ, առ հասարակ ըստ մեծի մասին անկիրթ են և անապաշտ, այնպէս որ հասարակ ժողովուրդը միշտ կախում ունի ամեն մէկ անհատից, որոնք պաշտօնեայ են սրբազան պաշտամունքներին։ Նրանց կանայքը թօնղեր են կոչվում իսկ ուսեալները Մանդարիներ։

Հնդկական ովկիանոսի կղզիներումը և Զինացւոց կայսերութեան ուրիշ մասերումն այսու ամենայնիւ ուրիշ դիւղեր կան, որոնց միջումը Անդղիացիք և ուրիշ Եւրոպայի քարոզիչները կարողացել են քրիստոնէութիւն մտցնել։ Պէտք է յուսալ, որ ժամանակով, քրիստոնէական կրօնը այնտեղ կըտարածուի շատ և աւելի շատ։ Քրիստոնէական հովիւը դրուածքը առաջին անգամ Անդղիացւոց հովիւ Մորրիսօնը թարգմանեց Զինացւոց լեզու, որը Զինաստանում.

շատ երկար ժամանակ բնակվում էր։ Տիկին վիլսոնը, էլի Անգղիացի կին է, այնտեղ աղջկերանց համար շատ ուսումնարաններ է շինել։

Այդ ուսումնարանները և մինչև այժմ շատ տեղերում Անգղիացւոց տիկինների հաշուով պահպանում են։ Չինաստանցիք հասակով Եւրոպացիներից փոքր են, նրանց երեսի գոյնը դեղին է, հաստութիւնը նրանք մի գեղեցիկ բան են համարում։ Երևելի տիկինները առհասարակ շատ կարճ ոտներ ունեն, այնպէս որ նրանք հասակաւոր չեն։ Նրանց սովորաբէս սեղմում են սատիկ։ Չինացւոց կանայքը դժուարութեամբ են մանգալիս և նրանց ոտները այլանդակ են։ բայց Չինացւոց այս դուրեկան է։

Չինացւոց կայսրը իւր ընտանեաց հետ'ի միասին նախապատուութեան համար հաքնում է դեղին շորեր, որը ուրիշները իրաւունք չունին հաքնելու։ Ժողովուրդներն էլ սովորաբէս հաքնում են կապոյտ կամ սև, բայց սգալու ժամանակը սպիտակ։ Չինացւոց շորերի ձևը ոչ մի ժամանակ չի փոխվում։

Չինացւոց բնութիւնը բոլորովին հասարական չէ, և շատ քիչ են լուսաւորուած։ Կանայքը արդեանքի և գերութեան մէջ են։ Բայց'ի սրանից առհասարակ Չինաստանցիք, իշխաններից սկսած մինչև յետին աղքատը, բոլորը ստախօս են։ Նրանց խօսքերին չ'ի կարելի հաւատալ, թէ և յայտնի բան է կեղծ և բացառութիւններ։

VII.

Թաթարստանի եւ Թաթարների վերայ։

Զինաստանից դէպ՝ի հիւսիս և արևմուտ, այսինքն Ասիայի մէջ տեղը, Մեծ Թաթարստանն է գտնվում, որ բաւականին բարձրավանդակ և համարեա ամենայն կողմերից լեառներով շրջապատած մի երկիր է։ Բոլոր նրա տարածութիւնը Թափառական օրդաներ են բնակվում, որոնք առհասարակ Թաթարներ են կոչվում, բայց մի քանի տեղ, Մանչուրներ, Դաւրեաններ, Մօնղոլներ և Ղալմուխներ։

Թաթարները երկիրը չեն մշակում և շատ քիչ են տունկերով կերակրվում, բայց գործ են դնում ձիաներ, ոչխարներ և ամենայն վայրենի ոսներ։ Կաթը, իւղ, պանիր, նրանք միշտ շատ ունեն։ Ամենից շատ նրանք խնամում են ձիու կաթը, որից շինում են խմելիք Կումիս անունով։ Նրանք խրճիթներում կամ այլերումն են բնակվում։

Նրանք շատ լաւ գեղեցիկ ձիաններ ունեն և բոլոր վերոյիշեալ ժողովուրդները շատ ճարտար ձի յեծնողներ են։ Նրանց սովորական զէնքն է մզրախը երկաթեայ ծայրով և նրան բանացնում են այնպէս լաւ, յաջողակ և ուժգին, որ նաև ամենամեծ տարածութեան մէջ նշան դրած մարդուն կամ կենդանուն խփում են։ Աղեղնաձգութիւնը Թաթարները

կատարելութեան են հասցրել. նրանք չափազանց սիրում են որորդութիւն, ձիու վերայ նստած զանազան կենդանիների վերայ թռանք են գցում։

Նրանց ձիաների չափազանց փախուստը արժանի է յիշել — և նրանց մարդկերանց ձիարշաւանքը նշանաւոր է։

Թաթարները համարեա թէ բոլորը Մահմեդի դաւանութիւնից են։ Երբոր մի թաթար մեռնում է, այն ժամանակը նրա հետ թաղում են նրա լաւ ձին և նրա բոլորուանեցածներից ամենաթանկագիները. այդ մտքով են անում, որ այդ բոլորը մեռածին կ՚հարկաւորուին այն աշխարհումը։

Թաթարները, սիրում են պատերազմ և բնակվելով անտառում երկրում շատ անգամ մօտիկ հարևան երկրների վերայ արշաւանք են արել։ Հենց Զինաստանը ինքը անդամ այդ ձևով թաթարաց տէրութեան իշխանութեան տակն ընկաւ։ Զինայուց մեծ և յայտնի պատը թաթարների արշաւանքից պաշտպանելու համար է շինած։

Շատ անգամ թաթարները Հնդկաստանն էլ են քարուքանդ արել և այն տեղից անթիւ հարստութիւն թալանել։

VIII.

Տիբեթի վերայ։

Նոյնպէս Զինաստանին է պատկանում Տիբեթը, այս երկիրը իրան լեռնոտ դիրքովն է զերպանցվում։

Տիբեթի լեռների գագաթները յուխտենական ձիւնով են պատած։ Այդ լեռներից ամենամեծերը Տիբեթի հարաւային սահմանումն են գոնվում և Հիմալեան լեռներ են կոչվում։ Վաճառականական ապրանքների մէջը ամենաբնեղին Տիբեթի այծերի բուրդն է համարվում, որից շինում են երևելի Կաշմիրի շալեր։ Այդ բուրդը տանում են Հնդկաստանի հիւսիսումը գտնուող Կաշմիրի գաւառը և այն տեղ արդէն նրանից շալեր են գործում, որոնք ծախում են Եւրոպացւոց վերայ բաւականի թանկ գնով։ Հնդկացիք շալերը առ ժամանակ փաթաթում են իրանց գլխին, յետոյ խատկում են և այն ժամանակը արդէն ուզարկում են Եւրոպայ։

Տիբեթը երևելի է ուրիշներից այն պատճառաւ, որ նրա մէջն է քահանայ Դալայի-լաման, որին համարեա՛ բոլոր Ասիայիք երկրպագութիւն են տալիս։ Տիբեթի բնակիչները ասում էին, որ Դալայի-լաման մի մարդ է, որի մէջը Աստուծոյ հոգին բնակվում է։ և նա երբ մեռնում է, այն ժամանակը այդ հոգին մի ուրիշի մէջն է մտնում։ Դալայի-լաման միշտ դահի վերայ ծալապատիկ նստում է և իրան հաւատացողներից երկրպագութիւն է առնում։

Այս վերջին ժամանակներումս ասում են, որ նրանից մի անուշահոտութիւն է բուրում։

IX.

Հարավային Ամերիկա:

Ամբողջ արևելեան կողմումը գտնուող մի քանի կղզիները բաղկացնում են Ճապոնիայն։

Այդ երկիրը շատ լեռնոտ է և ամէն մի բլուրը և հողի մասը առհասարակ մշակած է. բնակիչների թիւը մինչև 35,000,000 է հասնում. Ճարտարութիւնով և յաջողութիւնով Չինացիներից գերազանց են Ճապոնացիք։

Ճապոնիայումը շատ անգամ երկրաշարժութիւն է լինում և դրանից է որ տները ցածր են շինում։ Ճապոնացիք արտաքին կերպով և էլն ուրիշ շատ բաներով Չինացուց նման են. վարք ու բարքը, կենցաղավարութիւնը, հագուստները, նրանց հաւատը համարեա թէ մէկ են։ Հարկաւոր է միանգամայն նշմարել, որ Չափազանց մնապաշտ են Ճապոնացիք և երևակայում են իբր թէ ամենայն կողմերից զանազան աստուածութիւններ են շրջապատում նրանց, և հենց դրանից է որ նրանք շատ աղօթք են անում, և շատ աղօթք անելու համար էլ, ձեռք են գրում ամենատնհնարին միջոցները, զորօրինակ. հողի միջումը մի սքեան են ցցում, որի վերայ դնում են մի բաւականի ընդարձակութիւն ունեցող երկաթի կտոր. այդ երկաթի կտորը կարելի է ձեռքով շուտով շարժել։ Այդ երկաթի տա-

ընծութեան վերայ գրած է, այսինքն վորածէ, Հռոմա-
ցու այնտեղ Աստուծոյ աղօթքը, որ նա բնակվում է։ Եթէ
որ նա տան անդամ պէտք աղօթք կարդայ, այնքան ան-
դամ էլ շուռէտալիս այն երկաթի տարածութիւնը և ա-
ղօթք է կարդում։ Այսպիսով ամեն մէկը, համարեա թէ
առանց հանդամանքը, անդադար աղօթք են անում։
Առաջին ժամանակներումը Եւրոպացոց թագլ էր տուած
ճարտիպարումը բնակվել։ Պօրտուգալցի քարոզիչները մին-
և անգամ կարդացան քրիստոնէական հաւատը տա-
ծել, բայց յետոյ ժամանակներումը բոլոր օտարականնե-
րին դուրս քշեցին և առհասարակ քրիստոնէաների վերայ
էլ հալածանք վերկացրին։ Այժմեան հաղորդակցութիւնը
ճարտնացոց հետ քիչ է, նոյնպէս և Չինացոց հետ։ Եւ-
րոպացոց տէրութիւնները պրոմանադիր հաստատեցին այդ
երկու տէրութիւնների հետ վաճառականական և քաղաքա-
կան հաղորդակցութիւն ունելու համար, որ միջոց է դառնում
Եւրոպացոց կրթութիւնը Ասիայումը տարածելուն։

Հարկաւոր է նկատել, որ 1793 թուին Անգլիացի դես-
պան Լորդ Մակարտնին ամենքը առաջ Պեկին մտաւ, որ-
տեղ նա մարդասիրաբար Չինացոց թագաւորին ընդունելեցաւ

X.

Զայն հաստատելոյ մասին։

Այժմ առաջարկութիւն դարձնենք Զինաստանումը գտնուող Հայ անունով բոյսի վերայ որը Եւրոպացւոց յայտնի է։

Զայն թուփը ուր կամ լինելը որը բարձրութիւն ունի, նրա ճիւղերը կտրտուում են։

Զայի թուփի տերևները սովորապէս առաւօտեան վաղը հաւաքում են, երբ նրանց վերայ եկած ցողը չի ցամաքել։ Յետոյ այս տերևները արևումը չորացնում են։

Լաւ չայի ամէն մի տերևը առանձին փաթթում են։ Երբոր նա բոլորովին չորանում է, նրան օծում են սեղուկի մէջը, որը միջի կողմերը արմատով օծած է լինում և ամրացնում են, յետոյ մեծ հոգացողութեամբ ծածկում են և ուղարկում են վաճառելու։ Զինացիք առանց շաքարի են չայ խմում, աւելի առողջութեան համար, քան թէ բաւականութիւն առնելու։ Զայի թուփը միայն Զինաստանումն է գտնում գալիս և ճապոնիայումը։

Զինաստանումը նրան շատացնելու են աշխատում։ Երբեմն ինքն իրան այդ թուփը անմատչելի ժայռերի վերայ էլ գտնում է գալիս։ Երբեք հարիւր տարուց աւելի չէ, ինչ ոչ Եւրոպայումը չայի գործածութիւնը մտել է, բայց աւելի

շատ Ամերիկացիք և աշխարհիս միւս մասերը սկսեցին գործ ածել նրան։

Մի Ամերիկացի ինձ պատմեց, թէ ի՞նչպէս է նա առաջին անգամ ջայ տեսել։ Նրա հօր մօտ մի բարեկամ փոքր ինչ ջայ էր ուղարկել։ Նա լսել էր և շատ առաջ ջայի մասին, բայց չգիտէր թէ ի՞նչպէս են նրան գործ ածում։ Սկզբից նրա համար եփ տուին ջայ պղնձի մէջը և բոլորը սկսեցին տերևները ուտել. բայց որովհետև նրանց համը դառն էր, ջոր ջայն դրին աջի վերայ և այնպիսով խորովեցին նրան։

Դ հարկէ և այս գործածութիւնը ոչ ոքի հաւանական չ՝էր, վերջապէս սկսեցին ջայն ուրիշ կերպ գործ դնել, ինչպէս այժմ են գործ դնում, այսինքն փոքր ինչ եփ տուած ջրի մէջը թողում են։

XI.

Մաղակայի եւ Մաղակացիների կրթութիւնը։

Կանոնումը հինգ շաբաթ մնացինք և մեր նաւը ջայով և արքեշումեղէնի ապրանքներով բեռնաւորելից յետոյ, մենք յետ դարձանք Ամերիկա։ Կանոնի դէտովը գնալով մենք մտանք Զինական ծովը, և այնտեղից էլ Մալակայի նեղու-

ցոլը մնանք Հնդկաց ովկիանոսը։ Մինչև մեր Ամերիկա հասնելը ոչինչ մի հետաքրքրական բան չ՝պատահեց, և ես այդ ժամերովը շահվելու համար, կընկարագրեմ ձեզ Ասիայի այն տերութիւնները, որոնց մասին մենք դեռ ևս չենք յիշատակել։ Ասիայի ամենահարաւային դլխու

է գտնվում Մալակա թերակղզին։ Նրա բնակիչները Մալակացիք են կոչվում. նրանք կատարեալ վայրենի են և կոպիտ։

Մալակացիք տարածուած են համարեա թէ խաղաղ ովկիանոսումը գտնուած կղզիների վերայ։ Մալակայումը կլիման գեղեցիկ է. այնտեղ յաւիտենական ամառ է, այնտեղի ջրերումը անթիւ կոկորդիլոսներ են գտնվում, բայց անտառները վագրերով և ընձառիւծներով լիքն են։

Մալակայումը շատ ոսկի կայ, որն որ լեռներիցը փոք հատիկների և կտորների նման թափվում է և բնակիչները թոզի ձևով նրան ժողովում են։ Մալակայի լեռներումը բացի՝ ոսկուց շատ կան և ուրիշ մետաղներ։

XII.

Ներքևասխարդաց Հնդկական թերակղզի և նրա միջի գտնված երկրները։

Մալակայիցը դէպի հիւսիս գտնվում է Ներքնասխարդաց Հնդկական թերակղզին, որը իւր մէջ պարունակում է. Ցիր-

մանի տէրութիւնը, Տօնկինի կայսերութիւնը, Կոխենխինը, Կամբոջան, Սիամը և ուրիշները։ Այդ կողմերի բնակիչները բարքով և սովորութիւնով Չինացւոց նման են, բայց նրանցից քիչ են լուսաւորեալ, և կիսավայրենի դրութիւնում են գտնվում։

Սիամը ամենահզոր և ընդարձակ տէրութիւններից մէին է Բիրմանի տէրութիւնը, բայց վաղ ժամանակից յետո Անդղիացիներից նուաճված է։

Բիրմանացիք, ինչպէս և միւս ժողովուրդները, որոնք այդ երկրներումն են բնակվում, բոլորը կռապաշտ են։

Այդ գաւառումը ապիտակ փիղը աստուած է համարվում, նրանց յարգում են և երեսի վերայ են ընկնում նրա առաջը։

XIII.

Հնդկաստանը, Հնդկացիք, փորոքիկը։

Հնդկացիք, կամ Հնդկաստանի բնակիչները ասիայի ժողովուրդներից ամենանշանաւոր են, և նմանապէս Անդղիացւոց ձեռի տակը նուաճված են։ Չինաստանցիք։ Թաթարները, Տիբեթացիք և ներքնախաղաց Հնդկական թերակղզու բնակիչները, բոլորը միմեանց նման են և մի ցեղից են, բայց Հնդկացիք արտաքին տեսքով, բնութիւնով և հաւա-

տալ բոլորովին զանազանվում են նրանցից։ Հնդկաստանումը կլիման չափազանց երաշտային է և անձրևային։

Անձրևային ժամանակումը վարարում են գետերը, ափերից դուրս են գալիս և շատ անգամ անբաղջ դիւղերը ջրով լցնում են։ Չորանալու ժամանակը հողը այնպէս է չորանում, որ բոլոր բոյսերը թառամում են և չորանում և անձրևի պակասութիւնից շատ անգամ ընդհանրապէս սով է ընկնում, և այն աստիճան է հասնում երբեմն սովը որ խեղճ մարդիքն իրանց որդիքը քիչ գնով ծախում են։ Շատ անգամ սովամահին ամբողջ գիւղերն են մատաղ լինում, և մինչև անգամ այս ներկայ ժամանակումս էլ, երբ վերանորոգութիւն էլաւ ժողովուրդներովը, սովը հնդկաստանին սաստիկ ամայութիւն պատճառեց։

Ցուրտ սաստիկ բանը հնդկացիք չ'գիտեն։ Շատ տեղերում ձիւն և սառուց չ'ի լինում։ Հնդկացիք հաքնում են թեթեւ աբրէշումի կամ բամբակի շորեր, որովհետև հատ շորեր նրանց հարկաւոր չ'է։ Նրանց խրճիթները և հիւղերը շինած են լաւ մեծի մասին զամիշից և բամբակից, ծածկվում են արմաւենեաց տերևներով և ամենևին նմանութիւն չունին մեր քաղաքի բնակարանների հետ։ Հնդկաց խրճիթները և հիւղերը չեն դիմանում փոթորիկներին և կայծակին, որոնք հնդկաստանումը խիստ են և շատ անգամ են պատահում, որովհետև այնտեղ կլիման տաք է։ Դժուար և անհնարին է մեզ ճևակերպել այսպիսի սաստիկ

տեսարանը, որը առաջ է գալիս Հնդկաստանումը այնպիսի ամայացնող և յանկարծահաս փոթորիկներից։

Ծառերին շուռ են տալիս, անները կործանվում են, ժայռերը քանդվում են, կենդանիքը բառաչում են, մարդիքը յուսահատութեան մէջը աղաղակում են և թագաւորում է լռութիւնը։ Բնակիչները դուրս են գալիս տներից և ցաւելով մնիկ են անում իրանց վերթափած անասունների, ոչընչացած հունձերի և կործանուած բնակարանների վերայ։

XIV.

Փղերի, վագրերի, ռնգեղջիւրների եւ օձերի վերայ։

Հնդկաստանումը միւս վայրենի անասունների կարգումն են փղերը, վագրերը և ռնգեղջիւրները։ Զահել փղերին բռնում են և ընտանեկան են շինում։

Երանք այն ժամանակը հանդարտ են, խաղաղ և օգտաւէտ մարդկանց համար ծանրութիւններ կրելով։

Հնդկաստանի վագրը զերազանցվում է ուրիշ վագրերից մեծութիւնով և ուժեղութիւնով։ Երանց որսալը շատ վտանգաւոր է, որովհետև գտնելով վագրի բունը, ապատում է որ նրանից մայրը դուրս գայ և այն ժամանակը տանի ճուտերին, որոնք սովորաբար երեք կամ չորս հատ են լինում։

Նրանք մեծ մեծ կատուների նման են։ Մայրը յետ դառնալով իւր բունը, չէ դանում ճուտերին, արագութեամբ հեռանում է որսորդի հետքին, որ յափշտակողին պատռատէ։ Որսորդը, տեսնելով որ վագրը մօտենում է, դցում է նրա առաջ ճուտերից մէկին և փախչում է հեռու։ Մայրը տեսնելով իւր ճուտին, վերցնում է և շտապում է մի ապահով տեղ տանելու, յետոյ էլի որսորդին հետևում է։ Որսորդը կրկին մէկին էլ վեր է դցում և մինչև մայրը նրան էլ կ'տանի, շտապում է փախչելով հասնել մօտիկ գիւղը կամ իւր նաւը մնացած ճուտերովը։

Ընդհանրապէս փղի չափ և փոքր ինչ նրան նմանէ։

Նրա կոպիտ ու հաստ կաշին կարծես թէ նրա հատակն է, որովհետև հաւաքուած է նրա մէջքի վերայ, ուսերի և ոտների վերայ ծալած և տրտնով մի զարհուրելի տեսք է տալիս։

Հնդիկաստանումը շատ մեծ և թիւնաւոր օձեր կան. նրանք գտնվում են սարերի վերայ և շատ անգամ տներն էլ են մտնում։

XV.

Հնդկացոց հաւատը։

Հնդկացիք չորս դաս են բաժանվում։ Առաջին դասը — բռահմանները են կամ քուրմերը։ Երկրորդը — զինուորական-

ները. երրորդը — վաճառականները. չորրորդը — ամենայն ցեղի հասարակ հոլովները։

Այժմ բոլոր դասերը ոչ մի ժամանակ միմեանց հետ չեն խառնվում, այսինքն միմեանց հետ ոչ պակվում են, ո բնակվում. և մինչև անգամ՝ միասին չեն էլ մանգալիս։

Այժմ երեք յեռոները սասիկ պատվում են բռահմաներին, բայց հոլովները մինչև անգամ պարտաւոր են միշտ նրանց համար աշխատել և պատահած ժամանակն էլ գրոռները դեպ՝ի գեռները խոնարհացնելով երկրպագութիւն տալ։

Հնդկացիք շատ և բարի սատուածներ շատ ունեն։ Եղիպտացիք շատ սատծաներ, և ժամանակի մեծ մասը նրանք անցնում են կացնում սատուածային ծառայութեան արարողութիւնների մէջ։ Բայց աղօթասիրութիւնը նրանց բարեգործ չ՝ի շինում։

Քրիստոնէական կրօնը մեզ հրամայում է ուրիշին չ՝անել այն, ինչ որ քեզ համար չ՝ես ցանկանում, արգելում է խաբել, բարկանալ, վնասել կամ անպատուել ուրիշներին՝ բայց հրամայում է հեռանալ մեծերին, սիրել մերձաւորներին, բարի լինել և ողորմած։

Հնդկացւոց կրօնը բոլորովին այդպէս չէ. նա ասում է, որ եթէ նրանք կ՝պահպանեն մի երևելի արարողութիւն, եթէ նրանց երեխանցը կ՝այրեն, եթէ կենդանի մարդկանցը հողով կ՝ծածկեն, եթէ դանակներով իւր անձը կտրեն և

եթէ նրան մեխերով կ'ծակծկոտեն, այն ժամանակը ատուաձները անշուշտ նրանց կ'ողբային։ Նրանց անապաշտութիւններին վերջ չկայ։ Շատ Անդղիացի և Ամերիկացի քարոզիչներ են այնտեղ ուղարկվել, բայց մինչև այժմ դեռ և և շատ քիչ Հնդկացիների դարձրել են դէպ'ի ճշմարտութեան ճանապարհը։

Անդղիացիք մեծ երկրներ ունին Հնդկաստանումը. այնտեղի գլխաւոր քաղաքը Կալկուտան է. նրա մէջը Անդղիացիք են բնակվում և նրանց շատ տները եւրոպական ձևով են շինված։

Անդղիացւոց ծովային վաճառականութիւնը Հնդկաստանումը շատ ծաղկած է և օգուտ քաղելով նրանցից բերում է Եւրոպայ աբրեշումէ և բամբակէ ապրանքներ, Կաշմիրի շալ, համեմանի և ուրիշ շատ բաներ։ Հնդկաստանումը զօրք է պահում Անդղիան։ Եա համարեա՛ բոլոր Հնդկաստանը իւր իշխանութեան տակը նուաճել է։

XVI.

Պարսէի Ամերիկայ գնալը։- Ջրաշիրի սիրելը։- Ջեվկիևսը։

Կարծեմ ժամանակ է այժմ ձեզ պատմելու, թէ ես ինչպէս տուն դարձայ։ Հնդկաց ովկիանոսովը ես նաւավա-

բելով մինչև Բարկուսոյ գլուխը և յանկարծ մտանք Գուլանտիան ոլկիանոսը։ Մենք Ս. Հելենէի կղզու վերայ մնացինք, ուր, ինչպէս ես ձեզ պատմեցի, Գաղղիացւոյ Նապոլէոն I թագաւորը մեռաւ, որի նշխարները Լուդովիկ—Փիլիպոսի թագաւորութեան ժամանակը Պարիժ բերին։ Նրի հետ գնալով, մենք ոլկիանոսումը մի հետաքրքրական երևոյթ տեսանք։ Սկզբիցը մենք նկատեցինք սև ամպեր, որոնք անդադար շարժում էին։ Ծովը նրանց տակին սաստիկ շփոթվում էր և յանկարծ մի ջրային սիւն, պտըտվելով և փրփրելով, ուղիղ դէպ՝ի երկինքը բարձրացաւ։

Մեր նաւի գլխաւորը շատ վախեցաւ, որ սիւնը չըկոտրվի, չ՝թափվի և չ՝խորտակէ մեր նաւը, բայց այդ թըշուառութիւնը մեզ չ՝պատահեցաւ։ Դրանից յետոյ մենք շուտով եկանք Բօսոն։ Կարողէք դուք ձեզ երևակայցնել իմ ուրախութիւնը տուն յետ դարձած ժամանակս։

Բայց մի բան ինձ տխրացրեց։ Իմ բարեկամ Ջենկինսը, այդ ժամանակը, երբ որ ես Խուալիա գնացի, ճանապարհ էր ընկել դէպ՝ի Հնդկաստան, Բոմբէի քաղաքը։ Իմ ականջս հասաւ, որ սաստիկ փոթորկի ժամանակը նրա նաւը խորտակվել է, բոլորը կարծում էին, որ նրա միջի գտնվող մարդիքը խեղդվել են, և ես իմ կողմանէ բոլորովին յուսահատեցի իմ բարեկամին տեսնելու կրկին։ Այդ անցքայառութիւնը երեք տարի քաշեց։

Իմ Բօսոն գալուցը մի քանի շաբաթ յետոյ, Լրիկունը

ես նստած էի բուխարու մօտ։ Ձիւնը շատ թանձր դիպված էր և սառը քամին լուսամուտովը փչում էր։ Ես ուրախ էի, որ այսպիսի վատ եղանակի ժամանակը տանն եմ և քաղցրութիւնով անցեալ բաներըը միտս էի բերում, աւելի իմ Եւրոպայումը ճանապարհորդելը և նեղջնախաղաց Հնդիստանի բոլոր անցքերը, որոնք Չենկինսին ինձանից բաժանեցին։

Ինձ թվում էր, որ իմ առաջը պարզ տեսնում եմ նրա կոչիս, բայց յարգելի երեսի գծագրութիւնը։ Ցանկարծ դուռը բացվեց, և մի ձիւնաթափ մարդ տուն մտաւ։ Տարերին մոխկտալով ես իսկոյն դուշակեցի, որ այս տան մտողը ծոխադնաց է։

Իրանից ձիւնը թափ տալով և դղակը վերցնելով իմ մօտ եկաւ։ Երևակայեցէք իմ զարմանալը, երբ ես իմ առաջը Չենկինսին տեսայ։ Խոտոտվանվում եմ, ես սկզբիցը իմ աչքերիս չհաւատացի. բայց նա երբ որ ինձ հետ խօսաց և իմ ձեռքս բանեց, ես էլ չէի կարող կասկածել. քանզի նրա վզովը գրկախառնելու։

XVII.

Չենկինսի անցքերը։

Չենկինսը ինձ մանրամասնաբար պատմեց իրան անցքերը և ես նրանց ուրախութեամբ ձեզ կ՝հաղորդեմ։

Նա արդէն Բոմբէի մօտ է լինում, երբ յանկարծ սաստիկ քամին փչում է, կամ, ինչպէս ծովագնացները ասում են, ծովային քամին փչեց։ Խոշոր կայմերը կտրեցինք, ասում էր Ջենկինսը, և նաւը ինչքան որ կարելի էր ուղիղ գնաց, բայց փոթորիկն էլի շարունակւում էր և սաստիկ շաժերը նաւի մէջը չուր թափեց։ Երկու օր ջրի վերայ սասանվում էինք, բայց բոլոր աշխատանքներս 'ի զուր, նաւը համարեա մինչև ափերը ջրով լցվեց։ Գնաց է որ նաւակով ազատվել էինք, նրա վերայ մի քանի ուտելու պաշար դնելով։ բոլոր նաւավարները և ճանապարհորդները թողին նաւը, որն որ շուտով անդունդը խորասուզվեց։ Այդ գիշերով պատահեց։

Փոթորիկը նաւակի հետ խաղում էր ինչպէս բու բթռռ հետ։ Վերջապէս արշալուսին քամին հանդարտվեց, բայց երկինքը դեռ ևս ամպերով ծածկված էր և թշուառ ծովագնացները տեսան, որ կողմնացոյցը չկայ։ Դրանք հասատ իմացան որ նրան նաւքյը վերցրել են, բայց հաւատալի է որ գիշերը ալիքը տարել էին։

Կողմնացոյց այն արկղիկին են ասում, որի մէջ տեղը մի պողպատեայ սլաք կամ ասեղ է շինած մագնիսով օծաց։ Նա միշտ դէպ'ի հիւսիս է մոտիկ տալիս։ Կողմնացոյցը ծովի վերայ անշուշտ հարկաւոր է, որովհետև նրանով միշտ կարելի է իմանալ թէ ո՞րտեղ ես գտնվում և թէ ո՞ւր պէտք է գնալ։

Թշուառ ծովագնացները ամբողջ շաբաթը նաւակարգին առաջ, բոլորովին չիմանալով թէ ո՞ւր են գնում և նրանց միակ յոյսն էր—որ և իցէ նաւի պատահել։ Նրանք քիչ չոր հաց ունէին, բայց երկու օրեր, որ բոլորովին ջուր չէին խմել։ Երբ որ նրանք տեսան ծովային խոտը, այն ժամանակ ուրախացան, որովհետև նշանակում էր ափի մօտիկ լինելը։ Մօտիկանալով հողին, նրանք տեսան վայրենի և աւազոտ ափեր, որոնց վերայ ոչ թէ բնակարան, բայց և մարդու հետք էլ չկար։ Այնտեղ միակ շնչաւոր կենդանիքն էին ջայլամները, որոնք վախկոտ կենդանիք են։

Սովորուկ և ծարաւ, նրանք կրկին մակոյկի մէջը նստեցին և ափի երկայնութիւնով մեն եկան, բայց նրանց միշտ նոյնպէս անպտուղ ամայի տեղեր պատահեցին։

Վերջապէս նրանք վճռեցին ափովը գնալ ուրիշ կողմեր և թաղայ ջուր գտնել։ Նրանցից չորը այնպէս էին դաղարել, որ ոչ չէ՛ունէին ման գալու և աւազի վերայ պառկում էին, միւսները հազիւ հազ քաշ էին գալիս։ Ջենկինսը, իրան հետ վերցնելով նաւավարին, յեռիների կարգումն էր։

Ցորը անասնելի էր։ Աւազը նրանց ոտները այրում էր։ Օդը նրանց խեղդում էր, բայց մի կաթիլ ջուր էլ չ'գտան։ Խեղդուած նաւաւարը հրաժարվեցաւ առաջ գնալուց, նրա բերանը ցամաքել էր, լեզուն ուռել էր և մի խօսք անգամ արտասանելու կարողութիւն չունէր, բայց միայն նշանները

ներով Զենկինսին ցոյց էր տալիս, որ նա առաջ գնայ, և նրան այդ տեղ թողնի մեռնել:

Զենկինսը նրա մօտ նստեց և նրան չ'լսելով աշխատում էր օգնել, և թէ ինչպէս է լինում յանկարծ մէկ մարդ նրա մօտ է գալիս:

Այդ մարդու հագի շորերը արաբացու էին և մօտը կանգնած էր մի բարձած ուխտ: Զենկինսը նշաններով ջուր ուզեց:

Արաբը խակոյն նրան մի կաշեից շինած անօթ տուեց, բայց արդէն ուշ էր, ծուխդնացը մեռաւ: Զրով զովանալով, Զենկինսը կամեցաւ նրա մնացորդը իւր ընկերներին տայ, բայց Արաբը չ'համաձայնեց:

Փոքր ժամանակ անցելուց յետոյ էլի ուղտերով տաներկու. Արաբներ եկան, որոնք Զենկինսին բռնեցին, նրա ձեռքերը կապեցին և այն ուղտերիցը մէկի վերայ նստացնելով, հանդարտ իրանց ճանապարհը շարունակեցին:

Մի քանի օրից յետոյ նրանք հասան արաբացուց թափառականների խումբը, որը մի քանի հարիւր մարդից էր բաղկանում:

Արաբները միշտ չադրներում են բնակվում և ուղտի կաթով են կերակրվում: Արաբացուց ձիաները շատ գեղեցիկ են և Արաբները նրանց սիրում են ինչպէս իրանց երեխանցը, մեծ հոգով կերակրում են, իրանց չադրներում են պահպանում և ինչպէս ընկերին գգվում են:

XVIII.

Արաբիայի եւ դարձեալ Զեւկիանի մասին:

Եգիպտոսից դէպի արեւելք գտնվում է Արաբիան, որից նա կարմիր ծովովն է բաժանվում։ Սինայեան լեռը, որի վերայ Մովսէսն Տէրը տասը պատգամները առաւ, այժմ եւս Սրաբիայումը տեսնվում է։ Արաբիան բաւականի ընդարձակ է, ծովամերձեայ հողերը բաւականի պտղաւէտ են, բայց նրա միջին մասը ոչ այլ ինչ է եթէ ոչ լայն անապատ։

Անների երկայնութիւնովը քաղաքներ եւ գիւղեր կան շինուած, բայց անապատներումը թափառական Արաբներն են բնակվում, որոնք իրանց բազմաթիւ հոտերի կաթովը եւ միսովը, նոյնպէս անց ու դարձանող քարվանների թալանովովն են կերակրվում։

Հենց նրանց ձեռքն ընկաւ մեր խեղճ Զենկինսը եւ հարկադրված էր մշակութեան ամենայն դժուարութիւնները կատարել։ Վեց ամիս նա այդ բոլորը համբերութեամբ կրեց, յուսալով մի պատահմանքի ժամանակ փախչել, բայց 'ի զուր։

Երբ որ տաւարները կերան թփերը եւ խոտերը, Արաբները վերցողած քարվանը վեր քաշեցին, ծալած բոլոր կայքը

բարձեցին ուղտերի վերայ, նստացրին երեխաները և կանանցը ու ճանապարհ ընկան։ Օրուայ եղանակը տաք էր, ցերեկը գինջանում էին և գիշերները սառի առաջնորդութեամբ ճանապարհ գնում։

Մէկ անգամ ջենկինսը նկատեց, որ բոլորը մէկ բանից յետ քաշվեցան, մարդիքը երեսի վերայ գետնին ընկան, ուղտերը իրանց քնիերը աւազի մէջը թաղեցին։ Մտիկ տալով, նա տեսաւ մօտիկ աւազի բլուր կամ լեառը, որը արագութեամբ նրանց մօտենում էր։ Իրան ընկերների օրինակին հետևելով, նմանապէս նա էլ գետնի վերայ պառկեց։ այնուամենայնիւ բլուրը, մօտիկանալով, նրանց աւազով ծածկեց, և այնպէս օդը բռնեց, որ հաստատեալ թէ անկարելի էր շունչ քաշել։ Երբոր բլուրը ցնդվեց, Արաբները շարունակեցին առաջ գնալ։

Այդպիսի պատահման ժամանակը երբեմն ճանապարհորդներին այնպէս է ծածկում, որ նրանք չեն կարողանում ազատվել, հենց տեղնուր տեղը մեռնում են։ Երկու օրից յետոյ Սամուել քաղաքն փչեց։ Անապատումը հաղիւ դուրս եկած ու մեծացած տերևները և ծաղիկները խակոյն թառամեցան և չորացան։ Ձիաները դադարեցան, մի քանի ուղտերն անգամ ատակեցան։ Խեղճ և փնտակար օդից մարդիքը անպատմելի կերպով չարչարվեցան։ Այս թշուառ դրութիւնը երկու օր քաշեց։

Մէկ անգամ գիշերը մեր ճանապարհորդները վերկան,

Երեսուն Սրաբ մարդիք նստեցին իրանց լաւ լաւ ձիաների վերայ և ուրիշ կողմերի վերայ յարձակվեցան։

Ուրիշ կողմերի վերայ յարձակուած Սրաբները, յանկարծ բոլորը շրջապատեցին քարվանին և վաճառականների վերայ ընկան, շուտով նրանց թանկագին բաները յափշտակեցին, ի դրանք իրանց ձիաներին բարձեցին, քարվանին թողին որ իւր ճանապարհը շարունակէ։

Յետոյ արաբները վեր եկան դինջանալու համար և իրանց հագուստները վեր թողին։ Այդ տեղ Զենկինեանը խնայաւ, որ մինչև Սրաբիայի արևելեան սահմանը միայն տաներկու մղոն է և մոքուսը դրեց փախչել։ Առաջին մութը գիշերը Զենկինեանը կամաց հագուստները դուրս եկաւ, թուանքը պատրաստած ամրողջ գիշերը նա գէպ՝ի արևելք էր գնում, բայց արշալուսին թափերումը թաքչում էր։ Ուղղի չորացած միսը ուտելով և իւր բախտիցը ջուր էլ դանելով, նա քնում էր, հետևեալ գիշերը կրկին ճանապարհ էր ընկնում և այդ կերպով չորս օր ու գիշեր նա գնում էր։

Վրա հինգերորդ օրը նրա պաշարը հատաւ և նա արդէն սկսեց տալել. ինչպէս էլաւ նա յանկարծ մի Ջահել Ջայլամ տեսաւ և սպանեց նրան։ Հակակ ծառի չորացած ճուղքերը հաւաքելով, նա հրաձգութեամբ նրանց վառեց, և Ջայլամի մսեցը մի կտոր խորովեց։

Հաղիւ թէ նա մի կտոր կերաւ, յանկարծ նա ուղիղ գէպ՝ի ինքը եկող մի ձիաւոր տեսաւ։ Ձիաւորը. տեսնելով Զեն-

կինային, սկսեց իւր ձին թեքել և թուրը գլխովը պտտելով նրա վերայ յաձախվեց ինչպէս մի նետ։ Զենկինը նկատեց որ սա իւր թողած Արաբներիցը մէկն է, և պատրաստվեց պաշտպանելու իրան։ Արաբը իրան բարձր բռնած թրովը նրա վերայ թռաւ ինչպէս մի կայծակ, Զենկինը նրան դէմ կացաւ, բայց անյաջող։

Յանկարծ Արաբի ձին խրտնեց և իրան վեր դցեց։ Արաբը շուտով գետնի վրայիցը վեր կենալով կարողացաւ նրան բռնել, արագութեամբ նստեց և սաստիկ քշեց։ Զենկինը, վախենալով իր հետքիցը ընկնելուց, այդ ամբողջ օրը և մինչև անգամ գիշերն էլ առանց հանգստութեան գնում էր։

Տեղն դրութիւնը մի ուրիշ ձև առաց, ներկայացան լեռնոտ տեղեր, երբեմն երևում էին թզի, արմաւենու և ուրիշ ծառեր։

Արշալուսին Զենկինը մինչև ծոլի աւիը գնաց, ուր մի քանի աւերակ դարձած խրճիթներ կային, բայց մի մարդ էլ չգտաւ, որ նրան կերակրէր։

Նա վճռեց այդ խրճիթներից մէկումը կենալ և ապասել մի որ և իցէ նաւի գալստեանը։ Մօտ մի շաբաթ նա այդտեղ բնակվեց հնդու խուրմով և ձկներով կերակրվելով, վերջապէս տեսաւ մի փոքրիկ նաւակ։ Իրան այնտեղ լինելու տեղեկութիւն տալու համար, նա ժայռի վերայ կրակ վառեց, նաւակի վերայ մարդիքը, նկատելով կրակը, ափումը նաւը կանգնացրին։ Զենկինը իրան լեռիցը տեսաւ,

որ այս մսաեռողների երեսի գոյնը մուխին էր, իսկ աչուաքին ձևը բոլորովին անկիրթ։ Դրանց լեզուն էլ արաբերէն չէր, Դրանք Զենկինսին նատեցրին իրանց նաւակը մի և երկու օրից յետոյ մի փոքր գիւղ հասան, որ բաղկացած էր հողից շինած խրճիթներից։

XIX.

Զենկինսի ուղղքերի շարունակութիւնը։

Զենկինսը, ինչպէս պարէն յետոյ իմացաւ, անցկացաւ Օրմուսովը, որով Սրաբիան բաժանվում է Բելուջիստանից։ Բելուջիստանի բնակիչները վայրենի են և աւազակութեամբ զբաղվող։ Այս վայրենի մարդիքը նրան աւազակ անապատովը բերին Կելատ քաղաքը, որ Բելուջիստանի մայրաքաղաքն է, և խանի վերայ ծախեցին, բայց խանն էլ մի վաճառականի վերայ ծախեց։ Զենկինսի նոր տէրը Աղվանստանի մայրաքաղաք Կաբուլի բնակիչ էր, իրանց հետ և նրան տարաւ։

Աղվանստանցիք Բելուջիստանի բնակիչներից աւելի լուսաւորեալ են։ Դրանց բոլոր քաղաքներումը ուսումնարաններ կան։ Զենկինսի տէրը շատ խոպոհան քաղաքը վաճառականութեան գնաց։ Այսուհետև Զենկինսը մի Անգլիացի ճանապարհորդի տուտահից, որ հանձնեց նրան

առնել և Ջենկինսն էլ դրա վոխանակ խօսացաւ նրանք ապաստարի տեղ ծառայել։ Անդղիացու հետևա գնաց Պարթևկաստուն, ինքնագլուխ Տաճկաստուն և Կասպից ծովը անցկենալով երևեցաւ Կովկասեան հողերումը, ուր զարմացաւ ու հափշտակուեց բնակիչների գեղեցկութեամբը։

Յետոյ նրանք եկան Ասորեստանի Ալեպոյ քաղաքը, և այն տեղից Երուսաղէմ։ Այս քաղաքը այնպէս մեծ և հոյակապ չէ, ինչպէս Սողոմոնի ժամանակը։ Փուչաները նեղ են, ուղիղ և լաւ խտակած։ Տները քարից են, բոլոր նեղքի հարկերը առանց լուսամտի։

Սոր քաղաքը բարձր տեղն է շինած, լերան չորսի կողմը շրջապատած է գեղեցիկ մշակած հովիտով, որի մօտերքումը էլի լեռներ են գտնվում։ Հրէաները այժմ չնչին են և ցրուած են բոլոր երկրագնդիս վերայ։ Ուշադրութեան արժանի է որ ամենն տեղ նրանք իրանց կրօնը, սովորութիւնները և ծեսերը պահպանում են։

Այժմ Երուսաղէմը Տաճիկներին է պատկանում։ Ինչպէս ցաւալի է, որ այդ քաղաքը, որի միջումը բնակվել է Դաւիթը, Սողոմոնի տաճարն էր, որտեղ մեր փրկիչը այնչափ համբերեց մեզ համար, այժմ քրիստոնէից իշխանութեան տակը չէ գտնվում։

Պարէի զրոյցները Ամերիկայի վերայ։

I.

Պարէն Միջերկրական ծովը զբաղուած է Լանգայի վիժուելը տեսնելու։

Երբ որ յետ դարձայ Եւրոպայէն, Ասիայ գնալու ճանապարհաջ, ես գնացի Միջերկրական ծովը, որ Ամերիկայի և Եւրոպայի մէջ տեղն է գտնվում։

Ամերիկան արանից դէպի հարաւ է գտնվում, իսկ Եւրոպան հիւսիս։

Մեր նաւը «Կարապ» էր կոչվում։ Ես երկրորդ նաւապետն էի։—Մենք նիւ.—Եորկի նաւահանգստից դուրս եկանք և Ատլանտիան ովկիանոսումը նաւավարեցինք։

Ճանապարհային քամու օգնութիւնովը մի քանի օրից յետոյ, մենք հասանք Բերմուդեան կղզիների մօտ, որոնք Անգլիացիներին են պատկանում։ Այդ կղզիները 400 հատ են. բայց շատ քչերը բնակիչներ ունեն։—Նրանցից գլխա-

որն է — Ս. Գէորգայ կղզին, նրանում մի քանի նաւահանգիստներ են գտնվում, երկու բերդեր և մի փոքրիկ քաղաք։

Այն տեղը օդը սաստիկ առողջարար է, բայց անտանելի շոգ է և շատ անգամ սաստիկ փոթորիկ է լինում։

Համարեա թէ ձմեռ չկայ։ Այդ կղզիներումը բուսում է եղևնափայտի և Արմաւենի ծառեր, ծխախոտ, պտուղներ և տարէնը երկու անգամ հունձ է լինում։— Անթիւ ձուկը և թռչունք կան։

Շուտով մենք հասանք Կանարեան կղզիների մօտ։ Նրանք տասնուերեք հատ են։ Նրանք բոլորովին լեռնոտ են։ Պիկ-Տիներիֆ կոչուող լեռը, աշխարհիս լարձր լեռներիցը մեին է համարվում։ Նրա գագաթները յաւիտեան կան ձիւնով ծածկուած է։

Աւելցը ես այնպէս կարծեցի թէ նա կայծակնացայտ ամպ է։

Ս. ռհասարակ այդ կղզիների ափերը բարձր են, իսկ ժայռերը բերդի նման են։

Նրանցից ամենամեծի վերայ երկու կամ երեք անգամ միշտ հունձ է լինում, դուրս է գալիս շաքարի եղեգն և խաղող։

Սեխը, խնձորը, տանձը, խուրման և կանարիան կղզիների դեղձը անչափ համեղ են։

Վերջապէս մենք Ջիբլարտարի վերայ երևացինք։ Ժայռը, որի վերայ քաղաքը շինած է, 1,500 ոտը բարձրու-

Թիւն ունի։ — Զիրլարտարը Խապանիայում է գտնվում, մի-ջերկրական ծովի մօտումը, Եւրոպայի ամենահարաւային ղլխումը։ Նա գաղղիացիներին է պատկանում և սաստիկ ամրացրած է։

Զիրլարտարի նեղուցը Ատլանտեան ովկիանոսը միացնում է միջերկրական ծովի հետ։ Նրա լայնութիւնը, ամենանեղ տեղումը 15 մղոն է։ Միջերկրական ծովը 2,000 մղոն երկայնութիւն ունի, մի քանի տեղերում 200 կամ 300 մղոն լայնութիւն, բայց ուրիշ տեղերում աւելի շատ։

Այդ ծովի ափերը շատ գանազան երկրների է պատկանում և քաղաքներով և գիւղերով լիքն են, համ ժողովրդական մեծ վաճառականութիւն են անում Միջերկրական ծովի վերայ։

Մեր ճանապարհորդութիւնը իսկապէս շատ յաջող էր։

Հաղիւ կ'պատահի, որ միջերկրական ծովի վերայ նաւը առանց փոթորկի գնայ, բայց մենք 40 օր յաջողութեամբ գնացինք Սիկիլիայ, որը Իտալիայի և Աֆրիկայի մէջ տեղը գտնուող Միջերկրական ծովի ամենամեծ կղզիներիցը մէկն է։

Սիցիլիայումը կլիման գեղեցիկ է, ծովային զովացուցիչ քամին ամառնային տաքութիւնը մեղմանում է։ բայց այդ պատճառաւ էլ լինում են երկրաշարժութիւններ և երբեմն էլ մեծատակար քամին փչում է, որը Սիրոկկոյ է կոչվում։

Այդ կղզին շատ արդաւանդ է և աղի աղբիւրներ ունի։

Այդ տեղից դուրս են տանում։ արքէշում, ցորեն, աղ,

գէյթունի լեռ, գինի և ուրիշ պտուղներ, նոյնպէս այծի և ուրիշ շատ կենդանիների մորթիք։ — Սիկիլեայի էտնա լեռը աշխարհիս ամենաբարձր հրաբուխ լեռներիցը մեկն է։ Հրաբուխ լեռները դուրս են գոյում ծուխ, կրակ, մոխիր, և հեղանիւթ։

Սոյդ վիժում է կոչվում։—Երան գլխի ճեղքը, որից այս բոլորը դուրս են թափվում, կոչվում է խառնարան կամ բաժակ։

Մէկ անգամ գիշերը մենք մի աղաղակ լսեցինք լերան վերայ, որը կայծակի հեռու խփելու ձայնի նման էր։

Շուտով հրաբուխի բաժակից բոց երևեցաւ, որը ինչպէս բոցեղէն սիւն բարձրացաւ դէպ ի երկինքը և շրջակայքը պարզ լուսաւորում էր։

Սև թանձր ծուխը հրաբուխի բաժակից դուրս էր գալիս, բայց բոցը շուտով ոչնչացաւ և սիւնը կարծես թէ լերան մէջ տեղը կոտրուեց։

Այն ժամանակը բոլորովին խաւարը տիրեց։—Կարմրացած տաք քարերը արագութեամբ թափվելով խառնարանից, և ընկնելով բարձր օդի մէջը թափվում էին լերան շրջակայքումը, յետոյ ահագին հեղանիւթի կարմրացած տաք կոշտերը դրսի կողմից գլորվում էին և լերան վրից ներքև էին թափվում։ Դա սաստիկ շառաչելով գետի նման հոսում էր և ոչնչացրեց գիւղերը։ Բնակիչները շտապով աղաւոուեցին, նրանք, որոնց նա հասաւ, կորան։

Նաւը էլի մի քանի օր ծխում էր, բայց հեղանիւթը հասելուց շուտով դադարեց։

Սոյն վիժումը բաւականի շուտ շուտ է լինում։

Իտալիայումը երկու քաղաք են բացաբաց, որոնք վեսուվ լերան հեղանիւթովը սրանից 2,000 տարի առաջ ծածկուեցան։

II.

Պարզեն կրկին Ամերիկայ է գաղթս, երբեմն քարեն հասնում է։ Ես առաջվանից ձեռքն է գնացում։

Նաւը բարձելով, կրկին մենք ճանապարհ ընկանք դէպ՝ի Ամերիկայ, բայց երկու օրից յետոյ մեզ քամին հատաւ։ Սաստիկ քամին և ահագին ալիքները այնպէս էին շարժում նաւը, որ երկու կայմերը կոտրեցին և ծռին ընկան։ Նաւը յառաջ քշել անկարելի էր լաստրում հոսանք երևեցաւ, այսինքն նրա կողքերումը ճեղքեր բացուեցան և ջրնայելով ջրհանի ջուր հանելուն, նաւը բոլորովին ջրով լցուեց։ Նաւի գլխաւորը հրամայեց նաւը թեթևացնել և բեռի մեծ մասը ծովն ածեցին։

Գիշերը քամին սաստկացաւ և նաւը անողոքմտաբար սկսեց շարժուիլ։

Ասի գլխաւորը ամեն կերպով աշխատեց նաւակը ապատել, քաջալերում էր նաւավարներին. ինքը օգնեց նրանց, բայց բոլորը 'ի զուր էին։

Կայծակը նաւին խփեց կառգցեց թողած առագաստը, բայց հրաձգութիւնը դադարեցնելուց յետոյ մենք մի աշխատասէր հնարք ձեռք բերինք, հենց միևնոյն ժամանակը մարդկերանց մեծ մասը ծովն ընկան։ Քան մարդիցը մեր նաւումը միայն հինգ մարդ մնաց։ Ես իմ 'կողմիցը բոլորովին չէի մոռանում մինչև միւս օրը ապրել. այսուամենայնիւ առաւօտը վրահասաւ և նրա հետ մեր յոյսն էլ կենդանացաւ։

Արեգակը իւր տաք և պայծառ ճառագայթները գցեց։ Մեր նաւը հենց մի ափրակէր ներկայացնում։ — Անդադար ջրհանովը մենք աշխատելով, հազիւ նաւը ջրի մակերևոյթի վերայ պահում էինք։

Յանկարծ մեր մտ տեսանք մի նաւակ, որի տեսքը մեզ համար ամենայն փոթորկից էլ վնասակար էր։

Մենք խմացանք, որ նրա միջումը ծովային առագաստներ կան, այսինքն մի նաւ, որ ծովի վերայ նաւավարելով բռնում է և յափշտակում է միւս նաւերին։

Ինչպէս մեր թշնամու նաւակը փոքր էր, այսպէս էլ մենք վճռեցինք նեռներով և թիերով շրջապատել, պահպանուիլ մինչև մեր արեան յետին կաթիլը։

Առագաստները շատ մօտեցան և չնայելով բարձր ալիք-

ներին, շուտով մեզ մօտ երևացին։

Հինգը կամ վեցը նրանցից մեզ մօտ եկան, նաւի մէջն երեքին մենք խսկոյն ապանեցինք, երկուսին ջուրը գցեցինք, բայց նրանց յետևիցը շատերը եկան։

Մեր նաւի գլխաւորը դուրսը վերաւորվեց, ինձ էլ գրեխս խփեցրել հարուածներին, ճնայածներին էլ կալան։ Մեր բեռների թանկագին մասը և հենց մեզ էլ աւազակների նաւի վերայ դրին, բայց մեր նաւակը մի քանի տեղ ծակեցին, այն պատճառաւ խսկոյն նաւը ջրի տակն արաւ։

III.

Պարզէյեն Տրիպոլիս եկի տանում եւ բանտումը նստացնում եկի։

Մեզ բռնող աւազակները Տրիպոլեցի էին, որ Աֆրիկայի հիւսիսային ափումն է գտնվում։

Երա գլխաւոր քաղաքը նոյնպէս Տրիպոլիս է կոչվում,— Առհասարակ այն տեղի ժողովուրդը խառաբիրա է և անկիրթ։

Հինգ օրից յետոյ մենք Տրիպոլիս հասանք։

Մեր նաւի գլխաւորը շատ ջարչարվում էր իւր ստացած վերքերիցը, երա հետ և մեզ հետ խիստ էին վարվում։ Զինուորները մեզ նաւիցը հանեցին և մի մեծ քարից շինած

շինուածեան մէջ տարան, — նա բերդն էր։ Այսուհետև մի մութ սենեակում մենք չորս օր դարձեալ հացի ու ջրով մը-նացինք։

Յետոյ մեզ զինուորներով քաղաքը անցկացրին։ — Ինա-կիչները երեսի դոյնով Ամերիկացի վայրենիներին նման էին, բայց նրանց հագուստը ինձ բոլորովին օտար էր թվում։

Տրիպոլսի քուչաները սասիկ նեղ էին, անները կտուր-ներն էլ բոլորովին տափակ։ — Մեզ միւս բանտը դրին, ինձ բանտարկեցին մի առանձին սենեակում, որ միայն պատի մէջը նեղ ճեղքաձև լուսամուտն էր լուսաւորվում։

Այս տեղ լոկ հաց ու ջրով ևս մի շաբաթ բնակուեցի։

Բանտի պահապանը մեզ հետ այնպէս էր վարվում ինչ-պէս անմիտ կենդանու հետ։

Չ'գիտենալով տեղական լեզուն, ես չէի կարողանում մինչև անգամ իմ կոպիտ վերակացուցիչը ոչինչ խնդրել։

Ինձ ապառաղ բաղդը ես չէի իմանում, բայց ես իսկա-պէս գիտէի, որ ինձ 'ի մահ կ'դատապարտէին։

Այնու ամենայնիւ առանձնութիւնը ինձ այնպէս նեղաց-րեց, որ ես ուրախութեամբ մահ յանձն կ'առնէի, որ գէթ նրանով, մի բոպէ տեսնէի բաց երկինքը և ծծէի պարզ օդը։

Բայց ժամանակն անցնում էր, այլ ես բանտարկած էի։ Իմ միակ զբաղմունքը էր սարդը, որը իմ լուսամուտի վերայ սարդոստայն էր գցել։

Մէկ անգամ գիշերը ես լուսամուտը մի աղաղակ լսեցի Աստուծոյ ես էլ ոչ սարդը գուցէ և ոչ սարդխոտայն և ես երեխի նման լացէի լինում, որ իմ միակ ընկերիցը զրկուեցի։ Հետևեալ գիշերը ես կրկին մի աղաղակ լսեցի, բայց երրորդ գիշերը ինձ արդէն թուեց, թէ որ և իցէ մի մարդ ինձ հետ լուսամուտիցը քշփշում է, բայց ես ոչինչ լաւ չկարողացայ նկատել։

Յետոյ երկու ամբողջ շաբաթ էլ ես աղաղակ չլսեցի, որ իմ մէջը մի թոյլ յոյս էր զարթեցնում։ մէկ անգամ գիշերը երազում տեսայ, որ ես ազատուած եմ, և ծովակը նաւավարելով տուն գնացի։

Ծնողացս ուրախական ձայները ինձ պատահեցին, բայց ես չգիտեմ, զոհացայ Աստուածանից իւր ինձ ազատութիւն տալու համար և . . . . . Յանկարծ զարթնեցի։ Էլ երկար ես չկարողացայ իմանալ թէ որտեղ եմ ես գտնվում։—Բայց վերջապէս, մանկ տալով իմ լուսամտիցը խնացայ, որ ես բանտն եմ դրած։ Հենց այդ մի և նոյն բոլէին ես դուռն մօտ մի չնչեցոց լսեցի, իբր թէ բանալին դրին և հանդարտ դռնափակը վերցրին։

Դանր երկաթեայ դուռը հանդարտ բացուեց։

Ոչ ոքի քայլերի ձայնը չէր լսվում բայց մի մարդ ինձ մօտկացաւ և քշփշաց. «Արի իմ հետևիցը։» Ես սառիկ զարմացայ, բայց վնասելի գնալ. մենք դուրս եկանք և մեր հետևիցը դուռը փակեցին, յանկարծ մառիկ գետնի վերայ

քնած մի մարդ զարթնեց, վեր թռաւ և յարձակուեց իւր թրոյը իմ առաջնորդի վերայ, որ ձեռնափայտով նրա գլխին առատիկ խփեց, որից նա վեր ընկաւ:

Մի նեղ ճանապարհով մեք մի բաց տեղ դուրս եկանք, որը բարձր պատերով շրջապատած էր, նրա վրայի թոկէ սանդուխտոյը բարձրացանք և թռանք քուչեն:

Այդ տեղ պատի եռևից մենք լսեցինք մի ձայն. տեսանք փայլող կրակ:

Թռաւ, թէ իմ փախչելը նկատուեց: Իմ ընկերը քայլերը երկարացրեց և մի քուչեցը միւս քուչան պատելով, ինձ տարաւ բանտիցը հեռու մի տուն:

Ինձ միայն մի մութը նստացրին և հրամայեցին հանդարտ նստել: Այդ անցյալ գիշեր մէջը ես մի քանի ժամ մնացի, վերջապէս մի կին եկաւ մոմը ձեռքին և ինձ հետ այն տեղն լեղուաւ խօսաց. բայց տեսնելով, որ ես ոչ ինչ չեմ հասկանում, ինձ խաչերէն ասաց, որ ես անհոգս կենամ և որ ինձ ոչ մի վատութիւն չեն անել:

Սիւս առաւօտը նա ինձ համար կերակուր բերեց և ինձ առաջարկեց, որ իմ ազատողն և իմ սիրելի ապահովութեան համար, ես պէտք է մի քանի ժամանակ այդ տեղ նստակումը մնամ, յետոյ աւելցրեց, որ նա շուտով կ'գառնայ, և բոլորը ինձ կ'պատմի:

Այդ կնոջ զրոյցներից ես շատ բան իմացայ այն բնակիչների և հենց այն կողմի մասին, որի մէջը գտնվում էի:

IV.

Աֆրիկայի հանրագրագրութիւն։

Աֆրիկան Արևելեան ցամաքի մի մասն է և Արևմտեանից, այսինքն Ամերիկայից բաժանվում է Ատլանտեան ովկիանոսով։ Հիւսիսից մինչև հարաւ 5,000 մղոնի չափ տարածվում է, բայց արևմուտքից մինչև արևելք 4,600 մղոն։

Նրա միջի բնակիչները համարում են 160 միլիոն։

Նրանցից գլխաւորները Արաբներն են, Նեգրաները և մի քանի ցեղեր, որոնք այդ երկու ժողովուրդներից խառնորդ են։—Աֆրիկայի հարաւային վերջաւորութիւնը կոչվում է Բարեյուսոյ գլուխ։

Հիւսիսումը գտնվում են, Տրիպոլի, Տունիս, Ալժիրի և Մարոկկոյի տերութիւնները, որոնք բոլորը իմիասին Բերբերատուն են կոչվում։

Այս տեղի բնակիչներից Մավրներն են, որոնք Արաբների նման են։—Նրանց մէջը շատ անգերի-նեգրաներ կան, որոնց միջին Աֆրիկայից են բերել։

Տրիպոլիսը, Տունիսը, Ալժիրը, և Մարոկկոն, միևնոյն անունով տերութիւնների գլխաւոր քաղաքներն են։

Բերբերատանից հարաւ Սահարայի մեծ անապատն է

գանվում՝, որը 2,500 մղոն ձգվում է արևելքից դեպ՝ի արևմուտք և 700 մղոն էլ հարաւից դեպ՝ի հիւսիս։

Պարզի է նրա միջոցը միայն ուղտաներով ճանապարհորդել, բայց այդ էլ շատ վտանգաւոր է, որովհետև քամին շատ անգամ աւազի լեռներ է բարձրացնում, մէկ տեղից նրանց միւս տեղն է քշում և նրանց տակին ճանապարհորդներին թաղում է։ Բացի դրանից այն տեղ Արաբները թափառում են, որոնք անցուդարձ անող քարվանները թալանում են։—Դարձեալ դէպ՝ի հարաւ Նիգրիտեանների համար նիգրոների երկիրն է գտնվում։

Նրա միջումը դիւղեր կան, որոնց միջումը դարբիններ են բնակվում. նրանք մօտիկ լեռներից երկաթ են հանում և նրան հենց այնտեղ պատրաստում են։ Այդ երկրումը հաց և բամբակ շատ կայ։

Նեգրոստանի մայրաքաղաք Կոլֆումը, երկնքումը լուսինը նորած ժամանակը, որին ուրախական ձայնով բնակիչները ողջունում են, նրանք բամբասան կոչուած մեծ պարը վերջացնում են. միւս օրը ողջ քաղաքը մի ընդհանրական տօնախմբութիւն է կատարում։—Այնտեղ իրանց լաւ շորերը հագնում են, հիւր են գնում համ ուրիշ տեսութիւն եկածներին ընդունում են, տաքիս են համ ստանում են ընծաներ. միւսները քուչաներումը զբօսնում են, փողեր են փչում այնպէս կիթառներ, սրինգներ, մի քանիսը ծառերի շուքի տակը համ իրանց տան դուռն մօտ նստում են։

Նոյնպէս կանայքն էլ շատ զարդարուած են լինում, նրանք մազերը ածղրում են, հիւսում են և լեղակով ներկելով զարդարում են։—Նրանք իրանց ունքերը նոյնպէս լեղակով ներկում են, շրթունքները դեղին, բայց ատամները կարմիր դեղով։ Նրանք իրանց վիզը գցում են կեղծեալ մարգարիտներ, ձեռները և ոտները շուշեայ, պղնձեայ և արծաթեայ ապարանջաններ, իսկ մատներումը մատանիքներ։

Ամերիկայի արևմտեան ափումը Գվինէան է գտնվում, որի բնակիչները նոյնպէս Նիգրաներ են կոչվում, Ամերիկայուց գերիների մեծ մասը Գվինայիցնէ բերած։—Բարեյուսոյ գլխի մօտ Նիգրաների սերունդն է բնակվում, որ յայտնի է Հօտենտոտ անունով։

Հենց գլխի վերայ Կապ քաղաքն է շինած, ուր Անգլիացիք են բնակվում։—Նրա մօտերքումը Անգղիացուց շատ փոքրիկ գիւղեր կան։

Ամերիկայի արևելեան ափերում Նեգրոներն բնակվում, որոնցից ամենաարևելքը Կաֆիներ են կոչվում։—Կաֆրների երկրիցը դէպ՝ի հիւսիս, գտնվում է Եթովբեայ լեռնոտ երկիրը։—Նեղոսը, որը աշխարհիս ամենամեծ գետերիցը մէին է, իրան ակիզբը այստեղ է առնում, անցէ կինում. Նուբեայովը, Եգիպտոսովը, ջրում է այդ երկիրները և Միջերկրական ծովն է թափվում։

Տրիպոլսոյ գաւառի վարչութիւնը։

Տրիպոլսոյ տները քառանկիւն են մէկ հարկ բարձրութեամբ։— Դան կտուրները այնպէս տափակ են որ մարդիկը նրանց վերայ մանեն զալիս և բոլոր տները այնպէս միմեանց մօտիկ են շինած, որ համարեա ամբողջ քաղաքը կտուրներովը կարելի է մանզալ։— Փուչաները նեղ են, ծուռը և աւազոտ։— Բոլոր ծանրութիւնները ուղտներով են կրում, որոնք պատճառ են դառնում անդադար փուչանեռումը թոզ լինելուն։

Քաղաքը մեծ է և պատերով շրջապատած է, նա երկու դուռն ունի. մէկը դէպ՝ի հարաւ., բայց միւսը դէպ՝ի հիւսիս ծովի վերայ։

Քաղաքի արևելեան կողմումը մի բերդ է զանվում, որի միջումը բնակվում է կառավարիչը կամ փաշան։

Նրա իշխանութիւնը անկախ է։

Տրիպոլսոյ գաւառը դէպ՝ի հարաւ գտնուող Ֆեզան երկիրներն էլ է նրան պատկանում։— Փաշաները զգուշանում են ժողովրդեան աղմուկներից և այն պատճառաւ. այն բերդը, որի միջումը նրանք բնակվում են, միշտ բարձր պատով շրջապատած է։

Փաշաների կանայքը բերդի առանձին մասումն են բնակվում, նրանք փառաւոր հագնվում են, պճնուած են ոսկեայ կամ արծաթեայ զարդերով, բայց միշտ բանտարկած են տանը և գերիների նման են բնակվում։

Տրիպոլսումը բնակուողները ըստ մեծի մասին Մավրներն են, նրանք երկար կաբաներ են հագնում, լայն անդրաւարտիք, դեղին կոշիկներ. և գլխարկի փոխանակ շալմայ— Կանայքը ոտից մինչև գլուխը այնպէս են փաթաթուած, որ նրանց երեսը չի տեսնվում. նրանք անպատշաճ են համարում կանանցը բաց երեսով քուչումը մնդալ։—Ամառը շատ շոքէ այնտեղ, բայց աշունքը մի քանի օր յորդահոս անձրև է գալիս, յետոյ ամբողջ մի քանի ամիս ստատիկ չոր է լինում։

Տրիպոլսումը շատ Հրեաներ կան, Մավրները շատ անհոգ են և դորա համար է որ Հրեաները համարեայ բոլոր վաճառականութիւնը և գործերը իրանց ձեռքն են առել։ Միանգամայն չնայելով դորա վերայ, Մավրները նրանց արհամարում են և շատ թշնամութիւններ են անում նրանց, և խեղճ Հրեաները չեն էլ համարձակվում դանդատել անգամ։

Այսուամենայնիւ քրիստոնեաների հետ Մավրները շատ լաւ չեն վարվում։—Երանք Մահմեդին չեն հաւատացողներին արհամարհում են և չեն համարում իրանց պարտաւորութիւն իրանց տուած խոսքը պահպանել, կամ մարդասիրութեամբ վարուել։

VI.

Տուգիս, Սիժիր, եւ Պարոկկո:

Սիժիրի տերութեան գլխաւոր քաղաքը Սիժիր է կոչվում: Նրանց առաջ դէին էր կառավարում, որի իշխանութիւնը այնքան անսահմանափակ էր ինչպէս փաշի իշխանութիւնը, այժմ Գաղղիային է պատկանում բոլոր Սիժիրի տէրութիւնը:

Այն տեղի կլիման այնքան բարեխառն է, որ ամենատեղ յաւխտենական կանանչ կ'տեսնես. ամառը շոքիցը տերևները չորանում, բայց ձմեռը ցրտիցը չ'են թառամում:— Քաղաքը լեռի դոշումն է շինած, երեսը դէպ'ի ծովը ամփիթեատրի ձևով, շինութիւնները, մէկը միւսի վերայ բարձրանալով, մի հրաշալի տեսարան են ներկայացնում և բոլոր տները, սպիտակ գոյն ունենալով, հեռուից ամբողջ քաղաքին մի մեծ նաւի առաստաղի տեսք են տալիս: Շատ տներ փոքր այգիներով շրջապատուած են:

Տների կտուրները նոյնպէս տափակ են և նոյնպէս միմեանցից կապած են ինչպէս Տրիպոլսումը, և նրանցով համարեա թէ կարելի է ողջ Սիժիրը մանզալ:

Այսուամենայնիւ Սիժիրի տները աւելի գեղեցիկ են և արձակ, քան Տրիպոլսինը և ժողովուրդն էլ այնքան կոպիտ և խառնակիրտ չեն:

Սլժերեցիք, հնայելով հզոր Եւրոպացւոց տիրապետողների ապառնալիքներին, երկար ժամանակ ծովային առաւելութեամբ ապրում էին և 'ի զուր էին Եւրոպացիք աշխատում նրանց առել հեռանալ այդ գործիցը։— Վերջապէս երբ Անգլիացւոց նաւատորմիղը եկաւ, սատեց դէմն։— Դա խստացաւ աւելութիւնը դադարեցնել, բայց շուտով իրա տուած խօսքը խանգարից, այն ժամանակը Էկամուտ Լորդը մեծ նաւատորմիղով երևեցաւ, նրանց նաւակները ջարդեց և Սլժերի նաւահանգստի ամրութիւնը ոչնչացրեց։

Յաղթուած դէմն նուաճուեց։

Յետին ժամանակներում Գաղղիացիք Սլժիրը նուաճեցին, որ այժմ և սրանց իշխանութեան տակն է գտնվում։— Մարոկկոյի տէրութիւնը նոյնպէս բաւական ընդարձակ է, Թագաւորը Մարոկկոյ գլխաւոր քաղաքումն է բնակվում, որը որ պտղատու դաշտի մէջն է գտնվում և շքեղ, բարձր ձիթենի անտառներով շրջապատուած։ Քաղաքը ամուր պատով շրջապատած է. Թագաւորական պալատը մի հրաշալի շինութիւն է։— Անթիւ Մէշիթներ կան։ Այդ երկրումը առատ է ոսկեմիրը, Թուզը, ձմերուկը, ծիրանը, դեղձը. խաղողը, տանձը, սալորը, նուռը և շքեղ ծաղիկներ։

Քաղաքիցը քառասուն մղոն հեռու յատխանական ձիթենով ծածկուած լեռներ կան. նրանք այնչափ բարձր են, որ ծովիցը 20 մղոն հեռու երևում են։

Սառաջ նրանց Սարաս էին կոչում և աշխարհումն ամենանախարձր լեռն էին համարում։—Այդ լեռների բնակիչները Բերբերներ են կոչվում։ Նրանք անառնապահութեամբ են զբաղվում, բայց ձմեռը իրանց հօտի հետ 'ի միասին այրերումն են բնակվում։

Նրանց լեզուն Մավրների և Արաբների նման չէ։

Մարոկկայի սերութեան մէջ բայի Մարոկկոն շատ քաղաքներ կան. Նրանցից ամենամեծ ցեղն է, որի միջումը հոյակապ մեչտներ և առհասարակ շատ շինութիւններ են գտնվում։ Տունախ սերութիւնը Բերբերատանի երկրներից ամենախոքին է, Բէի կամ նրա կառավարիչը Տունիս գլխաւոր քաղաքումն է բնակվում։

Տունիսի մօտ հին Կարթագին քաղաքի աւերակներն են գտնվում։ Կարթագինը երեք լեռների վերայ էր շինած, շրջապատած երեք ամուր պատերով և 15 մղոն էր շրջապատը. բնակիչների թիւը 10,000։ Այս քաղաքը 400 տարուայ ընթացքում ծաղկում էր, վերջապէս Հռովմայեցիք, շարունակ պատերազմից յետոյ, նրան առան և այրեցին։—Այժմ ոչինչ չի մնացել փառաւոր Կարթագինից՝ բացի աւազաններից։—Կլիման Բերբերատան երկրներում առհասարակ գեղեցիկ է, հողը արգաւանդ է, պտուղների առատութեամբը բնութիւնը աշխարհիս ամենաչքնաղ երկիրներից մեկն է շինել այդ կողմը, բայց նրա բնակիչները վայրենի են և անկիրթ։

VII.

Պարկեն իրան հին ծանոր ազգի-տողին ճանաչումն:

Ես երկու ամիս բանտարկուած մնացի։—Ես ոչ մի կերպով չ'կարողացայ մտածել, թէ ով էր իմ ազատողը և թէ ի՞նչը նրան ստիպեց այս վտանգի մէջը ինձ համար ենթարկուիլ։

Վերջապէս մէկ անգամ գիշերը, մի շինելում փաթաթուած մարդ ինձ զարթնացրուց, ինձ հրամայեց հագնուիլ և նրա հետևիցը գնալ։—Ես հնազանդուեցի։ Զանազան ծուռը մուռը տեղերով և նեղ ճանապարհներով մենք հասանք մինչև քաղաքի դուռը։ Իմ առաջնորդողը դռնապանին մի քանի խօսք ասաց, որը խսկոյն բացարաւ դռնակը և մենք երևացինք գեսի ամի ճանապարհումը։—Անծանօթը թափանչան դցեց, խսկոյն մի չորս—թիսական նաւակ եկաւ, որուն մէջը մենք նստեցինք և նաւավարեցինք սասիկ արագութեամբ։

Մօտ երեք մղոն գնալուց յետոյ, մենք տեսանք մի փոքրիկ երկու կայմն ունեցող նաւակ, որը, թեռում էր, մեզ էր սպասում։ Մտնելով նրա մէջ, մենք էլի առաջ գնացինք։—Գիշերը լուսնակ էր, զովացնող քամին փչում էր և մեր նա-

ւակը արագութեամբ ալիքների վերայ թռչկոտում էր։

Զնայելով դրա վերայ, որ ես իմ վիճակիս մասին ոչինչ չ՝գիտէի, ես նաւի վերի հարկումը պարկեցի և մինչև առաւօտը քնեցի։—Բացանելով աչքս, ես իմ առաջս տեսայ մի թուխամազ և սևաչքը մարդ, որին, ինձ այնպէս էր թվում, թէ որ և ցցէ մի տեղ ես առաջ տեսել եմ։

Երբ նա խօսաց, ես ճանաչեցի որ Լիսն է, որի կեանքը ես Աղամանեան ովկիանոսումը ազատեցի և որը յետոյ, լինելով աւազակաց գլխաւոր, Ալպեան լեռներումը ինձ մի հարկաւոր և արժանաւոր ծառայութիւն ցոյց տուեց։

VIII.

Աւազակի պատմութիւնը։

Մենք Լիսնին 15 տարի էր, չ՝էինք տեսել, նա այդ միջոցումը բոլորովին կերպարանափոխուել էր, Նրա երեսի գոյնը բոլորովին սևորակէր, աչքերը արագատես, մազերը երկայն և ոլորած։

Իմիասին մնալով նաւի միջի նաւապետի սենեակը, մենք նստեցինք, և նա ինձ պատմեց իրան անցքը։

Ալպեան լեռներում աւազակաց ժողովի գլխաւոր էի և կարող եմ գոհանալ, որ միշտ ճանապարհորդների հետ խիստ չ՝էի վարվում, նրանցից յափշտակում էի փող և ապ-

բանքներ, բայց ոչ մի ժամանակ ոչ ոքից հարկաւորութեան ոչ ոքի չէի ապտնում։

Գործը վատ չէր գնում. բայց իմ վերայ մանաւոր զանգատների ցաւակցութեան համար սկսեցին միմեանց տէրութիւնը յայտնելու, որ իմ ժողովի դէմ ուղարկեց հապար վինուոր մարդ։—Մենք թուով բոլորս 50 մարդ էինք. և մենք վճռեցինք լեառներումը թաղչել, ուր անցնում էին օրերը այրերի մէջ. միայն գիշերը յարձակւում էինք ճանապարհորդների վերայ։

Այսուամենայնիւ, փոքր առ փոքր մեզանից մի քանիսներին բռնեցին, մեռածներին ապտնեցին, բայց իմ բռնողի համար խոստացել էին 1000 մանէթ ընծայ։

Իմ ընկերներիցը մէկը դրանով խաբուեցաւ և վինուորներին իմ բնակարանը բերուց։—Ես անձնատուր էլայ, ինձ տարան վենետիկ և վճռեցին որ թվանքով ապտնեն, բայց առաջ բանտումը դրին, որը ծռվի ախուռն էր գտնվում։

Մի օրը իմ մահուան վճիռը յայտնելով, կէս գիշերին ես կամեցայ փախչելուս փորձ առնել։

Նայելով անեակին, ես նկատեցի լուսամտի մօտ մի երկաթեայ վանդակ, որ բուսակոնի բարձր էր. ինձ վանդակին ձեռքով կպնելու համար, հարկաւոր էր թռչել, որ ես արի, բայց զարմանքն այս է, որ նա կոտրվեց և ես նրա հետ 'ի միասին ընկայ գետնի վերայ։

Այդ ինձ առեց մի քաշուութիւն, ես կորցրի միւս գե-

բանը, զբաղեցրեց գրաբար հանդերձի լուսամաստիցը, յուսալով թըռչել նրանով և փախչել։ — Սէջք գցելով նեղքեւ, ես տեսայ ծովը, բայց աւաղ. լուսամուտը քչնին սանդք 40 ոտը բարձր էր ջրի մակերեւութիցը։ — Երկար մտածել արդէն չէր կարելի։ — Լաւ լոգայ խմանալով, ես ջրի մէջ ընկայ, լոգացի մինչեւ նաւահանդիստը, մի նաւակ վերցրի և ծովով ճանապարհ ընկայ։

Զ'հանդարձակուելով մերձենալ խաղիայի ափերին, վնեանի նեղությամբ նաւ նստեցի, որ Եգիպտոս էր գնում, և զինուոր մնայ Եգիպտոսի փաշային ծառայելու համար։

IX.

Եգիպտոսի նկարագրութիւնը։

Եգիպտոսը տաճկաց տուրքանին է պատկանում։ — Եգիպտացւոց փաշան միայն կառավարիչ էր. բայց մամելիւքները նրա զինուորներն են։ — Նրանք վառաւոր հագնուած էին. և լաւ լաւ ձեռներ ունէին, կատաղութեամբ կռվում էին, նրանց մեծ մասը ինձ նման օտարական էին։ Ես մի քանի տարի կարգով այնտեղ ծառայեցի և Նապոլեոնի դէմ պատերազմեցի, որ գաղղիական բանակով իսկապէս Եգիպտոսը կ'նուաճէր, եթէ որ Անգղիացիք նրա նաւերի խումբը չըջարդէին։ — Եգիպտոսը բաժանվում է ստորին և վերին։ — Միջերկրական ծովի ափերի երկայնութիւնումը, այսինքն,

ստորին Եգիպտոսումը, բուն հողը տափակ է, և ճանապարհորդը բացի փոքրիկ խրձիթներից և մի քանի արմատենի ծառերից ոչինչ չի պատահել։

Այդ ընդարձակ հովտումը անցել կենում Նեղոս գետը Մեջերկրական ծովը թափուող, շատ վտակներով։ — Նեղոսը ամեն տարի վարարվում է և դաշտերումը թողում է ցեխ կամ տիղ, որը օգտում է հողին, և դրանից է որ նա պտղատու է դառնում։— Այդ հովիտը այժմ նեղացել է, որովհետև գետի մի քանի վտակները կուրացել են. բայց առաջ նա եռանկիւնի ձև ունէր և կոչվում Դէլտայ. ցուցնաց տառի անունովը, որ միևնոյն ձևն ունի։ — Համարեա թէ Եգիպտոսի կէսը ամեն տարի ջրով ծածկվում է, այդ հողերը Մովսէսի ժամանակից դէսը, այսինքն երեք հազար տարուց աւելի, ամէն տարի առաջ հունձ են տալիս և շատ անգամ երկու։

Ստորին Եգիպտոսի գլխաւոր քաղաքը Աղէքսանդրիայ է կոչվում։ Նրան սրանից 2,000 տարի առաջ շինել է երևելի Աղէքսանդր Մակեդոնացին։

Եւ այժմ էլ շատ աւերակներ կան, որոնք յայտնում են այդ քաղաքի առաջուան նշանակութիւնը։

Այստեղ ամենայնիւ շրջակայքումը վեց մղոն հեռաւորութիւնամբ երևում են առաջուայ շինութիւնների աւերակները, արձանների բազմութիւնները և կոթողները։

Մէկ կոթող առանձնապէս երևելի է, նա տաշած է մէկ

քարից 17 ոտք բարձրութիւնն և բոլորովին ծածկուած է փո-
րագրած նկարագրութիւններով, որոնք կոչվում են հիերոգլի-
հիերոգլիֆները հին եգիպտացւոց նշանագրութիւններն են,

Քաղաքները մօտիկ շատ հին ժամանակուայ գերեզմանա-
տուներ կան, որոնք ստորերկրեայ դամբարաններ են կոչվում։

Նրանց մէջը և այժմ էլ գտնվում են մարդկերանց դիակ-
ներ, որոնք սրանցից երեք հազար տարի առաջ թաղուած
են։—Այդ դիակները զմռսած են, նրանց մոմեայ են կո-
չում։

Կայրոն էլ նմանապէս ստորին Եգիպտոսի գլխաւոր քա-
ղաք է. նրա ծուռը քուչեքը միշտ մարդկերանցով, ձիաներ-
ով, ուղտերով, էշերով և շներով լեցնեն, որոնցից թոյն
ամպէ կանգնում։

Կայրը Աֆրիկայի ամենամեծ քաղաքն է, նրա միջի
բնակիչները շատ են քան թէ Մարոկկայի։

Վերին Եգիպտոսը ստորինից դէպ'ի հարաւ է գտնվում,
Նեղոսի արևմտեան կողմումը, աւաղ որ անապատի մէջը
գտնվում են բուրգեր—ամենաերևելի շինութիւններ աշխար-
հիս վերայ։

Նրանցից ամենաբարձրը համարեա թէ հինգ հարիւր ոտք
բարձրութիւն ունի։—Ասում են որ նրանք Եգիպտացւոց
թագաւորների գերեզմաններ են էղել, և շինուած են էղել
մինչև առաջին փարաւօնը։

Չկղէի բուրգերը քաղաքաւն մէջն Կայրիցը հեռու են

զանվում։ — Այն ճանապարհը, որ տանում է դէպ՛ի Նրանց, ախորժելի է. նա գնում է երբեմն աւազոտ տեղերով, երբեմն արմատներ և եղանի անտառներով։ — Այդ բուրդերը բոլոր միւսներից մեծագոյն են, նրանք բուն անապատները 130 ոտք բարձրութիւն ունեցող ժայռերի վերայ են շինուած, նորա համար է որ և բոլորովին հեռու տեղից էլ երևում են։

Նրանցից ամենամեծն քառանկիւնի է, ամենայն կողմերից 746 ոտք լայնութեամբ, 500 ոտք բարձրութեամբ, այսինքն 24 ոտք բարձր է Հռոմի աւրբ Պետրոսի եկեղեցուցը։

Բուրդերի մէջը մտնելը հեշտ է և անվնաս։ — Նրանց մէջը մտնելու համար հարկաւոր է քարերի միջովը անցկենալ, որոնք վերևից ընկած են։

Աւելի դէպ՛ի հարաւ, Նեղոսը նեղ հովտով է գնում, լեռների շղթաների միջով։ Այստեղ դարձեալ երևում են հին ժամանակուայ զօրեղութեան մնացորդները։

Նրանցից ամենանշանաւորը Թէբայ քաղաքի աւերակն է, որը յայտնի բան է դերազանցվում էր իրա հոյակապութեամբ այժմեան բոլոր քաղաքներից։

Թէբայի աւերակը Նեղոսի երկու ափերովը տարածվում է, 30 մղոն տարածութեամբ։ Երկիրը ծածկուած է մեծամեծ արձաններով, կոթողներով և բուրդերի կարգերով։

Համարեա թէ անհերքելի է որ հին ժամանակը Եգիպ-

ասաք Հոյակապ քաղաքներու մէջ բնակող ժողովրդոյ լինքն էր և որոնք բոլորովին ուսեալ էին։

X.

Լիօի ալիքի վերջը։

Ես այնպէս լսացի հնութեան վերայ, որ մուացայ իմ սեպհական պատմութիւնը» Լիօն ասաց, և շարունակեց յեռեւեալ կերպով։ Իմ Եգիպտոս լինելու ժամանակը այնտեղ մի մարդ եկաւ Տրիպոլսի Յովսէփ փաշայի մեծ եղբայրը, Գամիդ—փաշայ անունով, և պատմեց որ Յովսէփը ապանելով հօրը և եղբօրը, փաշայ դարձաւ և թէ նա, Գամիդը, երկնչելով այնպիսի բաղից ծածուկ փախաւ։

Եգիպտացւոց փաշան շատ քաղցրութեամբ նրան ընդունեց և մինչև անգամ խոստացաւ էլ Գամիդին իրան օգնութիւնը։

Սրանից վեց ամիս յետոյ ինձ ուղարկեցին Տրիպոլիս և յանձնեցին ծածուկ խնամով. ի՞նչ կարելի է արած նրան օգուտ լինելու համար։

Ես գնացի ինչպէս մի սեպհական գործի համար, և ոչոք չ'կասկածեց ինձ տուած յանձնարարութեան մասին։

Պատահմամբ ես նաւահանգստումը տեսայ, երբ ձեզ բերին, և մոքուս դրի ձեզ ազատել, բայց միայն մեծ դբ-

աստուծամբս վնասելուց յետոյ զարդարանքով խնայեց ես թէ դուք որտեղ էք բանտարկուած։

Պարանեայ ամենուղի միջնորդութեամբ ես անցկացայ բանտի պատովը և երեք գիշեր մէկ մէկու հետևից ես ձեր լուսամուտ մօտ էի, բայց տեսնելով, որ այնտեղ ոչինչ չէր կարելի անել, վճռեցի գնալ դռների մօտ, ուր դռնապահին քնած գտայ, բացարի և ձեզ դուրս հանեցի։— Այն տան միջի կինը, որի մօտ յետոյ դուք բնակեցիք, ապզուկ խուալացի է. ես համարձակ կարող էի նրա մօտ թողնել։

Ես ամբողջ երկու ամիս զբաղեցի ինձ յանձնած գործով։ Այժմ մենք գնանք Եգիպտոս և եթէ ճանապարհային քամին շարունակուի, այն ժամանակը չորս օրուայ մէջ մենք այնտեղ կ'լինենք։—Այն ժամանակը ձեզ դժուար չի լինիլ նաև դանել և դառնալ քո հայրենիքը։

XI.

Թէ ինչպէս Դեկատուր Ամերիկացին այրեց «Փիլադելֆի» նաւը։

Ճանապարհին Լիսն ինձ պատմեց էլի շատ հետաքրքրական պատմութիւններ, բայց այնպէս, որ դուք կարողանաք նրանց հասկանալ, ես պէտք է առաջ այս հետագայ բաները պատմեմ։

Բերբերները Միջերկրական ծովումը մեքանի Ամերիկացոց վաճառական նաւէր էին բռնել, նաւասաների բաղմութիւնը կամ մարդկերանցը նրանցից հանեցին և բանտը դրին, կամ դատապարտեցին յաւիտենական գերութիւն հարկադրելով ծանր գործ կատարել։— 1803 թուին ամերիկացոց տէրութիւնը ուղարկեց մի քանի պատերազմական նաւեր, Միջերկրական ծովը, Պրիբլ ծովապետի առաջնորդութեամբ, նրանց հրամայելով վաճառականական նաւերը պահպանել և աշխատել իրանց թշուառացած հայրենակիցների ազատութեան համար։

Այդ պատերազմական նաւերից մէկը «Փեյլադելֆի» էր կոչվում։—Մէկ անգամ աւազակներին հետևելով նա խբրուեց Տրիպոլսի նաւահանգստի ծանծաղումը և բերբերների ձեռքն ընկաւ, որոնք բոլոր նաւասաների բաղմութիւնը բանտը դրին։

Յետոյ Տրիպոլսացիք նաւը ծանծաղից հանեցին և մոքբերումը դրին ամերիկացոց դէմ նրան պատերազմումը գործածելն։

Ամերիկացոց նաւախմբի Դեկատուր անունով երիտասարդ հակայ ատիճանաւորը, Պրիբլ ծովապետին առաջարկեց այրել «Փիլադելֆի» նաւը և նրանով Տրիպոլսացոց զրկել այդ նրանց համար հարկաւոր որսից։ Ծովապետը համաձայնվեց։ Դեկատուրը իրան հետ 20 մարդ վերցրեց։ Նրանց պահպանեց փոքրիկ նաւակի յատակումը և դիշերով գնաց նաւ։ի մօտ։

Բերբերները տեսան մոտիկանող նաւակին · բայց նրան իրանց կարծելով , թողեցին մինչև հենց նաւի մօտ ։

Թշնամիքը 30 մարդ էին ։ Դեկատուրը իրան 20 ընկերներով թռաւ նաւի վերնահարկը և այն ժամանակը պատերազմը սկսուեց ։ Տրիպոլացիքն շատ քաջութեամբ էին կռվում , Դեկատուրին կենաթաք արին և նրան գետնի գըցին ։ Արդէն նրանք իրանց վերայ սուրեր ունէին կապած , բայց ընկերներից մէկը նրան իւր տակին ծածկեց և նրա տեղ ինքը հարուած ընդունեց ։— Դեկատուրը վերկացաւ , կռուեց ինչպէս առիւծ և զոհանալով իրան քաջասիրտ ընկերներից , ոչ մի թշնամու կենդանի չ'թողեց և նաւը այրեց ։

Դեկատուրի մեծագործութիւնը ինչպէս և իցէ փառաւոր էր , բայց այսուամենայնիւ իսկապէս բանտարկեալ ամերիկացիներին օգուտ չբերեց ։— Ընդհակառակը չարացած փաշան աւելի ևս սկսեց այս յուսիններին ընկճել ։— Ամերիկացւոց կառավարութիւնը , զթաշարժ լինելով նրանց թշուառ դրութեան վերայ , ուղարկեց Լաոն գենեարալին Միջերկրական ծովը , հրամայելով նրան աշխատել ամենայն զօրութիւնով նրանց ազատելու համար ։

Լաոն գենեարալը իրան գալու ժամանակը . խնդրաւ Գամեմի վիճակը , գնաց Եգիպտոս , նրա հետ յարաբերութիւն ունեցաւ և նրան խօստացաւ օգնել նաւացնելու Տրիպոլի դահի վերայ , եթէ նա սրա համար խօսք տայ ազատել

Ամերիկացիներեն և Հիւսիսային Ամերիկայի հետ։

Գամեղը սիրով համաձայնուեց դորա համար, և Էոծն զեներալը խնդրեց սկսեց իրան դիտաւորութիւնները գործով առաջ տանել։

XII.

Պարիզի Եգիպտոս գալը եւ նրա անապատաւորութեամբ ճանապարհորդութիւնը։

Եւ այդպէս Էոծն ինձ ասաց, որ Էոծն զեներալը Եգիպտոսումն էր և թէ շուտով զօրքով ճանապարհ կ՚ընկնի դէպ՝ի Տրիպոլիս։

Ես ինձ ասատիկ սխալեց և համոզեց նրա հետ միաւորվիլ, ասելով թէ Գամեղը, որ Յովսէփի մեծ եղբայրն է, աւելի իրաւունք ունի գահի վերայ, որովհետև Յովսէփը, ապանեց հօրը և եղբօրը, անարժան է թագաւորել, և թէ այդ պատերազմի գլխաւոր նպատակը վշտակիր Ամերիկացիների ազատութիւնն է։

Ես նրան պատասխանեցի, թէ մինչև իմ Եգիպտոս հասնելը ես չեմ կարող մի կտրական խօսքը տալ։

Գալով Աղեքսանդրիայ, որ Սորին Եգիպտոսումն է, ես իմացայ թէ Էոծն ձեներալը իսկապէս այս տեղէ, և թէ մի

քանի Ամերիկացի նաւաստիներ պատրաստ են նրանց հետ ուղեգնացութիւն անել։ Ես յայտնեցի, թէ ցանկանում եմ նրանց հետ միաւորել, և մի շաբաթ չ'քաշեց, մենք արդէն Տրիպոլսի ճանապարհումն էինք։ Մենք պէտք է ա-նապատովը գայինք. մեր գեներալը հարիւր ուղտից աւելի քրեհեց բեռները կամ ճանապարհի ունելիքը փոխադրելու համար։

Մենք բոլորս մօտ 400 մարդ էինք, որոնցից շատ քչեր-նէին Ամերիկացիք. բայց մնացեալները—Մալրները, և Արաբ-ները գամեղ փաշայի առաջնորդութիւնով. մեքանիները ձիաներով էին, մեծ մասը ոտով էր։

200 մղոնից աւելի մենք ամայի անապատով գնում էինք չպատահելով ոչ մի բնակարանի։ Վերջապէս հասանք մի Արաբական թափառողների բանակ։ Նրա բնակիչները, ոչ մի ժամանակ չ'տեսած լինելով քրիստոնեայ, հուհուալով ծիծաղում էին մոտիկ տալով մեր շորերի վերայ որ նրանց սատիկ ծաղրալի էր թուում։ Նրանց մորթու գոյնը թուխէ, նրանք Մահմեդին են հաւատում և ընդունում են, թէ քրիստոնեայքը ապառնի կեանքումը նշանակուած են անշեջ հրով այրուել։—Առաջին անգամը ես տեսայ այս տեղ ընտանի ջայլամներ։ Ջայլամնէ համարվում աշխարհիս ամենամեծ թռչունը։ Նա ափրիկայումը և Ասիայի մի քանի կողմերումն է գտնվում։—Նա իրան հաւկիթները աւազումն է ածում և գիշերը նրանց վերայ նստում է, ցերեկը նրանց

արեգակը տաքացնում է, Ջայլամը չէ կարող թռչել, բայց ամեն ձիաներից արագ է փախչում։—Արաբները նմանապէս ունին վիթեր կամ թէ փոքրիկ եղջերուների մի տեսակը։ Նրանք շատ գեղեցիկ են, երկչոտ և շատ արագ են փախչում։—Առիւծները և վագրերը թփերի քամակին թաղչում են և նրանց որսում են ապէսպէս. ինչպէս կատուները որսում են մկներին։—Մեր ճանապարհորդութիւնս առանց դժուարութեան չէր լինել։—Տաքութիւնը խոնջութիւնը վատանկեալ, և ծարաւութիւնը մեզ չարչարում էին զինուորները կռվում էին, բայց գամեղ—փաշան և նրա մարդիքը, ճանապարհից մոլորուած, ոչ մի կերպով չէին երևակայում դարձեալ յետ դառնալ։ Նոյն ժեներալը այդ բոլոր ամրութիւնով կրեց, քաջալերում էր զինուորներին և համոզում էր գամեդին։—Բոլորից վատն այս էր, որ մեր պաշարը հատաւ, Մեզ Արաբները շրջապատել էին, որոնք ցերեկը թաղչում էին, բայց գիշերը գողութեամբ գալիս էին մեր բանակը և գողանում էին ձիաները։ Ո՛չինչ ուտելիք չունէինք, մենք բոլորս ցրուեցանք զանազան կողմեր, կերակուր կամ թէ գոնէ խոտ և տակուիք գտնելու։ Մէկ անգամ ես բաւականի հեռու գնացի իմ ընկերներից և բլրակների մէջ տեղը մի մեծ լիճ գտայ, ուր և թփեր կային դուրս եկած այնպիսի տեղեր են ոպպիաներ են կոչում։

Ես արագապէս այնտեղ վազեցի, յուսալով ծարաւ կտրել և գտնել ինչ և իցէ մի բան ուտելու, ինչպէս էլաւ

յանկարծ թփերի քամակից չորս մարդ դուրս թռան և ինձ շրջապատեցին։ Դրանք Արաբներ էին։ — Տեսնելով թէ ես անզէն եմ, նրանք հանդարտ սկսեցին անիրաւութեամբ ինձ իրանց սեփհականել, և իսկապէս ինձ վերայ ոչինչ չէին թողալ եթէ չէին տեսել հեռուից եկող չորս ձիաւոր մարդիկ։ — Այդ բանը ինձ ազատեց, նրանք ինձ թողնելով, նստեցին իրանց ձիաների վերայ և արագ գնալով փախան։— Եկող ձիաւորները իմ ընկերներն էին։ — Չնայելով մեր այս բոլոր աշխատութեանը, մենք չկարողացանք ոչինչ ուտելու բան գտնել և մաքներումս դրինք ուղտերիցը մէկին սպանել, նրա միւսը մեզ շատ համով թուեց։ Այդպէս մենք մեր ճանապարը շարունակեցինք և երկու ամսումը, վեց հարիւր մղոն անցկենալով, հասանք մինչև Դերեէ քաղաքը։

XIII.

Դերեէ, սիրօկկօ, պատերազմն։

Ընդարձակ, ծովափնեայ Դերեէ քաղաքը Տրիպօլսի փաշին է պատկանում. նրան բէյին է կառավարում։ Այստեղ մեզ հետ մի քանի ամերիկացւոց նաւեր միաւորուեցին։ Այդ նաւերը պէտք էին ծովի կողմիցը քաղաքի վերայ յարձակուիլ. բայց մենք միևնոյն ժամանակը կամենում էինք նրա վերայ յարձակուիլ ցամաքի ճանապարհովը։— Մեր կըռուի պատրաստութեան ժամանակը Փչից Սիրօկկօ քա-

մին, որ վերև էր բարձրացնում առաջը և նրան ցրվում օդի մէջը։ — Երկինքը պղնձի գոյն առաց։ — Մարդիքը և գազանները հառաչեա թէ շնչասպառ էլան, բոյսերը ծաղիկները, տերևները բոլորը ոչնչացան։

Այսպէ երեք օր քաշեց։ — Սիրոկկո քամին շատ փչում է Աֆրիկայի և Ասիայի անապատներումը և երբեմն գազանների և մարդկանք մահուան պատճառ է դառնում։

Երբ բոլոր պատրաստութիւնները արդէն տեսած էին։ յարձակումն սկսեցաւ։ — Նաւերը սկսին թնդանօթները գցել նրանց, որոտումն և գոռալն զարհուրելի էր։ — Մեր դէմ շատ բազմութեամբ Տրիպոլի զինուորները դուրս եկան և արդէն սկսեց սատիկ պատերազմը։ — Ժեներալ Խոնի ձեռքը վիրաւորեցին, բայց նա, թուի թէ, դրա մասին և ուշք էլ չդարձրեց։ բայց միայն հեռը շարունակեց հրաման տալով, վերջապէս երկար պատերազմելուց յետոյ թշնամին յետ փախաւ, մենք մնելով քաղաքը նրան առանք։ Երկնչոտ Ցոսէֆիը վճռեց ինչքան որ կարելի է շուտով ամերիկացիների հետ հաշտուել և մեր հիւպատոս Լերին առաջարկեց այն բոլոր ամերիկական գերիներին ազատել, եթէ որ ժեներալ Խոնը Գամեդ — փաշի օգնականութիւն անելուց յետ քաշուի։ — Վերը այդ բանին համաձայնեց, և մենք էլ պէտք է Գերմանիցը դուրս գայինք, և ճանապարհ ընկնէինք դէպ՝ի Մալտայ կղզին, որը միջերկրական ծովումն է գտնվում։ — Խեղճ Գամեդ — փա-

շան դաշնակիցներիցը թողնուած, էլ դահի վերայ բարձրանալու յոյս չունենալով և եղբօր խստութիւնից վախենալով, Ամերիկայ եկաւ։ — Էոսն ծիներալը յետ դարձաւ իւր հայրենիքը, ուր շո տով վախճանուեցաւ։ Նա մի անսովոր քաջ և կորովի մարդ էր։ — Մալտայ եկան նոյնպէս բոլոր ամերիկայի ազատուած գերիները, այդ թուում և իմ ընկերները, որոնց որ Տրիպոլացիք իմ հետ բռնել էին։

XIV.

Պարզեն Զիմաստուն է գնում։ Մի սատիճանաւոր թուրքի մասին։

Իմ Մալտայ գալուց մի քանի օր յետոյ, այն տեղ մի ամերիկեան նաւ եկաւ, որ միջերկրական ծովը գնում էր Զմիւռնայ, որ ասիայի ծովափնեայ քաղաք է, օպիումի համար։

Այդ օպիումը արեգակումը չորացած խաշխաշից քամոց հիւթ է։ Նա թմրեցուցիչ յատկութիւն ունի։

Նաւը Զմիւռնայն այն նպատակով էր օպիում առնում, որ այնտեղ Նրան չայի կամ ուրիշ աբրեշումեայ ապրանքների հետ փոխի։ — Նրա Զմիւռնայ գնալու ժամանակը այնտեղ ժանտախտը սատակեցաւ, որ միջերկրական ծովի ափերումը գտնուող բոլոր մեծ քաղաքներումը մի սովորա-

կան ցաւ է։ — Ամերիկական նաւերը շատ նաւասարք մեռան ժանտախտիցը, ինձ նրանում առաջարկեցին նաւավարութեան երկրորդ տեղը։ Ես համաձայնեցի և հայրենիքս գնալու փոխանակ — գնացի Զինաստան։

Միջերկրական ծովից դուրս գալով ճիպրաղտարի նեղուցը, մենք ճանապարհ ընկանք Ատլանտեան ովկիանոսը դէպ՝ի Կանարեան կղզիները և յետոյ Սպիտակ գլուխը, որ Աֆրիկայի արևմտեան ափերումն է։

Սպիտակ գլխի մօտ նաւի գլխաւորը Ռիլէն նաւաբեկութեան պատահեց։ — Ռիլէն Ամերիկայի Կենտեկտիկուտ նահանգից դուրս եկաւ Գարոֆօրդի նաւահանգստից դէպ՝ի Կանարեան կղզիները, նա դեռ չ՝կարողացած լինելով նրանց հասնելու յանկարծ ծովի վերայ աստիկ մառախուղ պատեց, որը նրան այնպէս շաղեց, որ չ՝կարողացաւ, իսկապէս իմանալ, թէ ուր է նա գնում։ — Հաշվումը սխալուեցով։ Ռիլէն մօտեցաւ Կանարեան կղզիներին և գնաց դէպ՝ի Սպիտակ գլուխը։ — Սաստիկ քամին նաւը ափի մօտ տարաւ։ Յանկարծ նաւի գլխաւորը ճայթիւն լսեց և իսկոյն գուշակեց, որ ընկաւ ջրասկի քարի վերայ, որոնց ալիքները սաստիկ ուժով խփում են։ — Երբ նաւը նրանց վերայ ընկաւ, ալիքը սկսեցին բարձրանալ, թափուեցի նաւի վերնայարկի վերայ և նաւակը ջրով լցրին։ — Կկատելով թէ նաւը կամաց պէտք է կտրուի, նաւի գլխաւորը մի քանի նաւասեաց հետ նաւակի վերայ նստեց և գնացին ափի մօտ, որ

հեռու. չէր գանվում։

Ծովը սաստիկ ալէկոծում էր, նաւակը ինչպէս մի փետուր վերևէր գցում, և վերջապէս նրան ծանծաղի վերայ դցեց, բայց նաւը կանգնած էր ժայռերի մէջը։—Ս. յն ասէր, որի վերայ նրանք վերեկան, ամայի էր և անպտուղ։ Նրանց դրութիւնը խիստ վատ էր, բայց նաւի գլխաւոր Տիլէի հաստատութիւնը նրանց յուսահատութիւնից ազատեց։—Նրանք իսկոյն վրանները վեր թողին, ուր կարելի էր ծածկուել, և սկսեցին ջարդած նաւակը նորոգել։

Նորոգելով նրան, նրանք մտածեցին խաղաղ եղանակ ժամանակը ծովը մտնել, յուսալով թէ կ՝պատահի որ և լցէ մի նաւակ, կամ թէ գնալ մինչև անգղլիական գաղթականութիւնները, որոնք գանվում էին Ամերիկայի ափերումը աւելի հարաւ։—Միւս օրը, աւաղ զարմացման, նրանք տեսան իրանց մօտ եկող մի մարդերը շաղտուած ծեր մարդ, երկու տղեղ կանայք և մի քանի երեխայք, նրանք համարեա թէ բոլորը բորիկ էին և վայրենի դէմք ունէին։

Որովհետև ափում նաւլոյը հանած շատ ապրանք կար, նորա համար էլ այդ մարդիքը վրայ ընկան նրանց յափշտակել, անկողնի կարերը քանդեցին և երեխի նման ուրախանում էին, նայելով, թէ ինչպէս փետուրները օդումը թռչում էին։—Յետոյ նրանք ապրեշումներ թաշկինակներով լեքը անդուները բացարին նրանցմով իրանց գլուխը, ձեռքերը ոտները փաթաթեցին և գնացին։ Նաւի գլխաւոր

Ինչպէս իւր ընկերները վրանի մէջը գիշերից, բայց միւս առաւօտը կրկին սկսեցին նաւակը նորոգել։

Բայց վայրենիքը կրկին շուտով ուղտերով երևացին, նրանց վերայ բարձելու համար ափի մնացած ապրանքները։— Նրանք բոլորն էլ զինաւորուած էին երկայն, սուր ձեռնափայտերով և նրանցով մեր ճանապարհորդներին վախեցնում էին, որոնք չունելով զէնք, ուժ չունէին պաշտպանելու, նաեցին իրանց նորոգաց նաւակումը և ճանապարհ ընկան զէպ՝ի նաւը, որ դեռ էլի ժայռերի մէջը կանգնած էր։

XV.

Ինչպէս նաւի գլխաւորի ակցքը եւ ներողութիւնը։

Վայրենիքը ուղտերը բարձելով, փչացրին այն ամենայն բաները, ինչ որ իրանց հետ անկարելի էր տանել։ Յետոյ նշաններով նաւի գլխաւոր Ինչէին հասկացնելով գալ ափը, վախեցնում էին շուտով նրան ապանել, եթէ որ բոլոր նաւի միջի գտնուած փողերը նա չ'ի տալ նրանց։

Եա իրան մարդկերանցը հրամայեց հազար դոլար բերել, բայց վայրենիքը սրանով չ'բաւականացան և աւելի շատ էին ուզում։ Երբ նա պատասխանեց, որ նա էլ ուրիշ փող չ'ունի, այն ժամանակը նրանք կրկին աւելի կատաղեցին

նրան սպանելու համար։ Այդ տեսնելով երկչոտ ընկերները վազ տուին դէպի նրան օգնելու համար, բայց նա չ՝ սպասելով նրանց. լուհամարեց փախչելով ազատուել, շահվելով բարեհաճելի բոպէովը, փախաւ ափի մօտ և ընկաւ ծովի մէջը։ Երեք վայրենի նրա քամակից ընկան ձեռնափայտերով, բայց փախչող ալիքը նաւի գլխաւորին ազատեցին և նրա բաղտաւորութեամբ հասաւ մինչև նաւը։ Այսուամենայնիւ նրա մարդկերանց մէկը վայրենիների ձեռքն ընկաւ և նրանք խաղճին վերաւորեցին։

Մեր նաւաստիների դրութիւնը ամենավատ էր, ափումը նրանց վայրենիքը սպասում էին, բայց նաւը ալիքներից այնպէս էր ջարդուած որ ջուրը ինչպէս վանդակի մէջ թափվում էր նրանում։ — Նրանք վճռեցին նաւակումը նստել և ծովը մտնել, չնայելով իսկական վտանգին, որ պէտք է խեղդուին։ — Սկզբից ծովը բաւականի հանդարտ էր, բայց գիշերը սաստիկ փոթորիկ վերկացաւ։ — Խեղճերի դրութիւնը անտանելի էր։ — Նրանց նաւակը այնպէս էր ջարդուած, որ անդադար ջուրը գլխարկներով դուրս թափելով, նրանք հազիւ էին ջրի վերայ կենում։ — Կայծակը լուսաւորում էր գիշերային մթութիւնը և հենց հազիւ էր նրանց լեռնացած ալիքները ցոյց տալիս։ — Ծովի շառաչիւնը փոթորկի ժամանակը շատ զարհուրելի է. լինում այն ժամանակը և ամուր մեծ նաւերն էլ, ուրեմն ինչպէս կ՝ լինէր նաւակի վերայ, որ տատանվում է և ճայթում է փոքրիկ ալիքների

ամեն մի հարուածիցը անգամ։

Մեր նաւաստիները թէ և էլ չէին կարողանում ազատութեան մասին մտածել, բայց աշխատում էին ինչքան որ ուժ ունէին, որովհետև մարդս մինչև իւր կեանքի վերջին րոպէին էլ յուսահատում չի ազատութեան մասին։

Փոթորիկը մի քանի օր մէկ մէկու վերայ շարունակվեց։— Նաւաստիների բոլոր պաշարը հատաւ։ – Խոզի մսի վերջին պատառը համարեա թէ ոսկորները, նրանք պանրի պէս կերան։ Նրանք այնքան ջուր ունէին, որ կարելի էր բերանները թացանել։ — Այդ յետին չ'քաւորութեան ժամանակը նրանք մտքներումը դրին փրկութիւն գտնել ցամաքի ճանապարհի վերայ և հանգստանալ ափի մօտ, որ լիքն էր բարձր ծայռերով։ – ծայռերի և ծովի մէջ տեղը մի նեղ հողի տարածութիւն էր գտնվում, որի վերայ թշուառները հանգստացան և մինչև առաւօտը քնեցին։ — Այդ հանգստութիւնը նրանց կենդանացրեց, նրանք ծայռովը անցկացան և դէպ'ի արևելք գնացին։—Մի քանի ժամանակի յետոյ նրանք հասան որ և լցէ մի անապատ։

Այստեղ հեռաւոները տեսան թափառական Արաբներ, որոնք անապատովը գնում էին իրանց ուղտերովը և հոտերովը։ —Արաբները շուտով բռնեցին խեղճ ճանապարհորդներին, նրանց շորերը հանեցին, նրանց այնպէս էին մոիկ տալիս իբրև ստրուկների, իրանց միջումը նրանց բաժանեցին և ուղտերի վերայ նստացրին։

Յետոյ նրանց պատահող արաբացի վաճառականները նաև ի գլխաւոր Փիլէին իւր ջրա ընկերով գնեցին և Մարոկիս տարան, յուսալով որ այն տեղ նրանց աւելի թանգ կ'ծախեն. Մարոկիսումը մի մարդասէր Անդղլացի նրանց գնեց և նրանց ազատութիւն տուաց :

XVI.

Պարզէն իրան ճանապարհը շարունակում է : Մուզզо-Պարկի եւ ուրիշ ճանապարհորդների մասին:

Այն Արաբները, որոնք Աֆրիկայի արևմտեան ափում են բնակվում Սպիտակ գլխի մօտ, պարապում էին հենց միայն նաւերի յարձակելովը, որոնք ապատում էին նաւակոծութիւնը : — Սովորական նրանք խղճերի ունեցած բոլոր բաները իրանց սեփականացնելով, հարկադրում են ծանր դորձքեր կատարել և նրանց հետ սատիկ խիստ են վարվում :

Արաբները իրանց մէջը բարի են և հիւրասէր, բայց թշնամիների հետ անգութ են : — Աֆրիկայի հիւսիսային, միջին և արևմտեան մասը Արաբները լիքն են, նրանք նոյնպէս աւազակութեամբ են պարապում և քրիստոնեայ գե-

ընների ծախելով, ընկնում են Նեգրոների գիւղերի վերայ, այդ անբաղդներին բռնում են, տանում են հեռու երկիր, և հարուստ մարդկերանց վերայ ծախում են, որոնք Նեգրոներին ինչպէս անասուն աշխատացնում են։ Այդ թշուառ նահատակները մեռնում են օտար հողում, ոչինչ տեղեկութիւն չունենալով իրանց տան, երեխանց և բարեկամների մասին։ — Գալարի գլխի դէմուդէմը Գալարի գլխի անուանուած կղզիներն են գտնվում։ Երանք թիւով 16 են։ Երանցից գլխաւորը կոչվում է Սանտա — Եագոյ։ — Այդ տեղ աղի համար շատ նաւեր են գալիս, ուր երբ արեգակը ծովի ջուրը ցամաքացնում է, տակին աղէ մնում։ — Գալարի գլուխը հանելուց յետոյ. մենք գնացինք Գաբեայ գետի բերանը։

Նրա մէջը շատ ձիագետնք և կոկորդիլոսներ կան։ Ափերում հաղարաւոր կապիկներ են գտնվում։

Սրանից վեցտուն տարի առաջ Շոտլանդացի երևելի ճանապարհորդ Մունգոյ — Պարկը Գամբեայ գետովը վերև եկաւ ցանկանալով այն տեղի բնակչաց ժողովրդները իմանալ։ — Մինչև նրա ժամանակը շատ քիչ էր յայտնի Ափրիկան։ — Շատերն են այնտեղ գնացել, բայց կամ հարկադրուած են էլել յետ դառնալ, կամ այն տեղ կեանքից զրկուել են։

Մունգոյ — Պարկը գտաւ, թէ այնտեղի բնակիչները բոլորը Նեգրոս են։ Նա պատմեց թէ ինչպէս ինքը մէկ անգամ բօնդի կողմի թագաւորի մօտ է էլել, և նրան ընծայ

տարել մի ամբոխանի և ուրիշ զանազան առարկաներ, որոնք Թագաւորին շատ փափագելի էին էլել։ Այսուամենայնիւ նրանցով չբաւականանալով, նա սկսել է կրկին գոլել և նրա կոպիտ ցրակը դեղին գուքմեքով խնդրել, ասելով, որ հանդիսաւոր օրերը կ'հաքնի։ Մունդօյ—Պարկը հանել է իրան ցրակը և դրել է նրան Թագաւորի ոտների մօտ։ Տասը տարուց յետոյ Մունդօյ—Պարկը Գամբիայ գետովը իրան երկրորդ ճանապարհորդութեանը ձեռք գցեց և արդէն իրան հետ վերցրուց 50 մարդ ընկերակից, որոնց Թուումը գտնվում էին մի քանի զինուորներ, հարկաւոր պատահման ժամանակը նրան պահպանելու համար։

Սրանք հասարակ Թէ միևնոյն ճանապարհին հետևեցին, բայց շատ խոչընդոտների և փորձանքների պատահեցին, որոնք այսուամենայնիւ զարմանալի համբերութեամբ տարան։ Վերջապէս հիւանդութիւնների ցը կամ ուրիշ պատճառների ցը մէկը միւսին հետևից բոլորը մեռան, բացի հենց Մունդօ—Պարկից և ուրիշ չորսից, որոնք հասան մինչև Բուսայ քաղաքը, որը Տիմբուկտուից դէպի արևելք է գտնուում։—Այս տեղից նրանք Նիգեր գետովը ցած գնացին, բայց Նեգրոները նրանց վերայ ընկան և երեքօրեայ հանդուգն պաշտպանութիւնից յետոյ, անբախտ ճանապարհորդները սպանուեցին։

Զնայելով ճանապարհորդների անբախտութեան վերայ, ցանկանալով իմանալ Ներսին Աֆրիկան, էլի գտնուեցին այն-

պիսի քաջ մարդիկներ, որոնք նրանց օրինակին հետևեցին։— Պարոն Տենհամը և Կլապիրտոնը անապատով Տրիպոլիցը ճանապարհ ընկան դէպ՝ի Բօրնու։

Նրանք այնտեղ մի մեծ Զադ անունով լիճ դտան, որի վերայ շատ թռչուններ կային և այնքան ձեռնասուր, որ նրանք համարեա չէին շարժում տեղերից երբ նրանց մօտի կանում էին։ — Բօրնուն մի մեծ, հզօր թագաւորութիւն է, որի բնակիչները Նեգրոսներ են։ Նրանց հեծելազօրքը հաքնում են պողպատեայ մանր օղերից շինած շապիկներ։ — 1825 թուին, այդ միևնոյն Կլապիրտոնը կրկին Աֆրիկայ գնաց։ — Նա իրան ճանապարհորդութեանը արևմտեան ափերից սկսեց, Անգլիայից ծովով մինչև Բաղդրայ եկաւ, յետոյ ցամաքի ճանապարհովը Բասայ եկաւ, ուր և Մունգօ — Պարկի թշուառ վիճակը իմացաւ։ Այստեղանց նա ճանապարհ ընկաւ դէպ՝ի Սակատու, ուր և մեռաւ։ —

Գաղղիայի Կալէ ճանապարհորդը, Տիմբուկտու մի քաղաքը տեսութիւն գնաց, որտեղի բնակիչները նոյնպէս Նեգրա են։

Շատ ճանապարհորդներ ցանկացան այնտեղ լինել, բայց այդ ժամանակը ոչոքի բացի պարոն Կալէից չյաջողեց։

XVII.

Սիերայ--Լիոնայ, Լիբերիա, Փղերի ափը, Ոսկեայ ափը, Գուինեայ, եւ սեւ գերիների վաճառումն:

Սիերայ—Լիոնայ կոչուած անդգլիական գաղթականութիւնը Աֆրիկայի արեւմտեան ափումն է գտնվում:—Այդ տեղ բնակութեան համար սեւ գերիներ են բերում, որ ազատութիւն են ստանում:

Նրանց դիմաւոր քաղաքը կոչվում է քաղաք ազատութեան: Նրանք բոլորովին հանդարտ և երջանիկ կեանք են վարում: Սիերայ — Լիոնից դէպ'ի հարաւ ամերիկական Լիբերայ գաղթականութիւնն է գտնվում, որի մէջ նմանապէս Ամերիկայի Միացեալ նահանգներից ազատուած նեգրանները են բնակվում:

Նրանից այն կողմը փղերի ափն է գտնվում. այդպէս է կոչուած նրա համար, որ նրա մօտ փղերի մեծ խումբերն գտնվում, նրանց ժանիքը փղի ոսկոր են ասվում:

Բնակիչները նրանց Եւրոպացւոց և Ամերիկացւոց վերայ ծախում են, որոնք փոխարէնը նրանցից տանում են հրացան, վառօդ, գուլայ, ըսմ և զանազան բաներ: Փղերի

ալի մեծ գտնվում է Ոսկեայ կոչուած ափը։

Սիտեղ ոսկին մանր հատիկներով գետերումը գտնվում են, որոնք լեռներից են սկսում։

Ներգրոները այլ հատիկները լուանում են, նրանց աւազից բաժանում են և Եւրոպացւոց հետ փոխում են այն միւնոյն բաներով ընչով փղի ոսկորները։

Սուել դէպի հարաւ. Գվինեան է գտնվում, ուր Նեգրոների զանազան սերունդներ են բնակվում և որտեղից ըստ մեծի մասին ամերիկացւոց Գերիներն են դուրս հանած։

Հիւսիսային և հարաւային Ամերիկայումը և արևելեան Հնդկաստանումը դուրս հանած և ծախած գերիների թիւը յայտնի բանէ հարիւր հազարի հասնում է։ Անգղիացիք ամենայն կերպով աշխատում են գերիների վաճառումն ոչնչացնել, բայց էլի շատ նաւեր են գնում Գվիննայ և թշուառ Նեգրոներին յաւիտեան քշում են իրանց հայրենիքից։

Նեգրոների կառավարիչները նկատելով, թէ գերիների համար նրանց տալիս են առատութեամբ հրացաններ, վառօդ, ըսմ և ուրիշ նրանց համար ամենահարկաւոր առարկաներ, իրանց սեփական հպատակներին ծախում են, կամ հարևանների հետ կռվում են որ շատ գերիներ ճարեն ծախելու համար։ — Վաճառման և միմեանց մէջը կռուի հետևանքը այս էլաւ, որ ամբողջ երկրները, որ առաջ լեքնէին բախտաւոր բնակիչներով, այժմ դատարակ են կամ ունեն մի քանի խեղճ և աղքատ խմբեր (օրդէք)։

Բայց ամենից լավը այն է, որ քրիստոնեաներն ամեն դամ սկսել են այդ գործքովը պարապել։

Ամերիկայի Միացեալ Նահանգների հարաւային և արևմտեան կողմերումը շատ ծանր գործ շարունակող սև գերիներ են գտնվում։

Սպիտակները նրանց տրուկներ են կոչում, նրանց ծախում են և առնում են ինչպէս ձիաներին կամ ուրիշ անասուններին։

Այսուամենայնիւ մի քանիները նրանց հետ մարդասիրաբար են վարվում։ Բայց ինչքան էլ որ նրանց հետ քաղցր վարուին, այսուամենայնիւ նրանց դրութիւնը ցաւալի է։

Այս վաճառականները, որոնք Ամերիկայ են գնում, երեխանցը ծնողներից հեռացնում են, բաժանում են ամուսիններին և այդ թշուառները էլի միմեանց չեն տեսնում։ Չեն աշխատում գերիներին կրթութիւն տալ, վախենալով որ նրանք հասկանան, թէ պարտական չեն իրանց շարչարողներին։

Նրանց թողում են դիտութեան մէջը, իրանց նման մարդ չեն համարում, և նրանց հետ վարվում են ինչպէս անասնոր կենդանիների հետ, որոնց պարտաւոր են կերակրել, հագցնել և պահում են միայն սեփական օգուտ համար։

Չի կարելի չդատել նրանց, որոնք գերիներ ունին, այսուամենայն բարի և բարեսիրտ մարդը պարտական է աշխատել

գերութեանը բնաջինջ առնելու մասին։

Մինչև անգամ Ամերիկայի այն տեղերումը, ուր գերիներ չկան, Նեգրոների հետ բոլորովին վատ են վարվում։ — Սպիտակները կարծում են, որ նրանք բոլորովին պարտական չեն Նեգրոներին սիրել և նրանց հետ այնպէս վարուել ինչպէս եղբայրների հետ։ Նրանց խեղճ և անբախտ տեսնելով, նրանք համարում են նրանց անասուններ։

Բայց ո՞վ նրանց թշուառացրուց։ Սպիտակները։ Այսինքն նրանք հանում են նրանց հայրենիքից և տանում են այն երկիրները, ուր նրանց արհամարհում են և տմարդաբար են վարվում։

Բայց հաւատացէք, որ նրանք որոնք տմարդաբար, խիստ և խոշոր են վարվում Նեգրոների հետ, սատիկ մեղանչում են։ Աստուծոյ առաջին բոլոր մարդիքը հաւասար են. և մենք բոլորս պարտական ենք ուրիշների հետ այնպէս վարուել, ինչպէս որ ցանկանում ենք, որ նրանք մեզ հետ վարուեն։

Գերութեան մասի հարցը և ներկայ ժամանակումս միայեալ նահանգներումը պատճառեց պատերազմ։ Հիւսիսային նահանգները կամենում են բնաջինջ առնել այդ բարբարոսական սովորութիւնը, բայց հարաւայինները կամակորութեամբ չեն տալիս հին վատակը։

XVIII.

Հանապարհորդութեան շարունակութիւն, Բարեյուսոյ գլխի մօտ փոթորիկը:

Գեղեցիկ եղանակը, ճանապարհային քամին շուտով մեզ բերին մինչև բարեյուսոյ գլուխը, բայց երբ մենք սկսեցինք նրան պատել, մի սաստիկ փոթորիկ վերկացաւ:

Ինչքան անգամ փոթորիկի ժամանակը ծովի վերայ եմ եղել, բայց նմանը դեռ և ոչ մի ժամանակ չ'ի տեսնուած:

Ալիքները չէին բարձրանում սովորականի պէս լեռների նման բարձր, բայց քամին, այսպէս ասել, ծովի ամբողջ մասը օդի մէջը բարձրացրեց և նրանց ապիսակ փրփրով հեռու մեր շրջակայքումը ցրուեց: Շուտով առաջասը ժողովելով, մենք քամուն հակառակ դրինք միայն լոկ կայմը, բայց չնայեց դրան նաւը, թռչում էր ինչպէս թռչուն: Առանց այն էլ և մենք ջրով ողողվել էինք, բայց նաւը մինչև այնտեղը ցաւացաւ, որ շրթունքների ծայրերը ծովին մօտիկնում էին:

Աւազանների մի քանիսը, սաստիկ տատանելուցը ջրի մէջը ընկնելով, խեղդուեցին:

Միևնոյն ժամանակը տեսարանը վատ էր և զարմանա-

լէ։ — Այդ պէս երկու օր շարունակուեց։ — Զգուշութեան համար ամենևին հնարք արդէն գործ դրած էր, բայց չընայելով նրանց վերայ, մեզ յանկարծ կողքի վերայ շուռ տուեց, մեծ կայմերը մենք շուտով ջարդեցինք և նաւը կրկին ուղիղ գնաց, շարունակվելով ալիքների հետ կռուիլը և ընդդիմադրելը։

Մէկ բոպէի համար մենք բոլորս մահին սպասում էինք, բայց այնտեղ կրկին քաջալերուեցին և սկսեցին կրկին յուսալ։ Վերջապէս փոթորիկը հանդարտուեց, մառախուխը ցրուեց, արեգակը փայլեց և բոլորովին մի լոկ լուութիւն թագաւորեց,

Մենք սրանից օգուտ քաղեցինք և փոքր ինչ մեր նաւը նորոգեցինք, ժամանակաւոր կայմերը դրինք, առագաստ բաց արինք և հենց առաջ քամուը ուղղեցինք մեր ճանապարհը դէպ՝ի Կապ, որը բարեյուսոյ գլխուամբ Անգլիացւոց գաղթականութեան գլխաւոր քաղաքն է։

Այսուղ մենք նոյն կայմերը և մեզ համար բոլոր բաներ և պաշար պատրաստեցինք։

XIX.

Էսադ բարդը, հոտիւնունութիւնը, վայրենի զազութիւնը, եղրանգութիւնը։

Ամերիկայի հարաւային մասի բուն բնակիչները նեմանպէս Նեգրոների սերունդին են պատկանում, և Հոտենոտո-

ներ են կոչվում, նրանք բարձրահասակ են և հանդարտ բնութիւն ունին։

Հոլանդացիք նրանց երկիրը նուաճեցին, և մի քանիներին իրանց ծառայ շինեցին, բայց միւսներին քշեցին հեռու միջին Աֆրիկայ։

Այժմ այդ գաղթականութիւնը Անգղիացւոյ է պատկանում. Կապ քաղաքը, որը էլի Հոլանդացւոց շինած է, բաւական ընդարձակ է, բնակիչները ըստ մեծի մասին Ներգրաներ են և Հօտենտոտներ։

Նրանք բոլորը համարեա թէ մահմեդականներ են։ Եւրոպացիք ոչ միայն քիչ աշխատեցին նրանց քրիստոնէական կրօնը սորվեցնել, այլ և մինչև անգամ իրանց գերիների հետ վարուեցին խստութեամբ։

Այժմ էլ ինչպէս Կապումը, այնպէս էլ անգղիական բոլոր գաղթականութիւններումը գերութիւնը բնաջինջ է արած։ Կապ քաղաքի մօտ մի լեռը կայ, սեղան կոչուած, նրա գագաթը տափակ է ինչպէս սեղան և նրա մի կողմը կարծես թէ իսկապէս ուղիղ կտրած է։

Ահա բարձրութիւնը չորս հազար ոտն է։

Այս տեղ շատ առիւծներ, փղեր և վագրաձիաներ կան։ Դաշտերի վերայ հազարաւոր վիթեր են տեսնում։ Եթէ որ առիւծները կուշտ են, այն ժամանակը մարդկանց վերայ չեն յարձակվում, բայց քաղցած արիւծը մարդու համար վնասակար է։

Մէկ անգամ ձիաւոր Հոլանդացին թափի քամակին մի առիւծ տեսաւ, բայց իւր ճանապարհը շարունակից այն դիտաւորութեամբ, որ նրան առիւծը չի դիպչիլ։ Բայց առիւծը կոյծակի նման դուրս թռաւ թաղկացած տեղից, յարձակուեց ձիու վերայ, նրան դետնի վերայ գցեց և սկըսաց նրան պատառել։

Հոլանդացին այն ժամանակը շահեց, սկսեց վազել և նրա բախտից հասաւ մինչև մի բնակարան։

Առիւծը, իրան ոտքը պապաստած լինելով, էլ չ'սկսեց նրան հետևել։

Կապի գաղթականութիւնից դէպ'ի արևելք Կաֆրներն են բնակվում, որոնք բոլոր նեգրաններից գեղեցիկ են։ Նրանց կողմը պտղատու է։ Նրանց դիւղերը կիսակլոր խրճիթներից են բաղկանում, որոնք կոպիտ կերպով են ծածկուած։—Բնակիչների պարզմտութիւնն է անանապահութիւն և որսորդութիւն։—Նեգրաններին համարում էին մի յիմար, արհամարհութեան և գերութեան ընդունակ և արժանի ժողովուրդ, բայց այժմեան ճանապարհորդները ուրիշ կերպի են նկարագրում։

Պարոն Դենհամը և Կլապերտոնը գտան, որ միջին Աֆրիկայի բնակիչ նեգրանները, առնի լուսաւորեալ և խելք են, քանզի թէ ինչպէս որ նրանց մասին նկարագրել էին,

Կաֆրները և Հոտենտոտները նոյնպէս առաջ այնպէս յիմար և վայրենի չէին, ինչպէս նրանց Հոլանդացիք նը-

կարագրել էին։ Յայտնի է, որ Եւրոպացիք նրանց համարում էին կիսավայրենիներ, և աշխատում էին իրանց խիստ վարմունքը ոչնչի տեղ անցկացնել։ — Ինչքան ախորժելի կ'լիներ տեսնել, եթէ որ բոլոր ժողովուրդները, նրա փոխանակ, որ ուժով և խաբէութեամբ Նեգրոներին իրանց հայրենիքից հանում են, և յետոյ իրանց արդար ցոյց տալու համար նրանց անմիտ են նկարագրում, իրանց մէջը համաձայն էին նրանց լուսաւորել և տրվեցնել։

Այսուամենայնիւ պէտք է նկատել, որ այդ բարի ցանկութիւնը սկսում է փոքր առ փոքր կենդանանալ։

Պարէյի զրոյցները Ամերիկայի մասին։

I

Պարէն իրան անցի, Բոստոնի եւ Հնդկացւոց մասին պատմում է։

Եւրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի մասին դուք արդէն իմ զրոյցներս լսեցիք, այժմ կը սկսեմ Ամերիկայի մասին պատմել։

Կարծեմ ես արդէն ձեզ ասացի, թէ իմ բնակութեան տեղս Բոստոն քաղաքի մէջն է, որ Ամերիկայի միացեալ նահանգներումն է գտնվում։

Ես էլի միտքս եմ բերում, թէ Բոստոնը հին ժամանակը այնպէս մեծ չէր ինչպէս այժմ։ Բայց այս էլ գիտէք դուք արդեօք, թէ հենց միևնոյն տեղը, ուր այժմ քաղաքը շինած է, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մեծ անտառ,

ուր միայն վայրենի Հնդկացիք էին բնակվում, որոնք համարեա թէ տկլոր էին մանգալես և ձմեռը միայն արջի և եղջերուի մորթով էին փաթաթվում։ Այդ գաղաններին նրանք հրացանով էին սպանում, բայց շատ անգամ էլ նետով։

Բոստոնի մոտ Հնդկաստանցիք երկար ժամանակ բնակվում էին։ Նրանց տները, որոնք սովորաբար ծառերի ճիւղերից են շինած, վիգվամներ էին կոչվում։

Այդ տները շատ փոքր են և ամենայն հարկաւոր յաջողակութիւնից զրկուած։ Հնդկաստանցիք—մի կատարեալ տգէտ և միևնոյն անգամ գրագիտութիւն չունեցող մի ժողովուրդ են։ Այժմեան ժամանակումը էլ Հնդկացիք Բոստոնի մոտ չկան։ Նրանց մեծ մասը մեռել են, բայց միւսները գնացել են դէպի արևմուտ, հեռու անտառները և լեռները։

II.

Պարոնի սնցքը։

Երբ ես դեռ տասներկու տարեկան էի, մի Ուամպոամ անունով Հնդկացի մեր տուն եկաւ։

Մեր բոլոր ընտանեացը նա շատ սկսում էր նրա համար, որ իմ հայրս նրա կեանքը ազատել էր, հարբած նաւաստիների ձեռքից նրան պահպանելով։ Ուամպոամը

իրան ամենաբարի մարդ լինելու համար ամենին յայտնի էր, նա ժամանակով Հնդկացւոց գլխաւոր է էլել, բայց յետոյ աղքատութեան մէջն է ընկել։

Ես ինձ յորդորեց իրան զրոյցներովը այս բանի մասին, թէ ինչպէս ախորժելի է լամաներ և սկիւռ որսալ և իմ հօրը ասաց ինձ նրա մօտ հիւր գնալու թոռնի, իմ հայրը մեր խնդրքին համաձայնուեց։

Ուամպումը Կենեկտիկուտ գետի ափերումը Նօրվամպոնի մօտն էր բնակվում, Բօստոնից հարիւր մղոն հեռու։

Այժմ մի գեղեցիկ երկաթեայ ճանապարհ է գնում Բօստոնից դէպ՝ի Նօրվամպոն, բայց այն ժամանակը ճանապարհը շատ վատ էր. ոչ թէ միայն երկաթեայ ճանապարհներ, այլև Ամերիկայումը դեռ էլ չէր գիտէին թէ կառքերը ինչ բան են։

Մենք ճանապարհ ընկանք ոտով։

Միւս օրը էլ մենք Վ. օրչեստեր հասանք, որ այն ժամանակը մի չնչին քաղաք էր։

Վ. բա չորրորդ օրը մենք եկանք Ուամպումի տունը կամ լաւ էլ ասել, նրա վիդվամը, ուր տեսանք նրա կնոջը և երեք երեխանցը, որոնք ինձ շատ ուրախալից էին երևում հէնց դէմքով անգամ։

Ուամպումի կինը մեզ ընթրելու հրաւիրեց և մեզ տուեց արջի միս և մի տեսակ հաց, ծեծած ցորենի հատիկներից թխած։ Մենք սկսեցինք ձեռներով ուտել, որովհետև չնդ-

կայնք ոչ դանակ ունէին և ոչ պատառաքաղ.

Ինձ արջի կաշու վերայ պարկացրին քնելու, որի վերայ ես խորը քնեցի։

Վերջապէս մենք պատրաստուեցինք որս գնալ Հոդով. Նա, նրա երկու որդիքը և ես։

III.

Թէ Պարոնն ինչպէս որս գնաց։

Առաւօտը ամենապայծառ էր, հոկտեմբեր ամսին։ Արեգակը արդէն դիպել էր լեռների գագաթներին։ Դանձր անտառի միջովը մենք Խօլիոկի լեռան վերայ բարձրացանք։ Դէր եկանք բարձր ժայռի գլուխը և լեռան տակին տեսնում էինք մի զարդարուած հովիտ, որի մէջ տեղը գտնվում էր փոքրիկ, և այդ ժամանակը անուշան Նօրվամպոն քաղաքը։

Դու տեսնում ես արդեօք այդ բոլոր տները. Ամենուն մը ինձ ասաց։ Երբ որ իմ պապը երեխայ է էլէլ, այստեղ ոչ մի տուն չ'էր էլէլ։

Մենք կամաց նրանց քամակիցը գնացինք և շուտով ընկուզի ծառի վերայ մի գեղեցիկ սկիւռ տեսանք, որ յետի թաթերի վերայ նստել էր, բայց առաջիններովը ընկուզը բռնել էր և կրծում էր. Նրա երկար պոչը թիկունքի վերայ օղի նման կուտապուած էր։

Ռամպուսը խոյն իրան փոքր որդուն աչքով արաւ, որը իւր նեռը դցեց, բայց սկիւռի մօտովը անցկացաւ և նրան չըխլաւ։

Մեծ եղբայրը շուտով միւս նեռը դցեց և սկիւռի կողքը վերաւորեց։ Խեղճ կենդանին այն բոլէին վեր ընկաւ գետնի վերայ։

Մենք զզոյշ և հանդարտ առաջ գնացինք անտառի մէջ և մի փոքր ժամանակից յետոյ Ռամպուսը նշան տուեց, որ մենք կանգնենք։

«Այսիր այդ բարձր ժայռի վերայ, որ ուղիղ մեր գլխի վերևն է»։ Ասաց Ռամպուսը։ Ես մտիկ տուի, բայց ոչինչ չը նկատեցի։ «Լաւ մտիկ տուր» կրկնապատիկց նա կրկին աչք գցելով, ես տեսայ մի ջահել վայրենի այծ։ որ քարափի վերայ կանգնած էր։

Նա շատ գեղեցիկ էր, իւքը մաք կարմիր էր, ականները բարակ, բայց աչքերը թոռխ և սրատես։

Ռամպուսը աղեղը ձգեց, մի լաւ նեռ ջոկեց, և վերև գցեց։ Նեռը ուղիղ գիպաւ խեղճ վայրենի այծի արանը։

Անբախտը կրկին աւելի առաջ վազեց և սպանուած՝ ժայռի վերայ վեր ընկաւ։ Մենք վայրենի այծին վերցրինք և շուտով Հանդարտ ընկանք դէպի Ռամպուսի վիճակը։

IV.

Ռամկության զրոյցներ իրան նախորդների մասին:

Երիկունը Ռամկումը սկսեց մեզ պատմել, թէ ի՞նչպէս են Հնդկացիք իրանց հողերից զրկուել և ընչեցն են նրանք աղքատացել:

«Նրանից մօտ երկու հարիւր տարի առաջ, այդ հողումը և ոչ մի ապիտակ մարդ չ'էր էլել: Այս տեղ միայն Հնդկացիք էին բնակվում կամ կարմիր մարդիկը: Նրանց էր պատկանում այս բոլոր երկիրը: Նրանք որսորդութեամբ էին պարապում, որտեղ էին ձուկը, մէկ խօտքով ուր և ուզում էին բնակվում էին և ինչպէս որ պէտք էր:

Անտառների մէջ անթիւ վայրենի այծեր և վայրենի կենդանիներ կային, բայց գետերը լիքն էին շատ գեղեցիկ տեսակ ձկներով:

Սպիտակ մարդիկը յանկարծ իրանց նաւերովը ծովով անցկենալով այստեղ երևացին, Հնդկացիք շատ քաղցրութեամբ նրանց ընդունեցին: Սպիտակները սկսեցին տներ շինել, հրօրացան, անօգնական Հնդկացիներից երկիրը յափշտակեցին. սկսեցին նրանց քամակից ընկնել և ստանել նրանց, նրանց կանանց և երեխաներին, այրել վիգվամները,

և նրանց հեռու անտառները քշեցին։

Սպիտակները հրացաններ ունէին, բայց Հնդկացիները միայն աղեղներ և նետեր, և թէպէտ Հնդկացիներին էլ յաջողվում էր սպիտակներին սպանել, բայց սպիտակները աւելի մեծ բազմութեամբ էին սպանում Հնդկացիներին։

Ինչպէս, որոնք սպանված չէին, հեռու անտառների և լեռների վերայ էին փախել։ Նրանցից շատ քչերն են իրանց առաջուայ տեղերումը մնացել, այն ժամանակը խրոխտութիւնը և անպօրութիւնը վիճակ էր յեռիններին։

V.

Պարոնի ճանապարհ է ընկնում դէպի Վերմօնտ։

Ուամպումի տանը իմ մի շաբաթ կենալուց յետոյ, նա ինձ յայտնեց, թէ իրան մեծ որդու հետ Վերմօնտ է գընում իրան Հնդկայի ծառայների տեսութեան համար, և թէ ես կամենամ, այն ժամանակը նրանց հետ կարող եմ ճանապարհ ընկնել։

Մենք երեք հոգով ճանապարհ ընկանք, Կոնեկտիկուտ գետը անցկացանք, Նորվանպոն և նրա ափովը գնացինք Խալ—Ֆիլդովը, Դերֆիլդովը և Գրենֆիլդովը։

Մենք շատ տով այնտեղը եկանք, ուր այժմ Բրատլբորո

քաղաքն է շինած, և ուր այն ժամանակը թանձր անտառի մէջը միայն մի քանի խրճիթներ կային շինած։

Երեք օրից յետոյ մենք բեղուսուն չըմէջի մօտ հասանք որ հենց վերմնտումն է գտնվում, տասը մղոն հեռաւորութեամբ Բօստոնից դէպ՝ի հիւսիս։

Այդ տեղը իսկապէս ամայի էր. Կենեկտիկուտի գետը կատաղութեամբ թափվում են բարձր ժայռից և փրփրում են։

Սկզբում ես այդ տեսարանից վախեցի, իմ գլուխս պտտում էր դալիս և նրա խշշոցը հանարեա՛ թէ բոլորովին իմ ականջներս խլացրուց։ Բայց փոքր առ փոքր ես սկսեցի դէսուդէն նայել, ամբոխ խշշոցին և արդէն սկսեցի զմայլել այդ վայրերի և զարհուրելի տեսարանի վերայ։

Հնդկացիները երբեմն գալիս էին այս տեղ ամեն աշնան ժամանակը և երկայն, սուր փայտերով մեծամեծ ձկներ էին ջարդում, որոնք աշխատում էին բարձր ջրվէժների վերայ վեր լինել և առանձնապէս սամ ձկներն էին։

VI.

Պարէզի սկզբը մինչև գիշերը։

Հնդկացուց փոքրիկ գիւղը, դէպ՝ի ուր մենք ճանապարհ ընկանք, ջրվէժից դէպ՝ի արևմուտք էր գտնվում, մինչև

նրա մոտ գնալը, մենք շուտ նկանք անտառի մէջ մի նեղ և վայրենի ճանապարհով և տեսանք մի արջ, որ ուղիղ դէպ՝ի մեզ էր գալիս։

Ռամպուսի ձեռին մի կարաբինայ հրացան կար, նա ուղից դէպ՝ի իւր նպատակը (զարավուլել) և հրացանը դարդակեց։ Գնդակը (գուլան) ուղիղ դիպաւ արջի գլխին, բայց չ՝ը սպանեց նրան, որ արջը կատաղութիւնով վազեց, սատիկ գոռաց, յետ թաթերի վերայ կանգնեց և ուղիղ յարձակուեց Ռամպուսի վերայ, որը արջին թողուց իրան մօտենալ, դանակը հանեց ու նրա կողքումը ցցեց և այդպիսով նրան սպանեց։

Երիկունը մենք մտանք Հնդկացւոց փոքրիկ գիւղը, որը մի քանի վիգվամներից էր բաղկանում։ Վայրենի բնակիչները մեզ վերայ խիստ էին մտիկ տալիս։

Գնելու ժամանակը արդարի ծագելու միջոցումը, ես զարմացայ հրացանների, սղաղակների և շառաչիւնների ձայներից։

Վիգվամները դուրս թռչելով, ես տեսայ որ բոլոր Հնդկացիք անտառն են փախել և թէ քան մարդ մեր զինուորներից նրանց քամակից էին ընկել հրացանաձգութեամբ։ Թողած վիգվամները այրուած էին։

Զինուորները վախենալով, որ Հնդկացիք յետ չ՝ը դառնան, իրանք շտապեցին յետ փախչել, որ քանի որ կարողանան մինչև մթնել իրանց բերդը հասնեն։

Նրանք ինձ իրանց հետ տարան, և ինձ ճանապարհին հարցրին, թէ ինչպէս է էլել, որ ես Հնդկաց-ոց մէջն եմ ընկել։ — Այն ժամանակը ես պատասխանեցի, թէ հիւմ ինկայ նրանցից մէկի մօտ, բայց նրանք սկսեցին ինձ համոզել, որ այդ Հնդկացիք արդէն շատ են ապիտակներին սպանել, բայց և օգնում են Կանադեան գաղղիացիներին ձեր դէմ կռուիլ։

Մեր կասկածանքը ահա կատարուեց։ Դեռ մինչև բերդը չ'ը հասած, կրկին մօտիկ հրացանաձգութեան ձայն լսեցինք. մէկ գնտակ մեր գլխների վերևովը անցաւ։ Այդ դարձեալ այն միևնոյն Հնդկացիներ էին։

Զինուորները պատրաստուեցին իրանց ապահովութեան և պաշտպանութեան համար։ Հնդկացիները այնպէս համառութիւնով թագկացան ծառերի տակին, որ անտառի մէջը չէր կարելի նկատել նրանցից և ոչ մէկին։

Միւս կողմը աչք դցելով, որ կողմից որ հրացանաձգութիւն արին, ես զարհուրեցի Ռամպու�մին տեսնելով, զինուորներից մէկը նմանապէս նկատեց նրան և իսկոյն նրա վերայ հրացանը դարդակեց։ Իմ հին ծանօթը հենց իսկոյն այն բոպէին վեր ընկաւ և դուցէ թէ ապանուեցաւ։

Այդ բանի վերայ Հնդկացիները վայրենի կերպով աղաղակեցին և սաստիկ զարհուրելի ձայնով, զինուորները, այդ բոպէովը շահուելով, ներկայացրին իրանց քայլերը և այն միևնոյն խրիկունը մենք դամեր հասանք։

VII.

Գերոֆորդ, խարոխաց, Կոնկոռեկոռ գեռը:

Բերդումը ես հինգ կամ վեց օր մնացի, յետոյ Կոնեկոռիկոռա գեռովը ես ցած գնացի, դէպ'ի Գերոֆորդ։

Այժմ այդ քաղաքը շատ գեղեցիկ է։ Նրա մէջը մէկ մեծ դատաստանատուն կայ, ուր դատաւորները ժողովուում են, մի տուն կայ խուլ և համրներին հոգատարութեան համար, մէկին էլ գժերին, և ուրիշ քաղաքական շինութիւններ։

Այսուամենայնիւ. ես շատ լաւ եմ միտքս բերում, թէ մի տուն տեսայ, որ Անգլիայեցին էր բերած և պարոն Վիլլիէին էր պատկանում, հենց այդ տան առաջը մի մեծ կաղնի կար կանգնած, որի միջումը արանից շատ տարի առաջ բնակիչները պահել են Կոնեկոռիկոռոի քարտէզը։

Այդ քարտէզը մի մագաղաթի կտոր էր, որով Անգլիացւոց Կարլոս XI թագաւորը, Կոնեկոռիկոռոի բնակիչներին ազատութիւն էր խոստացել։

Նրա մահից յետոյ, նրա եղբայր Յակոբը XI ժառանգից գահը և պարոն Էտմունդ Անդրոսին ուղարկեց Կոնեկոռիկոռոյ բնակիչներից այդ մագաղաթեայ քարտէզը յափշտակելու։

Հենց այն ժամանակը նրանք պահել են նրան մի մեծ կաղնի ծառի մէջ, որ ուղիղ Պարոն Վիլիէի տան դէմուդէմ է գտնվում:

Այդ տունը և կաղնին մինչև այժմ կենում են:

Գերմանիայումը ես մի նաւակի մէջ նստեցի և Կոնիգսբերգ գեղը միշտ ցած գնացի դէպ'ի Նիւ—Եորկ:

Այդ մեծ գետը գեղեցիկ երկրով է անցկենում: Նա իւր սկիզբը Կանադումն է առնում, մինչև երեք հարիւր մղոն գնալուց յետոյ ծովն է թափվում:

Դեռ ուժ մղոն չ'ը գնացած մինչև Նիւ—Իորկ, մի ջրարբուջարձ կայ, Խելգաս անունով, նրա մէջը ջուրը այնպէս եռէ գալիս և պտտվում է, որ շատ անգամ նրա մէջը յափշտակուած նաւերը, բոլորովին ոչնչանում են և ժայռին դիպչելով ջարդուփշուր են լինում:

VIII.

Նիւ--Եորկի մասին:

Ամերիկացւոց քաղաքներիցը ամենամեծն է—Նիւ—Եորկը, որ կղզու վերայ է շինած, գուդսոն գետի բերանի ափի մօտը: Նրա մէջը այժմ վեց հարիւր հազար բնակիչներ կան:

Նա ի սկզբանէ Հոլանդացիներից էր բաղկացած, բայց այժմ այնտեղ Եւրոպացւոց բոլոր ազգերին կը պատահես

գաղղիացւոց, Անգղիացւոց, Իսպանիացւոց, մինչև անգամ Տաճկերին էլ, մի խօսքով—աշխարհիս բոլոր մասերի բնակիչներին։

Այժ ժամանակը, որ. մասին ես ձեզ ասում եմ, Նիւ—Իօրկը շատ փոքր էր այժմեանի հետ համեմատելով։ Այժմ նա Եւրոպայի ամենաերևելի քաղաքների հետ կարող է համեմատել։

Նիւ—Իօրկցը Փիլիպոս Նաւասեռի հետ ծովով մի ամառամը ճանապարհ ընկայ մինչև 'ի Բոստոն։ Ճանապարհին մենք Նիւ—Պօրտ քաղաքին տեսութիւն գնացինք։

IX.

Չենկինսի սնցքը։

Այժ քաղաքումը ես պատահեցի Չենկինս Չահել մարդու, որ մի քանի տարով ինձանից մեծ էր, նա հենց նոր էր եկած Արևմտեան Հնդկաստանից և հարաւային Ամերիկայից։

Արևմտեան Հնդկաստան են ասում այն կղզիներին, որոնք հիւսիսային և հարաւային Ամերիկայի մէջ տեղն են գտնվում։

Նա ճանապարհ ընկաւ Նիւ—Պօրտից, որ Բոռ—Էիլենդում է, «Եանկի» գօրաշնդի հետ Բոստոն Նաւասեռի առաջնորդութեամբ,

Մի քանի օրից յետոյ նրանք մի գաղղիական մեծ նաւ տեսան, պէտք է ասած, որ այն ժամանակը գաղղիացւոց հետ մենք պատերազմում էինք, բայց նորա համար էլ զբաղունդը ամենայն կերպով աշխատում էր թշնամուցը հեռանալ, թշնամին էլ դարձ դրից իւր ճիգը նրան հասնելու։

Վերջապէս գաղղիացիք այնպէս մօտեցան, որ կարող էին հրաձգութիւն անել, բայց այդ իրիկունն էր և հրաձգութիւնը մի մեծ վնաս չէր պատճառեց «Եանկի» զօրաղնդին։ Նրա մէջը միայն երկու մարդ սպանուեցին, զինշերայ վրահասնելը պատերազմը դադարեցրեց։ Բաւական նաւապետը մի թուղթ նիցը օգուտ քաղեց և գաղղիացիք նրան աչքից կորցրեցին։

Երկու օրից յետոյ զօրաղունդը Հարաւային Կարոլինի Զարլստոնում անուանուած քաղաքը հասաւ, ուր բնակիչների մեծ մասը Նեգրաներ էին։

Զարլստոնումը Նեգրոնների մարդկերանցը, կանանցը և երեխանցը հասարակական փողոցումը այնպէս էին ծախում, ինչպէս մենք ապրանք ենք ծախում։

Զարլստոնումիցը զօրաղունդը դէպ՝ի Կուբայ կղզին ճանապարհ ընկաւ, որ Արևմտեան Հնդկաստանի կղզիների ամենամեծն է։

Արևմտեան Հնդկաստանը յայտնի է իւր շաքար դուրս բերելովը։ Շաքարը մի շաքարեայ եղեգն կոչուած բոյսից է շինվում, որը փոքր ինչ սովորական եղեգին նման է։ Նրան

չոգացնում են և նրանից մի հիւթ են հանում, տակին շաքարը նստում է։

Ջենկինսին մի անբախտութիւն պատահեց։ Խարտեցի հարրած վինտորը նրան և նրա երկու ընկերներին հայհոյեց։ կռիւ ծագեց, ուր վինտորը սպանուեցաւ։

Ջենկինսին բարեկամների հետ միասին բռնեցին և երեքին էլ Հարաւային Ամերիկայի Պերի հանքումը երկամեայ մշակութեան դատապարտեցին։

Նրանք հարկադրուած էին խորը հողի տակը աշխատելու և արծաթեայ հանք հանելու։ Նրանց գլխաւորները շատ անգամ բողոքելին նրանց հետ խիստ էին վարվում։

Երկու տարուց յետոյ նրանց ազատութիւն տուին և նրանք Պերից ճանապարհ ընկան դէպի Բրազիլեայ, այսինքն արևմտեան ափերը դէպի արևելահարաւային Ամերիկան։

Պերուն խարտեցիներին է պատկանում։ Հարաւային Ամերիկայումը այսուամենայնիւ դեռ և այժմ, շատ բուն բնակիչներ կամ հնդկացիք կան։ Նրանք փոքր ինչ լուսաւորեալ են, բայց բոլորն էլի բաւականի կռիւտ են։

Ճանապարհորդներին ոչինչ այնքան չի ապշեցնում, ինչպէս լեռների շղթաները, որոնք հիւսիսից դէպի հարաւ են ձգվում, այդ լեռները կոչվում են Կորդիլերեան և աշխարհիս ամենաբարձր լեռներից մէին է համարվում։ Նրանցից ամենաբարձրը չորս մղոն բարձրութիւն ունի և Չիմբորասոյ է կոչվում։ Այդ լեռներից մի քանին էր-

տընջենական ձիւնով են ծածկուած, միւսները միշտ ծըխում են և շատ անգամ բոց և հեղանիւթ են դուրս հանում։ Այդ յեռիները հրաբուխներ են կոչվում։

Հարաւային Ամերիկայումը շատ ալմաս և բրիլեանտ կայ։ Անձրևը այդ քարերը լեռներից քշում է դէպ՝ի հովիտները։ Բրիլեանտները աւազումն են գտնվում, որոց լուացման համար նեղրոներին են գործածում։

Պերուէցը Զինկինոը Բրազիլիայի թագաւորանիստ Բիոժանեյրո քաղաքը եկաւ և այնտեղից դէպ՝ի հիւսիսային Ամերիկայ ճանապարհ ընկաւ։

X.

Հաւակոծութիւն։

Հենց որ ես ՆԻՒ—Յորքի նաւահանգստից դուրս եկայ խոյն երկարաւուն ձիւնը վրակալաւ և խիտ հակառակ քամին փչեց, որը մեզ դէպ՝ի ետը սկսեց տանել։

Վախենալով, որ մեր նաւակը չ՝ըտանուի դէպ՝ի ժայռերը և կտրկտոր չ՝ըլնի, մենք շտապեցինք բաց ծովը մտնել, նախազգուշութեամբ խիտ քամուցը մենք բոլոր առաղաստները վերցրինք։

Քամին ամեն վայրկեան սաստկանում էր, ծովը այնպէս սև էր ընչալէս ածուխ, միայն թէ ալիքների գլուխները

սատիկ զօրութեամբ բարձրանալով, երբեմն կրկին արա-
գութեամբ ցածրանալով։

Մեր փոքրիկ նաւակը ծովի վերայ ինչպէս մի թեփուռ
էր դրած, ալիքները նրան երբեմն կողքի վերայ շուռ էին
տալիս, երբեմն միմեանց մէջ հուպ էին տալիս և շատ անգամ
երևում էր թէ նրան պատրաստեն ջրով լցնել։

Սոյպէս մի քանի ժամ շարունակուց—գիշերը վրա-
հասաւ։ Ինձ երբէք նրա մերձենալը պարհուրելի չ'երևեցաւ։

Փոթորիկը չ'ը քիչացաւ և մենք բոլորովին նրա կամքին
էինք տուած։

Իմանալով, որ ամէն մօտիկ է, մենք ամենիցը շատ
էինք վախում, որ մինչև լոյսը նրա մօտ չ'ը հասնենք։

Առաւօտը վրահասնելու պէս մենք տեսանք մեր վիճակի
բոլոր վտանգները։

Մեզ մօտ մի ամէ կար, սուր և բարձր ժայռերով լեռը,
որոնց մօտ էր փչում մեզ քամին։

Մենք համարեա թէ մեզ արդէն խսկապէս խեղդուած
էինք համարում, մեզանից մի քանիսները բարձր լաց էին
լինում, միւսները չոքած առ Աստուած աղօթում էին,
բայց մէկը վախերացը նաւի ամէնցը թեքուելով ծովն ընկաւ
և խեղդուեց։

Մենք շուտով զգացինք, որ մեր նաւակը ժայռին դէմ
առաւ։ Ի՞նչպիսի պարհուրելի բան է։ Ես արդէն հա-
ւատի էի, որ նաւը կը կոտրուի և մեզ բոլորիս էլ ծովը

կ՚ածէ, յանկարծակի սաստիկ ալեաքը նաւակը բարձրացրին և այնպէս տարան նրան միւս ժայռի իսկ գագաթը։

Զեզ երևակայեցրէք մեր ուրախութիւնը, երբ մենք տեսանք, որ այդ ժայռիցը, թռչելով միւս ժայռերի վերայ, կարելի էր մինչև ափը գնալ։

Այդ տեղ մենք իմացանք, որ Նիւ—Հեմպշերում մեր գտնվում՝ Բօստոնիցը դէպ՚ի հիւսիս վաթսուն մղոն հեռաւորութեամբ, ուր և իսկոյն ճանապարհ ընկայ։

Ամենումի գրաւոր ազգերը ես աշխատեցի ոգքան կարելի էր իմանալ, ինչ որ Ամերիկայի պատմութեանն է վերաբերում, Հնդկացիների վիճակին, նրանց սովորութիւններին և կեանքին։ Համարեա թէ երեքհարիւր եօթանասուն տարուց առաջ Եւրոպայի բնակիչները բոլորովին չ՚գիտէին Ամերիկայի լինելը, համարելով միայն աշխարհս երեք մասը՝ Եւրոպայ, Ասիայ և Աֆրիկայ։

XI.

Քրիստափոր Կոլումբոսի մասին։

Գենուայումը ծնուած Քրիստափոր Կոլումբոսը սկսեց հաստատել, որ Ատլանտեան ովկիանոսի մեծ ալէոք է որ մի հաստատ երկիր լինի։

Եւրոպայումը համարում էին, որ նա՚ի զուր է ասում,

Կոլումբոսի վերայ ծիծաղում էին, բայց չէր նայելով դրա վերայ, նա անդադար նաւեր էր ուզում, որոնցով կարողանար իրա նախագուշակած երկրիս նոր մասը գտնելու գնալ։

Եւրոպական տէրութիւնները այդ խնդիրքը բոլորովին չընդունեցին։ Վերջապէս Իսպանացի Իզաբելլայ թագուհին, նրա համոզմունքիցը շարժուած լինելով, բայց փող չունենալով, նրան տուեց իրա բոլոր բրիլիանտները, նա այդ բրիլիանտները ծախեց, այդ փողերովը մի քանի նաւակներ առաւ և ճանապարհ ընկաւ։

Սակայն ժամանակի նաւերը և շքենաւերը շատ մեծ են և ամուր, նրանց մէջը հանգստանալու սենեակներ կան, որոնք կոչվում են կայուտներ այսինքն նաւի մէջի սենեակներ ճանապարհի պարագայքը պահելու համար և նրանք անդադար Ատլանտեան ովկիանոսովը Եւրոպայիցը Ամերիկայ են գնում և Ամերիկայիցը Եւրոպայ։

Բայց սրանից 370 տարի առաջ էր ապրում Կոլումբոսը, նրա ժամանակը այդպիսի ամուր և մեծ նաւեր չէին կարողանում շինել, և դորա համար էլ բաց ծովի վերայ դընալը շատ վնասակար էր։

Ընդունակ և յանձնառու Կոլումբոսը այստեղ անդադար չէր վախենում դրանից։ Նա Իսպանեայիցը ճանապարհ ընկաւ և գնաց դէպ՝ի արևմուտք. այդէն մի քանի օր նա գնաց չէր տեսնում ոչինչ բաց՝ի երկնքիցը և ջրիցը, յանկարծ մի վոմծորիկ բարձրացաւ։

Սաստիկ կերպով նաւերը տատանվում էին, ալիքները բարձրանում էին և իջանում և քիչ էր մնում թէ նը-րանց ջրով լցնի։ Վախեցած նաւաստիները Կոլումբոսին խնդրեցին յետ դառնալ դէպ'ի իւրեանց Հայրենիքը, որին նա չ'ը համաձայնուեց, յետոյ նրանք խրթմունք դցեցին և կամեցան նրան ապանել։ Կոլումբոսը այսուամենայնիւ իւր դիտաւորութեան վերայ հաստատ մնաց։

Ճանապարհ ընկնելուցը եօթանասուն օր յետոյ նաւաստիներից մէկը, որ կայմի վերայ կանգնած էր, յանկարծ աղաղակեց. «Երկիր, երկիր։» Կոլումբոսը ուրախութեան մէջն էր։ Այդ երկիրն էր—Ամերիկան։

Բայց'ի Հնդկացիներից ոչ ոք չ'ը գիտէր, թէ նա կայ։ Առաջին անգամ այնտեղ գնացող Եւրոպացին Կոլումբոսն էր և նրա ընկերները։

Այդ Ամերիկայի գիւտը 1492 թուին էլաւ, Քրիստոսի Ծննդենից յետոյ։

Դուք, յայտնի բանէ, բոլորդ էլ գիտէք, որ այս տարին կոչվում է 1865, նրա համար, որ Յիսուս Քրիստոսը ծնուել է 1865 տարի սրանից առաջ, և թէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները իրանց թուականը սկսում են Քրիստոսի Ծննդենից։

Երբ Կոլումբոսը եկաւ ափի մօտ, այն ժամանակը այնտեղ այնպիսի մարդիկ տեսաւ, որ բոլորովին Եւրոպացիներին նման չ'էին։

Նրանց մարմին կարիքապրնձապոյն էր, և համարեա թէ ակլոր էին։ Այդ Հնդկացիներն էին։

Հնդկացիները շատ զարմացան, տեսնելով Կոլումբոսին և նրա նաւերը։ Նրանք մինչև այդ ժամանակը ոչ նաւեր էին տեսել և ոչ էլ ապրատակ մարդիկներ։ Նրանք Կոլումբոսին քաղցրութեամբ ընդունեցին և նրան թուեցին իբրև սատանիկ բարի մարդիկներ։

Այնտեղը, որի մօտ նա վերեկաւ, Արևմտեան Հնդկաստանի կղզիներից մէկն էր, Սան—Սալվադոր անուամբ։

Մի քանի օր այնտեղ լինելուց յետոյ, Կոլումբոսը ցետ դարձաւ դէպ՝ի Խսպանեայ և իրան ճանապարհ ընկնելուց խակապէս եօթը ամսից յետոյ այնտեղ հասաւ։

Եւրոպայումը շուտով բոլորը իմացան, թէ նա գտաւ մի նոր, մինչև այդ ժամանակը անյայտ երկիր, որ սեղ շատ համեղ և զանազան տեսակ պտուղներ, ոսկի, արծաթ, և այլ հարստութիւններ կան, և թէ այդ երկրի բնակիչները բոլորովին Եւրոպացւոց նման չեն և այլն և այլն։

Նրա յաջողակ ճանապարհորդութիւնը բոլոր Եւրոպացիների մէջ զարթնեցրուց մի ցանկութիւն տեսնելու այդ նոր երկիրը, բայց ըստ մեծի մասին յարիշտակել ոսկի և արծաթ։

Անթիւ մարդիկներ ճանապարհ ընկան դէպ՝ի Ամերիկայ (այդպէս էին կոչում աշխարհիս նոր մասին), բայց նրանցից շատերը ապտակ և անզուգ մարդիկներ էին. նրանք

ականցին խնդՀ Հնդկացիներին ապանել, նրանց բնակարան-ները քանդել, նրանցից ոսկի խլել, նոյնպէս արծաթ և մինչև անգամ իսկ երկիրն էլ։

Խպանացիք աւելի խիստ վարուեցին Հարաւային Ամերիկայումը և Մեխիկայումը։

XII.

Կորտեսի և Պիզարրոյի պատմութիւնը։

Մեխիկայի ընդարձակ կայսրութիւնը Ամերիկայի ամենահիւսիսային կողմն է գտնվում։ Կայսրութեան թագաւորանիստ մեծ և գեղեցիկ Մեխիկայ քաղաքը բարձրացած էր մի մեծ գեղեցիկ հովտի մէջ, և այն ժամանակը Ամերիկայումը առաջին քաղաքն էր։ Նա և այժմ դեռ ևս կենում է, բայց այն ժամանակը այդ քաղաքը աւելի ընդարձակ էր և անթիւ բնակիչներ ունէր։

Թէպէտ ոչ մի ժամանակ Մեխիկացիք ոչնչով խպանացիներից չէին կարակրուել, բայց խպանացւոց կայսրը վրձռեց պատերազմել և նուաճել բոլոր Մեխիկան իւրեան իշխանութեան տակը։

Ամէն առաջարկութիւնը յանձնուած էր Ֆերնանդ Կորտեսին, որը իրան հետ վեց հարիւր զինուոր վերցնելով գնաց

Մեկսիկոյ ճանապարհ ընկաւ և մի քանի ճակատամարտներից յետոյ, գնաց մինչև հենց թագաւորանիստ քաղաքի մօտ։

Այդ ժամանակը այն տեղ թագաւորում էր Մօնտեզումա կայսրը, որը Կորտեսին հիւրընկալութիւնով ընդունեց և նրա հետ շատ քաղցրութիւնով վարուեց, բայց այդ ամենևին չը շարժեց խապանացի զօրավարին։

Մեկ անգամ նա յանկարծ կայսերական պալատի վերայ ընկաւ, հրամայեց հենց կայսրին էլ բռնել, շղթաների մեջը դրեց նրան, պահապաններ դրեց նրա վերայ և նրա հետ շատ խիստ վարուեց, յուսալով որ դրանով Մեկսիկացուց շուտով կարող է քաղաքը անձնատուր անել տալ։

Ակատելով միանգամայն, թէ նրանք նրան չ'են հնազանդվում, նա մտքումը դրեց պայման դնելու համար նրանց մօտ թողնու Մօնտեզումին։ Կատաղած Մեկսիկացիք Կորտեսի վերայ նետեր ղցեցին, որոնցից մէկը դժբախտաբար կայսրին դիպաւ և մահու չափ նրան վիրաւորեց։

Մօնտեզումի մահիցը յետոյ, նրա որդի Գուատիմօզինը թագաւոր դարձաւ, բայց քաղաքը շուտով պէտք էր անձնատուր լինէր և մեկսիկացւոց ազատութիւնը խապանացւոց իշխանութեան ներքոյ ընկաւ։

Խապանացւոց միւս զօրավարը Պիզարրօն հարաւային Ամերիկայումը գտաւ. Պերու. երկիրը։

Այստեղ ոսկու և արծաթի շատ հանքեր գտնելով, նա մտքումը դրեց այդ հողը նուաճել։

Առաջ Պիզարրոն խաբեբայութեամբ Հնդկացւոց ցեղի առաջնորդներից մէկին բռնեց, որ Ատահուալպայ էր կոչվում, խոստանալով նրան ազատել, եթէ մեծ դին կը վճարի։

Ատահուալպան ուրախութեամբ հաճանձնուեց այդ բանին, Պիզարրոն ոսկի առնալով, աւելի գազգեց Մեկսիկացւոց և շարունակեց պատերազմել Պերուացիների հետ, վերջապէս 1532 թուին նա բոլորովին նրանց նուաճեց։

Պիզարրոն նրանց տուեց իրա օրէնքները և Լիմայ քաղաքը հիմնեց, ինքն էլ հենց ապատեց 1541 թուին։

1607 թուին, Անգլիացի հարիւր մարդ եկան Վիրգինիայ, և բնակուեցին Ջեմս գետի վերայ, ուր շինեցին Ջեմս-տոուն քաղաքը։

Նրանք հիւսիսային Ամերիկայում բնակուող առաջին Եւրոպացիք էին, դրանից առաջ այնտեղ միայն Հնդկացիներն էին բնակվում և նրա միջումը քաղաքներ չ'էին։

Այդ բոլոր երկիրը մեծամեծ անտառներով ծածկուած էր, որոնց միջումը արդէն ինչպէս որ ասել ենք բնակվում էին բազմաթիւ Հնդկական ժողովուրդներ։

Հիւսիսային Ամերիկայի բուն բնակիչները շատ քաղցրութեամբ չ'ընդունեցին նրանց մտա եկած Եւրոպացիներին, աշխատում էին ինչքան կարելի է նրանց փնտրել և մինչև անգամ երբեմն սպանում էլ էին նրանց։

Մէկ անգամ Ջեմս—տոուն բնակիչ Սմիթը նաւակով վերև եկաւ գետովը, Հնդկացիները նրան տեսնելով, բռնե-

ցին և տարան իրանց առաջնորդի մօտ, որը խորհուրդ անելով, Սմիթին 'ի մահ դատապարտեց: Երան տարան ժողովուրդի առաջը և հենց թագաւորն ինքը նրան հաստ փայտով խփեց, յանկարծ Հնդկացիների աղջիկներից մէկը նրանց մէջը ընկաւ և անբախտին իրանով ծածկեց։ Այդ հենց առաջնորդի աղջիկն էր։ Հայրը նրա մերձենալովը 'ի գութ շարժուելով, համաձայնուեց Սմիթին արձակել։

Երիտասարդ օրիորդի այդպիսի վարմունքը, որ ազատեց իրան անծանօթ մարդու կեանքը, ցոյց է տալիս Հնդկացիների բարոյական յատկութիւնները։

1615 թուին, մի քանի Հոլանդացիներ այն ժամանակը Մանհատան կոչուած կղզու վերայ եկան, և այնտեղ Նիւ—Յորկ քաղաքը շինեցին։

1620 թուին, բազմաթիւ անգլիական Պուրիտաններ Պլիմուտումը և Մասաչուսետսումը բնակուեցին։

Պուրիտանները նրա համար Անգլիայից Ամերիկայ եկան, որ այնտեղ ազատ շարունակեն իրանց աստուածապաշտական ծէսերը, որոնք փոքր ինչ Անգլիացիներից զանազան էին։

Երանք մի կատարեալ ամայի տեղ բնակուեցին, որը Հնդկացիները իրանց մէջը փոխոխական ցաւ երևալու պատճառաւ թողել էին։

Պուրիտանները 19 ընտանիք բաժանուեցին, որոնցից ամեն մէկը իրան համար մի փոքրիկ տուն շինեց։

Այդ Եւրոպացւոց անները անանելուց, Հնդկացիները, որոնք ընդհակայ անտառներումը էին բնակվում, նրանցից հեռու գնացին։

Մէկ անգամ Պուրիտանների մեջ մի մարդ եկաւ, որ պատկերով Հնդկացիների նման էր, բոլորովին խատակ անդղիերէն խօսաց։ «Բարի ողջոյն ձեզ, Անդղիացիք, բարի ողջոյն ձեզ։»

Նրանք շատ զարմացան, լսելով, որ նա նրանց մայրաքաղաքն լեզուաւն է խօսում։ Այդ ողջոյն տալուց յետոյ նա յայտնեց նրանց, թէ անդղիերէն խօսելը մի անդղիացի ձկնորսից է սովորել, թէ շատ է սիրում նա Անդղիացիներին և թէ նրանց մօտ կը բերի Հնդկացւոց երեւելի առաջնորդ Մասասուային։

Այդ յետոյ յայտնի բանէ շուտով եկաւ և խօսք կապեց Անդղիացիներին ոչ մի վնաս չը պատճառել, եթէ նրանք ինքները չը զրկեն Հնդկացիներին։

Այդ կերպով Եւրոպացիները Վիրգինեայումը բնակուեցին նոյնպէս Նիւ—Իօրկումը և Մասաչուզետումը։ Նրանց բնակարանները գաղթականութիւններ կոչուեցին, բայց հենց նրանք էլ գաղթականներ, որ նշանակում է, նոր բնակուող մարդիկ։

Նոր բնակութեան տեղումը գաղթականներին հազարաւոր դժուարութիւններ, հիւանդութիւններ, սով և վերջապէս անդադար պատերազմներ պատահեցին վայրենիների

հետ։ Զ՝ը նայելով այդ բոլոր թշուառութիւնների վերայ, գաղթականութիւնները ծաղկեցան և նրանց օրինակին հետևելով, Եւրոպայիցը սկսեցին գալ նոր գաղթականներ։

1621 թուին, մի քանի Շվեդներ բնակուեցին Դելաուարը։

1634 թուին, անգլիացւոց ազնիւ Լորդ Բալտիմորը, հռոմա—կաթոլիկադաւան մարդիկներից բաղկացած մի գաղթականութիւն տարաւ դէպ՝ի Մարիլանդ։

1681 թուին, կվակեր, Վիլիամ Պենը, կվակերների գաղթականութիւն արաւ այն երկրումը, որը նրա անունով կոչվում է Պենսիլվանեայ։

Կվակերները ճշմարիտ Աստուծոյն են հաւատում, բայց բոլորովին առանձին աստուածպաշտական ծէսեր ունեն նրանք միշտ թուխ գոյնով շորեր են հագնում, երբէք ոչոքի առաջը գլուխ չեն վերցնում և բոլոր ծանօթներին, թէ անծանօթներին, պատուաւոր թէ հասարակ մարդ են, ասում են դու, այն բանի վերայ հաստատելով, թէ Աստուծոյ առաջին բոլոր մարդիքները հաւասար են։

Ամերիկայումը գաղթականութիւնները այնպէս շուտով շատացան, որ առաջին Վիրգինեայ եկած Եւրոպացիներիցը յետոյ, համարեա թէ այն հողի տարածութիւնը, որը այժմ Ամերիկայի Միացեալ նահանգներ է կոչվում, շուտով բնակիչներով լեցուեց։

XIII.

Երկրի հիւսիսային Ամերիկայի մասին:

Բայց գաղթականները այդ ժամանակ բոլորովին այնպէս չէին բնակվում, ինչպէս այժմ Ամերիկացիք են բնակվում, (սովորաբար Ամերիկացի են ասում Ամերիկայումը բնակուող Եւրոպացիներին, բայց նրա բուն ժողովուրդներին Հնդկացի են ասում):

Երկայ ժամանակումն Ամերիկայի Միացեալ Նահանգներումը շատ քաղաքներ և մեծամեծ ճանապարհներ կան, որոնք սրանից 200 տարի առաջ չ'ը կային. այն տեղերը, ուր հրանք այժմ գտնվում են, անանցանելի անտառներով ծածկուած էին:

Այժմ շոգեայլները և շոգենաւերը շատով մեկ քաղաքից միւսն են տանում, բայց այն ժամանակը այդպիսի հաղորդակցութիւններ բոլորովին չ'կային և այնտեղ ճանապարհորդելը վտանգաւոր էր, որովհետև անտառները լեցն էին Հնդկացիներով և վայրենի գազաններով:

Այն բոլոր տեղերը, ուր անգղիացիները բնակուեցին, Անգղիային էին պատկանում: Համարեա թէ այդ միևնոյն ժամանակը Գաղղիացիք էլ հիւսիսային Ամերիկայի կանա-

գիտությունը և Օգիոն ու Միսխիսի գետերի արևմտեան երկայնութեամբը բնակուեցին։ Այդ գաղթականութիւնները գաղղիական էին պատկանում։

1756 թուին Գաղղիայի և Անգղիայի մէջը պատերազմ բացուեցաւ։

Որա հետևանքը այն էլաւ, որ Գաղղիացւոց գաղթականները աշխատեցին անգղիացւոց գաղթականութիւններին նուաճել, բայց անգղիացւոց գաղթականներն էլ իրանց կողմից սկսեցին Կանադեայի և Օգիոյի և Միսիսիպի գետերի վերայ եղած գաղղիացւոց գիւղերը քանդել։

Կանադեայի գլխաւոր քաղաք Կվեբեկը լաւ ամրացած էր և շրջապատած։ Գաղղիացիք անթիւ Հնդկացիների հետ միանալով, Անգղիացիներին մեծ վնաս պատճառեցին։

Անգղիացւոց Վոլֆ ժեներալը մտքումը դրեց յարձակուելով քաղաքը վերցնել։

Կվեբեկցը մտիկ մի բլուր կար, որ Աբրահամեան բլուր էր կոչվում։ Վոլֆը, Գաղղիացւոց հետ մի քանի անյաջողակ դէպքերից յետոյ, մտքումը դրեց նուաճել այդ բլուրը և մութը գիշերը նրանց իրան բոլոր զօրութիւնովը յաջողակութեամբ առաւ։

Առաւօտեան ժամի տասին տաք պատերազմը սկսուեց։ Գաղղիացւոց զինուորները մի քանի անգամ քաջութեամբ, բայց 'ի զուր յարձակուեցին Անգղիացւոց վերայ։ Վերջապէս ջարդուեցին և հարկադրուեցին փախչել։ Յաղթութիւնը

Անգլիացւոց կողմն անձկացաւ, հազար մարդ գաղղիացի-ներքին սպանուեցան և գերի տարուեցան, նրանց առաջ-նորդող Մօնկալմը նրանց տուած վերքիցը շուտով մեռաւ, բայց և Անգլիացւոց ժեներալ Վոլֆը նոյնպէս սպանուեցաւ պատերազմի դաշտումը։

Այդ պատերազմիցը հինգ օր յետոյ այդ Կվեբեկ քա-ղաքը Անգլիացիներին անձնատուր էլաւ, որոնց և պատկա-նում է այն ժամանակից յետոյ։

Մօնրէալ քաղաքը և Կանադիայի մէջ գտնուած երկիրները գաղղիացւոց ձեռի տակը անցկացաւ։

Անգլիացւոց գիւղերը Ամերիկայումը գաղթականութիւն-ներ կոչուեցին, պատկանում էին Անգլիացւոց և բաղկաց-նում էին, այսպէս ասել, նրանց սեպհականութեան մի մասը։

Անգլիացիք տուին Ամերիկացիների համար ծանր օրէնք-ներ և առհասարակ ամենայն կերպիւ աշխատում էին նը-րանց ճնշել։

Գաղթականներիցը հենց շատերը անգլիացի բնակիչներ էին և այնտեղ կրթուած, միւսների էլ պապերը կամ պա-պուպապերը Ամերիկայումը բնակուող Անգլիացիք էին, նորա համար էլ նրանք բոլորը, Անգլիան իրանց ներկայ հայրե-նիք համարելով, երկար ժամանակ և համբերութեամբ էին տանում բոլոր նեղութիւնները։ Վերջապէս այսուամենայ-նիւ նրանք վճռեցին անգլիացւոց կառավարութեանը խնդ-րել որ իրանց հետ ողորմածութեամբ վարուին, բայց այդ

մասին ոչ մի պատասխան էլ նրանք չըտացան։

Այդ ժամանակը Ամերիկացիները սկսեցին խորհուրդ տանել փորձառու և հմուտ մարդկերանց հետ, որոնք պէտք է վճռէին, թէ գաղթականները յարաբերուելով դէպ՝ի Անգլիան ի՞նչպէս պիտի վարուին։

Այդ կոնդրես կոչուած ժողովքը Փիլադէլֆիումը ծագունցաւ, յուլիսի 4-ին 1776 թուին, և հրատարակեց թէ Ամերիկացիները էլ չեն լինելու Անգլիացիներին հպատակ, այլ կը սկսեն իրանք իրանց կառավարուիլ։

Այդ անցքը կոչվում է ազատութեան հրատարակութիւն, և յուլիսի 4-ը և մինչև այժմ Ամերիկայի Միացեալ Նահանգներումը տօնում է։

Անգլիացիները շատ շուտ չ՝ը համաձայնուեցին Ամերիկացիներին անկախ ճանաչել, նրանք նրանց պատերազմ հրատարակեցին, որը ութ տարի շարունակուեց։

1775 թուին Անգլիացիները Բոստոն շատ զինուորներ էին ուղարկել և նրանց հրամայեցին Կոնկորդ քաղաքումը գտնուողներին, հրացանով, զենքերով, վառօդով, և ուրիշ պատերազմական գործիքներով նուաճել, որոնք բոլորը Ամերիկացւոց էին։

Զինուորները, որոնք Բոստոնից Կոնկորդ էին ուղարկուած, ճանապարհին Լեքսինգտոն քաղաքը մտան, որի բնակիչները նրանց տեսնելովը վախեցին, և եկեղեցու մօտ ժողովուեցին։ Զինուորները, ցանկանալով ժողովրդի ամբոխը

քշել, սկսեցին հրացանաձգութիւն անել։

Ամերիկացիները, այդպիսի վարմունքի մասին զինուորու-ցին, զօրքերի վերայ ընկան, և հարկադրեցին նրանց փախչելով յետ դառնալ և Բօստոն գնալ։

Դրանով սկսուեց Ամերիկացւոց պատերազմը անկախութեան համար։ Ամերիկացիները, իրանց տունը և ընտանիքը թողնելով, մեծ բազմութիւնով Բօստոնի մօտ ժողովուեցին, որը արդէն լիքն էր անգղիացւոց զօրքերով։

Ամեն օր պատերազմի էին ապատում։ Բօստոնի մօտ մի վանքեր անունով լեռը կայ, որի գագաթը քաղաքիցը երևում է։

Մէկ անգամ գիշերը Ամերիկացիք այդ լերանը տիրեցին և շուտով նրա վերայ մի հողեայ պատուար շինեցին։ Այդ տեսնելով Անգղիացիք վճռեցին շուտով նրանց այդ տեղից քշել։

Վեղուցովը անցկենալով, նրանք ափը դուրս եկան, և բունդ դունդ բաժանուելով Ամերիկացիների վերայ գնացին, որոնք թաղչելով հողեայ պատուարների քամակին՝ ըստ-թեամբ թշնամիների մերձենալուն էին ապատում։ Երբ Անգղիացիները այնպէս մօտիկ եկան, որ կարելի էր նրանց երես երես տեսնել, Ամերիկացիների առաջնորդողը նշան տուեց բոլոր հրացանները՝ ի միասին արձակել։ Անգղիացիներիցը շատերը վերընկնելով մեռան, միւսներն էլ յետ դառնացին, բայց նրանց շուտով միացան և երկրորդ անգամ յարձակուեցան։ Պատերազմը բաւական երկար շարունակուե-

ցաւ։ վերջապէս Ամերիկացիների դնտակ ու վառօտը հատաւ։ Նրանք պէտք էին հեռանայ և Անդղիացիք էլ լեռանը տիրեցին։

Բանիկը լեռան վրայի մարտը պատերազմի սկիզբն էր։

Ամերիկացիները իրանց առաջնորդող ընտրեցին Վաշինգտոնին և վճռեցին անձնատուր չ՝ը լինել Անդղիացիներին, բայց անդղիացիների կառավարութիւնը Անդղիացիցը անթիւ նաւեր ուղարկեց և էլի մի քանի հազար զօրք։

XIV.

Պարէյի անսովոր անցքը։

Եթէ մանրամասն ձեզ նկարագրենք բոլոր կռիւը և պատերազմը շատ երկար կը լինէր, բայց ես կը պատմեմ թէ ինձ ինչ պատահեց Բանիկերի Ջարդիցը երկու տարի յետոյ։

Ես, Ջենկինսը և ուրիշները Օնտարիոն լճի ափի վերայ գտնուող փոքրիկ բերդումն էինք գտնվում. և մենք մաքներումն դրինք միանալ միւս այն զօրքերի հետ, որոնք գտնվում էին ժեներալ Գէյտսի հրամանատարութեան ներքոյ, որ գտնվում էր Սարատոգի մօտ և ամեն րոպէ ապասում էր անպղնացուց բանակի կանադեայիցը գալուն, Բուրգոյն ժեներալի առաջնորդութեամբը։

Մեր խումբը 60 մարդուց էր բաղկանում։

Հենց միւս օրը 1/2 մէկ անտառի միջով գնալով, մօտ-

կանց մենք հրաշանաձգութիւն ըսեցինք, բայց որովհետև արդէն արեգակը մայր էր մտել և գիշերն էլ բոլորովին մութ էր, դորա համար էլ չէր կարելի ուշինչ նկատել։

Այնուամենայնիւ պէտք է նախադուշակել, որ Հնդկացիները մեզ թիւերի քանակիցը զարաւելել էին և այդ հրաշանաձգութիւնը նրանց գործն էր։

Մենք ջենկինսի հետ միւսներիցը փոքր ինչ յետ էինք գնում, յանկարծ նա կանգնեց, իրան կողքը բռնեց և վեր ընկաւ։

Ես նրա վերայ ընկայ, սկսեցի նրա գլխովը փաթաթուիլ. «թո՛ղ ինձ, թո՛ղ, նա ասաց։ Ես վիրաւորված եմ և «պէտք է մեռնեմ, բայց դու ազատուիր։ Հնդկացիները «իսկապէս մեզ շրջապատում են, փախիր, փախիր շուտով։»

Եւ իսկապէս չորս Հնդկացիներ դուրս թռան անտառիցը ինձ բռնեցին և քաշ տուին, այդ բոլորը այնպէս շուտ էլաւ, որ ես հազիւ կարողացայ միտք բերել։

Մի քառորդ ժամից յետոյ նրանք կանգնեցին, իմ կրունները քամակս կապեցին և քաշ տուին անդադար, ինձ հարկադրելով, որ ես շուտ շուտ գնամ։

Այս կերպով մի ժամ անցնելուց յետոյ, նրանք խոսի վերայ նստեցին, ուր և ինձ հրամայեցին նստիլ։ Այդ տեղ նրանց հետ միացան էլի 12 Հնդկացիներ և փոքր ինչ հանգչանալով, մենք բոլորս արագ քայլերով գնացինք հեռու անտառը։

Երբ նրանցից յուրաքանչիւրը, այն ժամանակը առանց քաղաքականութեան բրդում էին և ծեծում էին ինձ։

Օրուայ լուսանալու հետ, նրանք կրկին կանգնեցին, և սկսեցին անզգիարէն ինձ վանալան հարցմունքներ անել, որոնց ես նոյնպէս հարցերով պատասխանեցի իմ սեփական վիճակի մասին։ Նրանք ինձ ասացին, թէ էգուց նրանց աւաջնորդողը կը գայ և կը վճռի թէ ինձ ինչ կանեն։

Ինձ ծառայը կապեցին, ջահել հնդկացիները սկսեցին զուարճութեան համար ինձ վերայ նետաձգութիւններ անել։

Ներսերը իմ մօտս անցկացան, միայն երկուսը ինձ վերաբերեցին, բայց և դրանք էլ այնքան ցաւալի չէին, որ ժամանակը այսուամենայնիւ հնդկացիները սրտանց ծիծաղում էին, որովհետև իմ շարժարանքը նրանց զուարճալի էր։

Զը նայելով այսպիսի վատ դրութեան վերայ, ես չը յուսահատեցի։ Ես ամուր յոյս էի դրել, թէ Աստուած ինձ չի թողուլ, բայց բարկանում էի, որ այդ տմարդ մարդիկը իմ շարժարանքովը մի բաւականութիւն էին ստանում։

Այդ հրճուանքիցը զգուելով, նրանք ճաշի նստեցին, ինձ կապած թողնելով, յետոյ այսուամենայնիւ ինձ մի քանի պատառ խորոված տուին և ծառայը յետարին. բայց իմ ձեռները թօկիցը այնպէս էին ուռել, որ ես նրանց համաբեր թէ չէի կարողանում շարժել, և սովածութեանս չը նայելով, շատ քիչ կերայ։

Վերջապէս գիշերը վրահասաւ, ես մտքումս դրի թէ ինչը կը լինի մի փախչեմ, որովհետև գիտէի, որ հետևեալ առաւօտեան առաջնորդին դալատեան հետ ինձ մի ջարդարող մահով կը դատապարտեն։

Մենք մի փոքրիկ գետի ափում էինք գտնվում, որի ափերը սատիկ քարքարուտ էին և բարձր։ Ես ինձ ու ինձ դատում էի, թէ ևթէ ինձ չ՝ը յաջողի ծածուկ փախչել, ան ժամանակը կը ընկնեմ ժայռերը ջրի մէջը, և լող կը տամ գետի մէս ափը։

Երբ բոլորը իմ շուրջս քնեցին, ես սկսեցի աշխատել թոկը կտրել և ձեռքերս ազատել, յանկարծ հնդկացիներից մէկը դուրս թռաւ և իմ մօտ եկաւ ափոցին բարձրացրած։ Ես այնպէս կարծեցի, թէ նա այդ բոպէին հենց ինձ կը սպանի, բայց նա թոկերին նայելով և կարծելով, թէ ես քնում եմ, շուտով գնաց և պարկեց։

Կրկին մի քանի ժամ սպասելով, ես ձեռներիս սատիկ շարժելովը կարողացայ թոկերը կտրել, իմ ոտներս յետ արի, և կամաց քայլերով քնած վայրենիների միջով անցկացայ. նրանցից մէկը չ՝ը գիտում ինչպէս էլաւ։ Երբոլում խօսաց, ես վախեցի թէ նա զարթնեց և կը բռնի ինձ, բայց այդ իմ բախտիցը չ՝ը պատահեց։ Ծառի մօտ ցից դրած հրացանը վերցնելով, հազիւ շունչ քաշելով, ես շարունակեցի գընալ և համարեա թէ այնքան հեռու չ՝էի գնացել նրանցից, յանկարծ մի աղաղակ և շփոթմունք լսուեց նրանց մէջը։

Նրանք բոլորը զարմացան։

Երկու ժայռերի մէջը թափելով, ես աշխատեցի շուտ-չաս ինձ քաշել և ինչպէս քարացած կանգնեցի։ Նրանք բոլորը մօտեցան, բայց վերջապէս նրանցից մէկը տեսաւ, բարձրացրեց հրաձանը և ինձ զարաւուլեց, այսուամենայնիւ հրաձգութիւն չարաւ։

Ես այդ բոլէին շահուելով դուրս թռայ ժայռիցը դէպ 'ի գետը և լողուի, հրացանը աջ ձեռումս բռնելով։

Երկու կամ երեք հնդկացիներ իմ քամակիցը ընկան. դուրս գալով միւս ափը, ես սկսեցի փախչել, բայց յաջող հնդկացիները շուտով ինձ հասան, բռնեցին, յետ բերին, ուր կրկին առաջուանից աւելի պինդ ձեռներս ու ոտներս էլի կապեցին։

Առաւօտեան էլի շատ վայրենիներ եկան և նրանց հետ իրանց գլխաւորը, որին նրանք պատուեցին թէ ինչպէս ես բռնուեցի, ինչպէս կամեցայ փախչել, և ինչպէս ինձ կրկին բռնեցին։

Այդ բոլորը լսելով, նա մօտեցաւ, և սաստիկ ձայնով ինձ ասաց. «Լսիր, ապիտակ, հէն ժամանակը այդ երկիրը «մեզ էր պատկանում, գետերը, լեռները, բոլորը մերն էին «մենք հարուստ էինք և երջանիկ, Երբոր դուք եկաք՝ «մենք ձեզ ընկերասիրութեամբ ընդունեցինք, բայց դուք, «անշնորհակալներ, մեզ հետ խիստ վարուեցիք։

«Ձը նայեցեալ բոլոր նեղութիւններին համբերութեամբ

« տանելուն, ես ապիտակների հետ ընկերաբար էի բնա-
« կուում, նրանց սիրումէի և ծառայում, մինչև որ մի
« ապիտակ չը բարկացաւ և չը հրաձգութիւն արաւ իմ
« վերայ, ինչպէս մի վայրենի գազանի վերայ։

« Այդ ժամանակից դէպը ես ձեզ ասում եմ — էլ յոյս
« չը դնես զթութեան, դա անպատճառ պէտք է մեռնես։
— Սրա՛ ինչպէս որ կամենաս, ես ասացի, — թէ որ
Աստուած ինձ վիճակել է մեռնել, թող այդպէս լինի
Այստամենայնիւ իմ հայրը միշտ վայրենիների բարեկամ.
էր և մինչև անգամ էլ մեկ անգամ մի Հնդկացւոյ կեանքը
ազատեց։ Ես ինքս էլ ո՛չ մի ժամանակ ձեզ չեմ վնասել,
բայց դուք այժմ կամենում էք ինձ կեանքից զրկել։ Եթէ
որ ձեզ ախորժալի է իմ արիւնս թափել, այն ժամանակը
ինձ ազատեցէք, մեռնելուց յետոյ ես կերթամ Մեծ
Աստուծոյ մօտ և նրան կասեմ. իմ հայրս Հնդկացիներին
շատ լաւութիւն արաւ, բայց նրանք ինձ ազատեցին,

— « Քո հայրը ո՞րտեղ էր բնակվում, հարցրեց գլը-
« խաւորը։ — Բօստոնումը, ես պատասխանեցի։ « Ո՞ր
« վայրենու կեանքը նա ազատեց։ « — Նրան Ռամպում
էին տում, ես ասացի։ « Այդ ճշմարիտ է, ես իսկապէս
« քեզ ճանաչումեմ, դու երեխայ էիր, որ իմ մօտ հիւր
« էլար և քո հայրն էլ իմ կեանքս ազատեց հենց բօս-
« տոնումը։

« Եղբայրներ։ նա յետոյ ասաց, յետ դառնալով դէպ

ի Հնդկացիները։ «Մէկ անգամ ես զօրեղ Ջուր — ապիտակ
«մարդկերանց արագ խմեցի և սկսեցի քուչաներումը բոլորի
«հետ կռուիլ, այն նուաստին, որին ես խփեցի, բարկա-
«ցած իրան ընկերներին կանչեց, և սկսեցին ինձ ծեծել,
«յանկարծ մի անծանօթ մարդ եկաւ և ինձ ազատեց։
«Ահա՛ նորա որդին, — մի՞թէ մենք տրան կըսպանե՞նք»։

Հնդկացիները պատասխանի փոխանակ ինձ բաց թողին,
«բայց Ուամպումը ինձ ասաց. Յետ դարձիր տուն և ասա՛,
»թէ Հնդկացիները երբէք չեն մառանում իրանց ցոյց տը-
«ուած ծառայութիւնը, և թէ որդիքներին վարումեն ի-
«րանց հայրերի տրած լաւութեան փոխարէնը։ Մենք ցան-
«այնումենք միայն չարերի մահը, բայց ո՛չ բարիների։

Այս խօսքերից յետոյ, նոր ինձ մի հրացան և եղջերուի
չորացրած միս տուին, ասելով, թէ միշտ դեռի երը-
կայնութեամբը գնալով, երեքօրից յետոյ ես ամերիկացւոց
բանակը կը հասնեմ։

Ի խոր պտէ իմ ազատողները գոհանալով, ես ճանա-
պարհ ընկայ և ողջ օրը համարեա՝ առանց հանգստանալու
գնումէի։ Գիշերը ես կրակ վառեցի և քնեցի։

Մեւս օրը կրկին շարունակեցի գնալ, յանկարծ դէպ՝ ի
իմ մօտ եկող մի դեղնած և զարհուրելի մարդ տեսայ։

Երևակայեցէք իմ զարմանալը, երբ ես տեսայ որ Չեն-
կինան է, որին սպանուած էի կարծում։

Նա ինձ պատմեց, թէ համարեա՝ մի օրու գիշերից աւելի

անդգայ վերընկնելով, վերկացաւ և գնաց իրաններին գտնելու, բայց տկարացել էր սովածութիւնից և վէրքից, այնպէս որ հազիւ թէ կենդանի էր։

Ռամպուտի ինձ տուաջ կերակուրը, և քունը իմ խեղճ ընկերի ոյժը բաւականի տեղը բերին, և միւսօրը մենք միասին ճանապարհ ընկանք, բայց շատ կամաց, որովհետև նա չէր կարող արագ գնալ։

Վերա երրորդ օրը մենք բանակը հասանք։

XV.

Դարձեալ պատերազմի մասին։

Անգղիացիները և Ամերիկացիները արդէն մի քանի անգամ քիչ թէ շատ պատերազմներում միմեանց պատահել էին, բայց բանակը հասանելուց յետոյ մի վրճռական պատերազմ ծագուեցաւ։

Երիս կողմից էլ շատ մարդիկ ջարդուեցին և վերջապէս անգղիացիների ժողովրդը. Բուրգոանը վեցհազար զինուորներով հարկադրուած էր անձնատուր լինել ամերիկացիների ժողովրդ Գէյտսին։

Այդ հարկաւոր դէպքը 1777 թուին պատահեց Եիւորկումը, Սարատոգի մօտ։

Դրանից յետոյ ես բանակը թողի և 1781 թուին բնա-

տանի մէջ բնակվում էր, կրկին ճանապարհ ընկայ դէպ՝ ի ծովը:

Այդ ժամանակը Լորդ Կորնվալիսը անգղիացւոց եօթը հազար զինուորներով գտնվում էր Վերժինեայի մէջ Իորկտաուն:

Ամերիկացւոց ժեներալ Վաշինգտոնն էլ հենց ճանապարհ ընկաւ դէպ՝ ի այդ տեղ, մտքումը դնելով անգղիացւոց ծովը ջնջել: Նա արագութեամբ նրանց վերայ ընկաւ և մի քանի օրից յետոյ Անգղիացիները հարկադրուած էին անձնատուր լինել:

Այդ էր յետինը և ամենահարկաւորը այդ պատերազմի: Անգղիացիները յաղթուելով, համաձայնուեցին Ամերիկայի միացեալ նահանգները անկախ ճանաչել, որոնք այն ժամանակից յետոյ սկսեցին օրըստօրէ աւելի ծաղկիլ:

Յայտնի բան է ես չեմ կարող այս կարճ զրոյցի մէջը ճիշտ նկարագրել Ամերիկացւոց բոլոր պատերազմները և փառաւոր մեծագործութիւնները: Նրանք իրանց հարստութիւնովը և առողջամտութիւնովը պարտական են անկախութեանը և երջանկութեանը:

XVI.

Վերջաբանութիւն:

Ամերիկայի միացեալ նահանգների կոչուած տէրութիւնը գտնվում է մեկ նախագահով և ընդհանուր ժողով-

քով և կամ կենդրեսով, որը լինում է Վաշինգտոն քաղաքումը օրէնքներ դնելու համար։

Միացեալ նահանգները 24 նահանգ կամ շտատ են բաժանվում, որոնցից ամեն մէկը իրան համար առանձին կառավարիչ ունի։ բայց նրանք բոլորը հպատակ են նախագահին և ժողովին։

Նահանգներից ամեն մէկը տարէնը մէկ անգամ իրանից մի քանի մարդ է ուղարկում ժողովքի մէջ, Վաշինգտոն քաղաքը։ Այն շինութիւնը, ուր նոքա ժողովվում են, կոչվում է Կապիտոլիա։

Այդ նահանգների անունները հետևեալներն են. Մէն, Նիւ—Հեմպշիր, Վերմոնտ, Մասսաչուսետ, Ռոդ—Էյլանդ և Կոնեկտիկուտ։ Նրանք բոլորը միասին կոչվում են Նոր Անգլիայ։

Նիւ—Իորկ, Նիւ—Ջերսէի, Պենսիլվանիայ, և Դելավար, Մէջին նահանգներ են կոչվում։

Վիրգինիայ, Հիւսիսային Կարոլինայ, Հարաւային Կարոլինայ, Գեորգիայ, Ալաբամայ, Մարիլանդ, և Միսիսիպի կոչվում են Հարաւային նահանգներ։

Օհիո, Տենեսի, Կենտուկկի, Ինդիանայ, Իլլինոիս, Լուիզիանայ, և Միսուրի կոչվում են Արևմտեան նահանգներ։

Ներկայ ժամանակներումս հարաւային և հիւսիսային նահանգների մէջը մի պատերազմը ծագուեցաւ։ Դրա պատճառն էր նեգրոներով առուտուր անելը ոչնչացնելու և ջին-

Ջելա Հարցը։ Հիսխային նահանգները ընդարձակեցին Հարևանների դեմ, որոնք առաջիններից բաժանվեցին և պաշտպանում են նեգրոներով առուտուր անելը, որը որ տանուներերորդ դարումը մի սարսափելի և ամօթալի բան է։

ԿԵՐՋ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ա. Публичная Библиотека
7/XI—1922
Ереван А. Мас. ная
Ս. ՍՅԱՍԱՆԻՀԱՅԻՆ ԱՆՎԱՆ

6986.

0003158

2013